ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Արավետ. դավաճանված հայրենիք

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**76**-րդ տարի) **Թիվ-8** (1666) *Օգոստոս 2022*

Բովանդակություն

Աղավնո. դավաճանված հայրենիք

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Յայտարարութիւն
ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը (էջ 1)

2- Առաջնորդող
Խաբկանքի և իրականության միջև (էջ 2-5)

3- Քաղաքական

Վարդան Հակոբյան
Ֆրանսիայի հրապարակը գլոբալիզմի հորձանուտում (էջ 6-9)

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայաստանը Հարավային Կովկասում: Սպառնալիքներ և հնարավորություններ (էջ 10-12)

4- Տարածաշրջանային

Արմեն Պետրոսյան
Թեհրանից Սոչի. տարածաշրջանային առաջնորդների տարբերվող (հակասական) օրակարգերը (էջ 13-17)

Լիանա Պետրոսյան
«Թեհրան 22». եռակողմ հանդիպման ամփոփում (էջ 18-19)

5- Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Քրդական գործոնը Իրան-Թուրքիա հարաբերություններում (էջ 20-22)

Սոնա Տոնիկյան
ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի այցը Մերձավոր Արևելք (էջ 23-27)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ միջանկյալ ընտրությունները և դրանց վրա ազդող հիմնական գործոնները (էջ 28-31)

6- Պատմության լուսարձակ

Արմեն Ց. Մարուքյան
Սևրի պայմանագիրը որպես Հայաստանի ու հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների վերականգնման միջազգային փաստաթուղթ (էջ 32-41)

7- Ընթերցումներ

Վրէժ-Արմէն
Խաշմանը՝ արժանաւոր կերպար մը եւս (էջ 42 - 44)

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը

Վերջին օրերին հերթական անգամ առերեսվեցինք դավադիր պայմանավորվածությունների նոր դրսևորումների: Տագնապի ու անընդունելի կորուստների ընթացքը շարունակվում է: Եվ կրկին հայրենադավ իշխանությունները իրենց բնորոշ դերի մեջ են՝ ստերով և կեղծ մտահոգություններով քողարկելով սեփական հանցավոր վարքագիծը: Ակնհայտ է՝ սկսվել է սողացող կապիտուլյացիայի նոր գործընթաց, գործընկերների հետ հարաբերություններում արձանագրվում են նոր սխալներ, և կրկին թշնամու պահանջների կատարումը ներկայացվելու է որպես հավանական նոր պատերազմի կանխարգելմանն ուղղված պարտադրված քայլ:

Հենց այս համատեքստում պետք է դիտարկել վերջին օրերին մեծ հնչեղություն ստացած՝ Արցախը Հայաստանին կապող ճանապարհային միջանցքի և դրա շուրջ հնարավոր զարգացումների հարցը: Այն իրոք ճակատագրական հարց է և բազմաթիվ բացահայտ ու թաքնված վտանգներ է պարունակում:

2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության կամայական մեկնաբանություններով փորձ է արվում բավարարում տալու ադրբեջանական ապօրինի պահանջներին:

Լինելով ահաբեկչական պետություն՝ հակաահաբեկչական պայքարի քողի տակ Ադրբեջանն ու իր «եղբայր» Թուրքիան շարունակում են իրենց հակահայ քաղաքականությունը: Ադրբեջանի կողմից բացահայտ ագրեսիայի, ուժի կիրառման սպառնալիքների, Արցախի Հանրապետության ապառազմականացման և Պաշտպանության բանակի կազմալուծման պահանջի պայմաններում Հայկական բանակի մարտունակության վերականգնման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չձեռնարկելը, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները Արցախից դուրս բերելը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայրենազրկման և նոր կապիտուլյացիայի գործընթաց:

Նույնքան վտանգավոր ու կործանարար հետևանքներ կարող են ունենալ ժողովրդի թիկունքում տեղի ունեցող մյուս՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, Ադրբեջանի հետ սահմանազատման-սահմանագծման գործընթացի, հաղորդակցությունների բացման, Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի կնքման հետ կապված գործընթացները:

Մշտապես ահազանգել ենք, որ այս իշխանությունները չեն սպասարկել և չեն սպասարկում հայկական շահերը, սրանց գոյությունը անխուսափելիորեն հանգեցնելու է նորանոր աղետների: Ցավոք, շատերը դեռ չեն անդրադառնում, որ այս վարչակարգը, «խաղաղության դարաշրջան» խոստանալով, բերելու է նոր պատերազմ, նոր կորուստներ, նոր զոհեր, նոր ավերածություններ, նոր նվաստացումներ:

Սեփական ուժերին ապավինելով, միասնական ջանքերի, ճիշտ, հետևողական քայլերի, բանիմաց ղեկավարման պարագայում այս դժվար իրավիճակում անգամ կարելի է լուծումներ գտնել ազգային-պետական շահերը պաշտպանելու համար: Դա միանգամայն հնարավոր է:

Կոչ ենք անում ազգային բոլոր ուժերին միավորելու իրենց ջանքերը ապազգային իշխանություններին հեռացնելու, հայ ժողովրդին ու մեր պետականությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու, նոր որակի իշխանություններ ձևավորելու և համահայկական կարողականությամբ ուժեղ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններ կառուցելու գործում: Այս փուլում համահայկական մակարդակով պայքարը ավելի քան անհրաժեշտ է այս իշխանությունների պատճառած ազգային կորուստներն ու վնասները նվազագույնի հասցնելու համար:

Դարձյալ դիմում ենք աշխարհասփյուռ հայությանը՝ չվհատվելու, չհիասթափվելու և չհուսահատվելու. մեր ազգային շահերի պաշտպանության համար մեր հանձնառությունը ամբողջական է, և հարատև պայքարով ի վերջո կհասնենք մեր համազգային նպատակներին:

9 օգոստոսի 2022 թ.

Խաբկանքի և իրականության միջև

Հայաստանում լրատվամիջոցներ կան, որոնք Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանավարման օրերից գրեթե ամեն օր հայտարարում են, թե Ռուսաստանը փլուզվում է, շուտով այդ երկիրը կդադարի գոյություն ունենալուց, առնվազն այն տեսքով, որ ունի հիմա: Այս քարոզին զուգահեռ ժամանակի ընթացքում Արևմուտքի ձեռքին խաղալիք դարձած Ելցինին փոխարինեց ռուսական մեծապետական ձգտումները մարմնավորող Պուտինը, և փոխվեց Ռուսաստանը: Պուտինյան իշխանությունն արմատախիլ արեց Չեչնիայի ու առհասարակ Հարավային Կովկասի անջատողական ձգտումներն ու դրա համար պայքարողներին: Այսօր արդեն Չեչնիայի ղեկավարը Պուտինին ամենանվիրված թիմակիցներից է, և նրա գլխավորած չեչենական ուժերը Ուկրաինայում կռվում են հանուն Ռուսաստանի հաղթանակի:

Ելցինը մի օր հայտարարել էր, որ երկրի յուրաքանչյուր տարածաշրջանային վարչական միավոր թող վերցնի այնքան ինքնուրույնություն, որքան կարող է, և գործընթացը հասել էր այնտեղ, որ ազգային բնույթ ունեցող վարչական միավորումները սեփական սահմանադրություններ էին գրում: Պուտինը ցարական ժամանակների գեներալ-նահանգապետությունների օրինակով բոլոր այդ տարածաշրջանների գլխին զինվորական պատասխանատուների նշանակեց, որոնց վերահսկողությամբ կենտրոնաձիգ իշխանությունը կրկին ամրապնդվեց: Քրեածին, և օլիգարխիկ բիզնեսի հավակնոտ ներկայացուցիչները, որոնք անվերահսկելիորեն թալանում էին հսկա երկրի արտադրական ու բնական հարստությունները և պետությանը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ուղեգիծ էին թելադրում, կամ հայտնվեցին բանտերում, կամ փախան երկրից, կամ հավատարիմ շնիկների պես տեղավորվեցին նոր իշխանության ոտքերի արանքում: Երկրի քաղաքական համակարգը բզկտող արևմտամետ ընդդիմությունը խաղաղ ու աննկատ անհետացավ ասպարեզից, ինչպես ջուրը՝ ավազի մեջ: Պետականամետ ընդդիմադիր հիմնական ուժերը մաս կազմեցին պետական համակարգին և հիմնականում դարձան իշխող ուժի գործակիցը նրա վարած քաղաքականության հարցում: Ելցինյան ժամանակներում ռուս հրամանատարները չեչեններին զենք էին վաճառում, որով վերջիններս սպանում էին ռուս զինվորներին, գեներալները հեռուստատեսային էկրանների առաջ ողբում էին բանակի կործանումը և, ի դեպ, ռուսական Ղրիմի՝ որպես ռազմավարական դարավոր ֆորպոստի քայքայումն ու դանդաղ թաթարաթուրքացումը: Քսան տարվա ընթացքում Պուտինը քայքայված բանակը վերածեց ամենահզոր ռազմական տեխնիկայով հագեցած՝ աշխարհի երևի թե ամենաուժեղ բանակին, իսկ թե ինչ պատահեց Ղրիմի հետ, հայտնի է բոլորին: Խորհրդային անծայրածիր կայսրությունը զբաղված էր բնական պաշարների թալանով և վաճառքով, արտերկրից գնում էր ամեն ինչ, այդ թվում՝ ցորեն, ընդ որում՝ այն երկրներից, որոնց տարածքներից մեծ էին իր հացահատիկի դաշտերը,

իսկ թե ներկայումս, առանց ռուսական բնական և այլ պաշարների, ինչպիսի տնտեսական ճգնաժամում է հայտնվել աշխարհը, նույնպես հայտնի է: Ռուսական բանակն այսօր սահմանափակ ռազմական գործողություններով կոտրել է ուկրաինական բանակի ողնաշարը և դանդաղ մաշում է նրան ու Արևմուտքից անընդհատ հոսող ռազմական հսկայական տեխնիկան... Իսկ Հայաստանում Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության ծնած քարոզչամեքենան շարունակում է փչացած սկավառակի պես կրկնել Ռուսաստանի կործանման հանգերգը՝ հիմա նաև «ավետելով» ռուսների մոտալուտ պարտությունը Ուկրաինայի հետ պատերազմում:

Կարելի է մտածել, թե սա քաղաքական դիրքորոշում է, որը նույնպես գոյության իրավունք ունի: Իրականում, սակայն, այս ապատեղեկատվության խորքում քարոզչա-քաղաքական հիմնայուներից մեկն է, որի դերն էր տարիների ընթացքում հայ հասարակությանը ներշնչելը, թե անհրաժեշտ է հրաժարվել Ռուսաստանին տարածաշրջանային հիմնական գործոն դիտարկելուց և երկրի քաղաքական արևելումը շուռ տալ դեպի Արևմուտք: Իհարկե, քանի դեռ հասարակությունը անհրաժեշտ չափով նախապատրաստված չէր, պետք է թաքցվեր այն իրողությունը, որ Արևմուտքին տարածաշրջանում ներկայացնում է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան: Հենց Թուրքիան էլ պետք է ապահովեր Ռուսաստանի դուրսմղումը Հարավային Կովկասից և գրավեր դատարկված տեղը: Թուրքիան է, որ պետք է դուրս բերի Ադրբեջանը Ռուսաստանի ազդեցությունից, բացի Կենտրոնական Ասիայի դուռը և ապահովի ՆԱՏՕ-ի թափանցումը Ռուսաստանի հարավային սահմանների մոտ: Դաշնակիցների շահերը համընկնում են գլխավորում, իսկ թե այդ առաջխաղացման մեջ կողմերից յուրաքանչյուրը ինչ ռազմավարական շահեր է հետապնդում, այլ հարց է:

Որ սա նոր ի հայտ եկած նախագիծ չէ, փաստում է այն, որ դեռևս 1918 թ. աշնանը Երևանում Խալիլ փաշան առաջարկել էր Արամ Մանուկյանին Մեղրիով ճանապարհ տալ Թուրքիային՝ փոխարենը անելով փոխզիջումների գայթակղիչ առաջարկներ: Այս կետի վրա Արամ Մանուկյանը ավելորդ էր համարել բանակցությունների շարունակումը: Այլ տարածքների

դիմաց թուրքերին Մեղրիով ճանապարհ տալու առաջարկը կրկնեց ամերիկացի վերլուծաբան Պոլ Գոբլը արդեն 1990-ականների արցախա-ադրբեջանական պատերազմի օրերին: Լևոն Տեր-Պետրոսյանը սկսեց բանակցություններ թուրքերի հետ՝ որպես նախապայման խոստանալով զիջել ազատագրված տարածքները և Հայաստանում հաղթող դարձնել Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու գաղափարը, սակայն այն ժամանակ հայ ժողովուրդն ազգային վերելք էր ապրում և տարածքների փոխարեն հրաժարվեց Լևոն Տեր-Պետրոսյանից: Հաջորդ երկու նախագահները գտնվեցին հայ-թուրքական հաշտության բանակցություններ վարելու ամերիկացիների ճնշման տակ: Իհարկե, մեծ հանելուկ չէ այն, որ հայ-թուրքական հաշտությունը պետք է հանգեցներ սահմանների բացմանը, և այդ դեպքում Հայաստանի տարածքում ռուսական զորքի առկայությունը կդառնար ավելորդ: Այս ընթացքում 42.000 քառակուսի կիլոմետրի վրա իր անվտանգությունը լիարժեքորեն ապահովող հայկական կողմը ձևավորեց հարգանք ներշնչող ռազմական ուժ, Հայաստանը ճկունորեն փոխլրացնող քաղաքականություն էր վարում ՀԱՊԿ-ի և որոշ չափով ՆԱՏՕ-ի հետ, մնալով Անկախ Պետությունների Համագործակցության անդամ՝ փոխգործակցության բազմակողմ հարաբերություններ էր հաստատել Եվրոպայի, ԱՄՆ-ի, Միջին ու Մերձավոր Արևելքի, այլ տարածաշրջանների ու երկրների հետ: Այս պայմաններում հայոց դիվանագիտությունը, ձեռք բերելով բավականին անկախություն, կարողանում էր հայկական գործոնի անունից համաձայնել կամ չհամաձայնել տարբեր առաջարկների հետ և լինել շահեկան վիճակում Ադրբեջանի հետ շարունակվող բանակցություններում: Տեսնելով, որ չի հաջողվում Հայաստանին պարտվողական օրակարգեր պարտադրել, այդ հարցով շահագրգիռ ուժերը որոշեցին միասնականության ու ազգային նպատակների գաղափարների հիման վրա ձևավորված հայկական գործոնը քայքայել ներսից:

1988 թ. գարնանը Ազատության հրապարակում իշխող «Ղարաբաղ» կոմիտեում տեղի ունեցած ներքին հեղաշրջումից հետո ժողովրդական շարժման առաջնորդների ասելիքի մեջ սկսեցին ավելանալ հակախորհրդային, հակակրեմլյան կարգախոսները: Նույն թվականի ամռանը հեղափոխության հրապարակում հայտնված արևմտյան առաջին լրագրողներին խանդավառ ժողովուրդն ընդունեց որպես բացված պատուհանից ներս խուժած ազատության ծիծեռնակների, իսկ հակակրեմլյան կարգախոսների կողքին սկսեց հնչել այն քարոզը, թե այսօրվա Թուրքիան նախկինը չէ, որ ցեղասպանությունն ու ավանդական թշնամությունը կաղապարված մտայնությունների հետևանք են, և Թուրքիան Հայաստանի համար պատուհան է դեպի Եվրոպա:

Մենք մեր իշխանությունների հակառուսականության համար պետք է թանկ վճարեինք հատկապես պատերազմի ժամանակ, երբ կորցրինք Գետաշենն ու Մարտունաշենը, Շահումյանը, Մարտակերտի, Հադրութի մի շարք գյուղեր և անգամ հարվածներ ստացանք Հայաստանի տարածքում:

Լևոն Տեր-Պետրոսյանը, որը ստանձնել էր Ղարաբաղի ազատագրական շարժման առաջնորդի դերը, կամաց-կամաց վերածվում էր այդ շարժման հակառակորդի. նա փորձում էր կանխել հայկական զորքերի առաջխաղացումը, հանձնել գրավված տարածքներ, (ինչը կոշտ հակադրություն էր ստեղծել Արցախի իշխանությունների հետ) ի դեպ, ինչի մասին իր հուշերում գրել է նաև Իրանի՝ այդ օրերի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին[1]:

Ամեն գնով խաղաղության հասնելու գաղափարը Լևոն Տեր-Պետրոսյանը մեկ անգամ էլ առաջադրեց 2008 թ., երբ երկար լռությունից հետո նման պլատֆորմով մասնակցեց նախագահական ընտրապայքարի: Այս անգամ էլ նա արժանացավ ժողովրդի բացարձակ մեծամասնության մերժմանը: Ի դեպ, այդ ընտրություններում Նիկոլ Փաշինյանը Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամ էր:

Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած ուժը, ժողովրդական շարժման միջոցով 1990 թ. գալով իշխանության, շատ չանցած ձեռնարկեց 19-20-րդ դարերի ազգային-ազատագրական պայքարի գնահատականի վերանայման գործընթաց՝ մասնավորապես ժխտելով այդ պայքարի նշանակությունը, 1914-1918 թթ. կամավորական շարժումը՝ ցեղասպանությունը ներկայացնելով որպես ինքնապաշտպանական պայքարի հետևանք: Շուռ տալով պատմական փաստերն ու տրամաբանությունը՝ ստացվում էր նաև, որ, ազգային-ազատագրական պայքարի ուժին վարկաբեկելով, ըստ էության, արդարացվում էր ցեղասպանության կազմակերպիչ Թուրքիան: Խորքում իշխող ուժի գլխավոր նպատակը ազգային ազատագրական պայքարի գաղափարը մերժելն էր առհասարակ, իսկ մասնավորապես՝ ի դեմս Արցախյան շարժման: Պատահական չէ, որ երկրի ղեկավարի և հեղափոխական շարժման առաջնորդի բերանով կեղծ արժեքներ էին հռչակվում ազգային գաղափարախոսությունն ու պատմությունը:

2018 թ. գալով իշխանության՝ Լևոն Տեր-Պետրոսյանի երեկվա սաներն ու զինակիցները հայտարարեցին, որ դպրոցական ծրագրերից պետք է դուրս թողնվի ռազմահայրենասիրական դաստիարակությունը, բուհական ծրագրերում պետք է կրճատվեն հայագիտական առարկաների ժամերը, պետք է արմատապես վերանայվեն դպրոցների ու համալսարանների պատմության և գրականության ծրագրերը, իսկ, ըստ էության, կրթական չափորոշիչների վերանայումն արդեն իրականացվում էր թուրքերի հետ:

Շարադրելով պրակտիկ քաղաքականության իրենց պատկերացումները՝ փաշինյանական թիմի ներկայացուցիչները ոչ հրապարակայնորեն խոսել են այն մասին, թե Արցախն այն խնդիրն է, որի միջոցով Մոսկվան Հայաստանին ու Ադրբեջանին պահում է իրենից կախման մեջ, և եթե ազատվենք այդ հարցից, Մոսկվան այլևս կկորցնի ազդեցության լծակները:

Այդ դեպքում Հայաստանը կկարողանա ազատ լինել իր արտաքին կողմնորոշումների հարցում: Կարելի է հիշել վարչապետի կնոջ այն միտքը, որ զոհերը եղել են ոչ մի բանի համար:

Երբ 2018 թ. ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը Հայաստանում հայտարարեց, որ պետք է հրաժարվել պատմական կաղապարներից և փոխել արտաքին կողմնորոշումները, մենք չմտածեցինք, թե սա շարունակությունն է Խալիլ փաշայի, Պոլ Գոբլի առաջարկների ու հայ-թուրքական հաշտության ծրագրի և, ըստ էության, այս անգամ տվյալ ծրագրի իրականացման ցուցումն արդեն իսկ իրականացվում է:

Իրար կողք դնենք 2018 թ. իշխանափոխությունից հետո նոր վարչակարգի ասածներն ու արածները, դրանց կողքին դնենք 2020 թ. ցեղասպանական պատերազմում կրած պարտությունը և այդ պատերազմից օրեր անց արդեն շրջանառության մեջ դրված՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հաղորդակցական ուղիները բացելու, առևտուր անելու, խաղաղության ու բարեկամության դարաշրջան սկսելու կոչերը, հետպատերազմյան շարունակվող զիջումները, որոնք չի բացատրվում, թե այս անգամ ով է գցել «խեղճ հարիֆ» վարչապետի գրպանը և առավել քան ակնառու է դառնում իրադարձությունների ողջ շղթայի տրամաբանական կապը: Կուրորեն մտնելով իր գիտելիքը, փորձն ու կարողությունը բազմապատիկ գերազանցող արկածախնդրական խաղի մեջ՝ երկիրը կառավարելու հմտությունից զուրկ ղեկավարությունը ոչ միայն պետք է հայտնվեր պետության կրած դաժան կորուստների փաստի առջև, այլև ստիպված էր լինելու խուսանավել քաղաքական բևեռների, ուժերի և անձերի միջև: Խայտառակ պարտության հետևանքները հաղթահարելու, ազգը վերահամախմբելու, բանակը ոտքի հանելու, զինելու և մարտունակությունը վերականգնելու ջանքերի բացակայությունը, քաղաքական պատեհապաշտությունն ու հարմարվողականությունը, ներազգային անհանդուրժողության պայմաններում արտաքին ուժերի ու մասնավորապես թուրք-ադրբեջանական տանդեմի առջև բացարձակ անձնատվությունը Հայաստանը դուրս են բերել քաղաքական սուբյեկտի կարգավիճակից, և նրա ճակատագիրը որոշվում է առանց իր մասնակցության: Ավելին՝ տարածաշրջանում ուժերի, տարածքների և ազդեցության գոտիների վերաբաշխումը տեղի է ունենում Հայաստանի հաշվին:

Այն դեպքում, երբ ադրբեջանա-թուրքական տանդեմը Հայաստանի նկատմամբ համադրված, ձևով վարում է նախաձեռնողական, բազմակողմ և խիստ ագրեսիվ քաղաքականություն, Հայաստանի պատեհապաշտ ու հակազգային իշխանությունը մի կողմից շարունակում է արևմտյան օրակարգերի սպասարկումը, մասնավորապես և հակառուսական մթնոլորտի թեժացումը երկրի ներսում, մյուս կողմից փորձում է դրական գործակցություն խաղալ ռուսների հետ՝ քանի որ բոլորից լավ հենց ինքը գիտի, թե ինչ բազմակողմանի կախվածության մեջ է Հայաստանի և Արցախի ճակատագիրը ռուսական գործոնից:

Այսօր միայն անմեղսունակ նիկոլապաշտը կարող է հավատալ, թե ՀՀ վարչապետն ունակ է տարածաշրջանում խաղաղության օրակարգ թելադրել Արցախ-Հայաստանը մաս-մաս յուրացնելու աճապարանքով գործող ադրբեջանցիներին ու թուրքերին: Իրականում այդ խաղաղության մասին հայտարարությունների խորքում թշնամի հարևաններին ուղղված ուղերձ է, զիջումների պատրաստակամության, ազգային շահերի պաշտպանությունից հրաժարվելու մասին, ինչն էլ ազգային ինքնագիտակցության ու ոգու անկման մեջ գտնվող հայության համար նշանակում է, թե հայրենիքն ամենամեծ զիջումների տանելու, պետականության կորստի գնով իշխանությունը խուսափելու է երկրի հզորացումից և դիմադրության կազմակերպումից: Իհարկե, հենց մեր օրերի իրադարձությունները փաստում են 2020-ից հետո ընդդիմության անդադար հնչեցրած ահազանգն այն մասին, որ դիմադրության գաղափարից հրաժարումն ու թշնամու հետ ծնկած խոսելն է, որ բազմապատիկ մեծացնում է նորանոր պատերազմների հավանականությունը: Ակնհայտ է վարչապետ Փաշինյանի սարսափը ադրբեջանցիներից ու թուրքերից, որոնց 20 թվականի վայրագությունների մասին նա ոչ միայն թույլ չտվեց պետականորեն բարձրաձայնել միջազգային բեմերում, այլև այսօր չի համարձակվում արձագանքել, երբ հակառակորդն իր պարտավորությունը չկատարելով նորանոր պահանջներ է ներկայացնում հայկական կողմին՝ նվաստացնում է երկիրն էլ, իր ղեկավարներին էլ: Այդ սարսափի մեկ դրսևորումն էլ սույն թվականի օգոստոսի 3-ին, ադրբեջանցիների նախաձեռնած նոր լայնածավալ սադրանքի օրը, անշուշտ, Ալիևի խիստ պահանջով, հապճեպ, մեկ գիշերվա մեջ, բեռնատարներով հայաստանցի զինվորներին Արցախից Հայաստան տեղափոխելն էր: Այդ սարսափն այնքան մեծ է, որ Երկրի ղեկավարը Պաշտպանության բանակի տոնին անգամ չհամարձակվեց շնորհավորել իր գլխավորած զինված ուժերին և արգելեց, որ ավանդույթը պահպանելով դա անեն համապատասխան մյուս բարձրագույն պաշտոնյաները:

Նիկոլ Փաշինյանը, շարունակելով ծառայել տարածաշրջանի գործընթացների տնօրինումը թուրք-արևմտյան ուժերին հանձնելու ծրագրին, միաժամանակ գավառացու ճարպկությամբ փորձում է ձև անել, թե մնում է ռուսական միջնորդության կողմնակիցը:

2020 թվականի հոկտեմբերի 19-ին Պուտինը Փաշինյանին հայտնեց, որ համոզել է Ալիևին, և Փաշինյանի համաձայնության դեպքում պատերազմն անմիջապես կդադարեցվի: Դա նշանակում էր, որ այդ օրվա դրությամբ մենք չէինք կորցնելու Շուշին ու Հադրութը, ինչպես և չէինք ունենալու ավելի քան 2000 նոր զոհեր: Փաշինյանը մերժեց առաջարկը, և այդ խոսակցությունը գաղտնի պահեց բոլորից՝ այդ թվում այն պաշտոնյաներից, ովքեր ի պաշտոնե պետք է իրազեկվեին այդ մասին: Այս շրջանից արդեն Փաշինյանը նաև դադարեցրեց շփումները ինչպես

երկրի ներսի, այնպես էլ արտաքին գործակիցների հետ: Ռուսները, հավանաբար, ենթադրում էին, թե Նիկոլ Փաշինյանը ձգտում էր պահպանել ավելին: Մյուս կողմից, պարտության ծրագիրը չտապալելու համար Փաշինյանն ու իր մանկլավիկները, իրականությունը ներկայացնելով գլխիվայր, ժողովրդին համոզում էին, թե հաղթում ենք:

Պատերազմից հետո բոլորը, այդ թվում՝ Ռուսաստանն ու Իրանը, հաշվի նստեցին այն նոր իրողության հետ, որը ձևավորվել էր տարածաշրջանում: Թուրքիան և Թուրքիայի թելադրանքով Ադրբեջանը ակտիվ քաղաքականությամբ և բազմակողմանի ճնշումներով փորձում են հայկական թույլ, վախեցած կողմից ավելին ու ավելին ստանալ՝ դրանով ավելի ու ավելի շատ նահանջ պարտադրելով Ռուսաստանին և, մասնավորապես, սահմանափակելով նրա խաղաղապահական գործունեությունը:

Ռուսաստանի դիմաց մի կողմից՝ թույլ ու անվստահելի, հակառուսական, պրոարևմտյան-պրոթուրքական կուրս որդեգրած Հայաստանն է, և մյուս կողմից՝ ամրապնդված ու հսկայական դիրքային առավելություն ձեռք բերած Ադրբեջանն է և Թուրքիան, ում հետ, հատկապես, Ուկրաինայի դեմ պատերազմի ճակատագրական ժամանակահատվածում Ռուսաստանն ունի փոխադարձ կենսական շահեր:

Այս պայմաններում Ռուսաստանը ձգտում է կանխել անդրկովկասյան հակամարտության սրումը և վերջնական լուծումները թողնել հետպատերազմյան, իր համար ամուր ու կայուն շրջանին: Ադրբեջանցիներն ու թուրքերը, ռուսական դիրքերի ամրապնդման հավանականությունը նկատի ունենալով, ձգտում են Հայաստանից կորզել առավելագույնը՝ օգտվելով Ռուսաստանի ոչ դյուրին վիճակից:

Մեծ խաղի մեջ, որի խաղասեղանին ոչ միայն Սիրիան է, Ուկրաինան ու Անդրկովկասը, այլև աշխարհի վաղվա ճարտարապետության հետ կապված խնդիրներն ու վերադասավորումները, շատ հավանական է, որ Ռուսաստանը Արցախի ու Հայաստանի հաշվին կարող է գնալ մեզ համար ճակատագրական՝ իր համար դիրքային որոշակի զիջումների, ինչ որ տեղի ունեցավ 1920-1921 թվականներին:

Ռուսաստանն այսօր հավակնում է որոշիչ խոսք ասել նոր աշխարհակարգի հարցում և դրա մեջ լուծել նաև իր ազդեցությամբ ձևավորվելիք նոր որակի միությունների ու դաշինքների հարցերը:

Եվ այս աստեղային պահին, երբ աշխարհը հիմնական վերաձևումների մեջ է, հայության անկումի ու բարոյազրկության հանճարը ավերեց մեր բոլոր առավելությունները, դավաճանեց առկա ու պոտենցիալ դաշնակիցներին և երկիրը տարավ դեպի ցեղասպան գիշատչի երախը:

Ոչնչացնելով հայոց երկրի ուժն ու քաղաքական գործոնի կարգավիճակը՝ ազգադավ իշխանությունն ունի մեկ հոգս՝ ինչպես անել, որ արտաքին ուժերը շահագրգռված մնան իր իշխանության երկարաձգմամբ և նրանց լուռ համաձայնությամբ շարունակի ներքին ճնշումներն ու բռնությունները, ինչպես և իր ու թիմակիցների անվերահսկելի թալանը: Ավելորդ է ասել, որ նման իշխանության համար երկրի վարկը, նրա ճակատագիրն ու ներքին կայունությունը ստորադասվում են այն հեռանկարի առջև, որ նրանց սպասվում է, եթե զրկվեն իշխանությունից: Ազգային ուժերի համար ակնհայտ է, որ հայրենիքի փրկության խնդիրը պայմանավորված է իշխանության փոփոխությամբ, ինչպես ակնհայտ է, որ արտաքին ուժերը գործնականորեն դեմ են խամաճիկ կամակատարների փոխարինմանը ազգային շահերին հետամուտ ուժերով: Եվ այս ամենն այն պայմաններում, երբ անցնող երեսուն տարիների ընթացքում հայ ժողովրդի մոտ տեղի է ունեցել հոգեմտավոր, ազգային-բարոյական արժեքների այնպիսի խեղում, որ նա կորցրել է վտանգի զգացողությունը դեռ երեկ իր զավակներին կոտորած, Արցախն ու Հայաստանը հոշոտել փորձող թուրքի նկատմամբ:

Հոգևոր հոր և քաղաքական մսուրի դասերը սերտած Փաշինյանը դեռ որոշ ժամանակահատված կարողանալու է յուրայիններին առնելու, մրցակիցներին հալածելու ու բռնությունների ենթարկելու ճանապարհով երկարաձգել իր դավաճանական կառավարումը:

Եթե մենք պետք է ապավինենք ժամանակին, ապա ցանկալի ժամանակը կարող է գալ այն պահին, երբ այլևս միևնույն կլինի, թե Հայաստանն ով է ղեկավարում: Ազգային փրկության գործի հավակնորդները պետք է գտնեն նոր և թարմ լուծումներ: Նոր ու թարմ լուծումները, որոնք կմիավորեն ժողովրդին ու երկրի անկումը կկասեցնեն, ի հայտ կբերեն այն գործիչներին, ովքեր կկարողանան անդունդից դուրս բերել և դեպի լուսավոր ապագա առաջնորդել ազգին: ■

Հղում

1. Տես «Դրօշակ», Եր., 2022, թիվ 2, էջ 8-11:

Ֆրանսիայի հրապարակը գլոբալիզմի հորձանուտում

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Գլոբալ-լիբերալիստական հեղափոխությունը շարունակում է իր ընթացքը, ընդգրկում նորանոր տարածաշրջաններ ու պետություններ: Նոր՝ միաբևեռ աշխարհակարգ հաստատելու նպատակով քանդում է գործող դրվածքը, միջպետական հարաբերությունները կարգավորող միջազգային օրենքները և դրանց փոխարեն պարտադրում իր խաղի կանոնները: Կամայականորեն բաժանում է պետությունները, դրանց ղեկավարներին՝ առաջադեմների և հետադեմների, ժողովրդավարների և բռնապետների: Հիբրիդային և պրոքսի պատերազմներով այն աստիճան սրվել է դիմակայությունը խոշոր տերությունների միջև, որ աշխարհը կանգնել է միջուկային բախման եզրին՝ հաշվի չառնելով ոչ մեկի ազգային և պետական շահերը:

Այսպիսի մասշտաբային ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ են գործին հավատարիմ կադրեր, գաղափարական համակիրներ բոլոր այն երկրներում, որոնք ներքաշված են լիբերալ հեղափոխության մեջ: Այդպիսիք անհրաժեշտ են նաև նորանոր երկրներ այդ հեղափոխության մեջ ներքաշելու համար: Այդպիսի կադրեր բուծելու համար գլոբալիստները հսկայական գումարներ են ծախսել, դպրոցներ հիմնել, ընտրել ու գնել են բազմաթիվ մարդկանց գրեթե բոլոր երկրներում, հորդորել նրանց հրաժարվելու լիբերալիզմի տեսանկյունից հնացած հոգևոր արժեհամակարգից, բարոյական-կրոնական նախապաշարմունքներից, քաղաքակրթական ու պատմական կողմնորոշումներից, ազգային ու ընտանեկան ավանդներից և հաշվի չառնել մարդկանց միջև բնական սեռական տարբերությունները՝ այդպիսով նպատակ ունենալով ձևավորելու նոր տիպի մարդ՝ զերծ վերը նշված «նախապաշարումներից և մոլորություններից», չկաշկանդված ամոթի, խղճի, սիրո, հավատարմության, ընկերասիրության, կարեկցանքի և այլ զգացումներով, որի երջանկությունը իր գաստրոնոմիկ և սեռական բնազդների ազատ բավարարումն է միայն: Եվ ահա վերջին տարիներին բոլոր «առաջադեմ պետություններում»՝ ԱՄՆ-ից մինչև Ճապոնիա, Բրիտանիայից մինչև Հայաստան, բարձրագույն պետական-քաղաքական պաշտոնները զբաղեցնում են լիբերալ-գլոբալիստները: Իսկ «դեռ չառաջադիմած պետություններում» դրանց տեղավորում են ընդդիմության դաշտում՝ հրահանգելով սպասել, մինչև որ գունավոր հեղափոխությունը կթակի իրենց երկրների դռները:

Այժմ մի կողմ թողնենք գլոբալ գործընթացները՝ իհարկե պահելով դրանք մեր մտքում, և մեր հայացքը կենտրոնացնենք Երևանի Ֆրանսիայի հրապարակի վրա:

Արդեն չորրորդ ամիսն է, ինչ խորհրդարանական

ընդդիմության առաջնորդությամբ այստեղ է հավաքվում 30-50 հազար մարդ և իր զայրույթն ու բողոքն արտահայտում իշխանությունների դեմ: Ցուցարարները հանդես են գալիս երկու հիմնական կարգախոսներով՝ «Առանց Նիկոլ Հայաստան» և «Առանց թուրքի Հայաստան»: Չնայած այս ցույցերի երկար տևողությանը՝ չի կարելի ասել, թե պետության քաղաքական կյանքում ինչ-որ բան է փոխվել կամ փոխվում է: Պարտված ու կապիտուլյացիա ստորագրած ռեժիմը շարունակում է խոնարհաբար կատարել իր ստանձնած պարտավորությունները և բնականաբար ունակ չէ ու մտադիր էլ չէ դուրս գալու այդ շրջանակներից: Ունակ չէ սեփական արտաքին քաղաքականությունը վարելու, միջազգային հարաբերություններում կարող է հանդես գալ միայն լսողի դերում: Եվ այդպես բոլոր բնագավառներում: Ուրեմն ընդդիմությունը ինչը քննարկի, ինչը դատապարտի: Քննադատության առարկա չկա: Այստեղից էլ՝ չափազանց վերացական, քաղաքական կոնկրետությունից ու բովանդակությունից զուրկ երկու կարգախոսները: Իսկ կոնկրետ և խորքային հարցերի առնչությամբ իշխանությունների հասցեին քննադատությունը հանգում է 2020 թ. նոյեմբերի եռակողմ հայտարարության քննադատությանը: Իսկ ինչ է, չի՞ կարելի քննադատել, չի՞ կարելի պահանջել վերանայել այն: Չի՞ կարելի քննադատել իշխանություններին, որոնք ստորագրել են այդ փաստաթուղթը: Ինչո՞ւ դիվանագիտական, քաղաքական հայտարարություններով և այլ միջոցներով դա կարող են անել Իրանը, Արևմուտքը, Ռուսաստանը, այդ և այլ երկրների բազմաթիվ քաղաքական գործիչներ՝ իհարկե ելնելով իրենց երկրների շահերից: Հուսանք, որ սեպտեմբերից մեր քաղաքական ընդդիմությունը կկարողանա ներկայացնել քաղաքական կոնկրետ դիրքորոշումներ և գործողությունների ծրագիր, որոնք կփոխեն իրավիճակը: Այլապես հասարակության մեջ միայն հարցեր ու դրանց տարատեսակ պատասխաններն

են կուտակվում, և իրադարձություններին իրարամերժ գնահատականներ են տրվում: Եթե մի կողմ թողնենք տափակ ու հիմար հարցերը և դրանք բարձրացնողների նույնքան տափակ պատասխաններն ու գնահատականները և ընդհանրացնենք, էական է մնում երեք հարց՝ ինչո՞ւ չի ավելանում մասնակիցների թիվը, ինչ խնդիրներ են դրել և ինչպե՞ս են ուզում հասնել դրանց լուծմանը շարժման առաջնորդները, ինչո՞ւ այս գործընթացին մասնակից չեն Արցախում:

Երկրի վիճակով մտահոգ մարդկանց կողմից այս հարցերը հնչում են որպես հանդիմանություն նրանց հասցեին, ովքեր անտարբեր են երկրի ապագայի նկատմամբ: Հանդիմանություն է նաև քաղաքական ուժերի ու գործիչների հասցեին, որոնց գործողություններում, ըստ նրանց, չկա վճռականություն:

Իրադարձություններին կողքից հետևող քաղքենիությունը ընդդիմության այս շարժումը համարում է պայքար իշխանության համար կամ, ինչպես իրենք են ասում, աթոռակռիվ:

Իշխանությունների պատասխանը միանշանակ է. ժողովրդի մեծամասնությունն ընտրել է Նիկոլին և ընդառաջ չի գնա հեղաշրջման ճանապարհով իրենց տապալելու ընդդիմության փորձերին:

Ընդդիմությունը վստահ է, որ այս շարժումը կարթնացնի ժողովրդի զգալի հատվածին (այստեղից էլ «Զարթնի՛ր, լառ՛» կոչը), մասնակիցների թիվը կմեծանա, և նրանք վաղ թե ուշ լեգիտիմ ճանապարհով կպարտադրեն Նիկոլին հրաժարական տալ:

Արծարծվող խնդիրները հասկանալու համար ամեն անգամ պետք է վերադառնանք հոդվածի սկզբում նշված գլոբալ լիբերալիզմի գաղափարների սեղմ դրույթներին:

Լիբերալ-ժողովրդավարական գործընթացից դուրս չի մնացել նաև Հայաստանը: Հայաստանյան լիբերալիզմի ուսապարկում կան մի քանի գունավոր հեղափոխությունների հաջողված և չհաջողված փորձեր՝ հարձակումներ պետական կառույցների ու եկեղեցու վրա, ընդդիմադիր կուսակցությունների ու քաղաքական գործիչների գործունեության կասեցում, պետության ղեկավարների նկատմամբ շանտաժ և վարկաբեկում, լիբերալիստական կենտրոնների և հիմնադրամների կողմից հազարավոր երիտասարդների տրված դիպլոմներ և այլն: Պակասում է միայն ԼԳԲՏ շքերթը: Մեր բնակչության մեծ մասի աշխարհընկալման մեջ 30 տարվա ընթացքում լիբերալ քարոզչության և բարեփոխումների հետևանքով տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք ձևավորել են սոցիալական, տնտեսական, հոգեբանական, գաղափարական-քաղաքական նոր մղումներ, որոնք խթանում են նրանց հասարակական վարքագիծը զուտ անհատական, նյութապաշտական շահերով, դարձնում նրանց անտարբեր այն ամենի նկատմամբ, ինչը դուրս է իրենց հետաքրքրությունների շրջանակից: Ըստ նրանց՝ ազգային արժանապատվությունը,

Բորիս Ջոնսոն

հայրենասիրությունը, պահանջատիրությունը դյուրագրգիռ հոգեմաշություն են և միայն բարդույթներ են ծնում: Արցախի խնդիրը նրանց համար հենց նման բարդույթ է, որն իրենց պատանդ է վերցրել, թույլ չի տալիս ապրել խաղաղ ու բարեկեցիկ կյանքով:

Եթե այս զանգվածին ավելացնենք աղանդավորների բազմահազարանոց բանակը, որն իր բնույթով արդեն հակաեկեղեցական, հակապետական և հակազգային է, ապա քիչ հավանական է, որ ցույցերի մասնակիցների թիվը կբազմապատկվի: Պատերազմից հետո անցկացված բոլոր հանրահավաքների փորձը ցույց է տալիս, որ պետության և ազգի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար պատրաստ են պայքարելու հենց այդ նույն 50 հազար մարդիկ: Առաջ անցնելով ասենք, որ կապիտուլյանտ վարչակազմից ազատվելու համար դա էլ բավարար է: Այժմ անդրադառնանք երկրորդ հարցին: Ընդդիմությունը բազմիցս հայտարարել է, որ մտադիր է շարժումը հզորացնելով, լեգիտիմ կամ սահմանադրական ճանապարհով Նիկոլին հեռացնել իշխանությունից և ժողովրդավարական ճանապարհով ձևավորել նոր կառավարություն, որը դուրս կբերի երկիրը ստեղծված ծանր իրավիճակից: Իրենք չեն դիմի ուժային միջոցների, որոնք կարող են հանգեցնել անկանխատեսելի հետևանքների և անընդունելի ու դատապարտելի են առաջադեմ մարդկության կողմից: Հետևողական բացատրական աշխատանք տանելով, լուսաբանելով այս իշխանությունների կործանարար քայլերը թե՛ արտաքին քաղաքականության մեջ և թե՛ ներքին կյանքում, խաղաղ ցույցերով, երթերով կբազմապատկեն մասնակիցների թիվը և, տարածելով շարժումը մյուս քաղաքներում, կարթնացնեն ու ոտքի կհանեն ժողովրդական զանգվածներին: Ակնհայտ է, որ ուժային հեղաշրջման մտադրություն անգամ չկա, և ընդդիմությունը մտադիր է գործել ժողովրդավարության օրենքների շրջանակներում: Ո՛չ իշխանությունները, ո՛չ առաջադեմ մարդկությունը չեն կարող մեղադրել ընդդիմությանը ծայրահեղականության մեջ:

Այժմ նորից վերադառնանք հոդվածի առաջին

մասին: Լիբերալիզմը, ըստ իր արժեքների ու կանոնների, ձևավորել է նաև մեր քաղաքական դաշտը՝ երկրորդ պլան մղելով կուսակցությունների գաղափարախոսություններն ու ծրագրերը, հայտարարելով դրանք ժամանակավրեպ, առաջ մղելով հասարակարգի լիբերալ վերակառուցումը: Իշխանության գալով՝ այս կամ այն կուսակցությունը, դրա ղեկավարությունը, մի կողմ թողնելով իրենց հռչակած գաղափարներն ու սկզբունքները, ձեռնամուխ են լինում լիբերալ-ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը: Այդպիսի գաղափարաքաղաքական տրանսֆորմացիայի (խնդրում ենք չշփոթել «տրանսգենդերիզացիա» հասկացության հետ) համար արժանանում են եվրոինստիտուտների դրական գնահատականներին, լեգիտիմ և ժողովրդավարական կոչումներին: Ավելին՝ լիբերալ-ժողովրդավարական արժեքներն ու կանոնները ամրագրվեցին սահմանադրորեն և արդեն օրենքի ուժով հունավորեցին մեր գիտակցությունը, հոգեբանությունը և հասարակական վարքագիծը: Քաղաքական դաշտը դրվեց լիբերալ կանոնների շրջանակների մեջ: Ցանկացած կուսակցություն, գործիչ կարող է իրականացնել իր քաղաքականությունը միայն լիբերալ կանոնների շրջանակներում, այլապես կհամարվի ոչ լեգիտիմ և կդատապարտվի «առաջադեմ մարդկության կամ քաղաքակիրթ աշխարհի կողմից»:

Երկրի ճակատագրով մտահոգ հայ մարդկանց մոտ հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք հասնել Նիկոլի հրաժարականին ժողովրդական ճնշման միջոցով, ժողովրդավարական ճանապարհով, եթե ցուցարարների թիվը բազմապատկվի: Եվ ընդհանրապես, հնարավո՞ր է հասարակության պահանջով ու պարտադրանքով պաշտոնաթող անել պետության որևէ ղեկավարի, որն ընտրվել է լեգիտիմ ճանապարհով, ունի իրեն հավատարիմ ուժային կառույցներ և հզոր արտաքին հովանավոր: Վերջապես, եթե խայտառակ պարտություն կրելուց, կապիտուլյացիա ստորագրելուց, հողեր հանձնելուց ու հազարավոր զոհեր տալուց հետո թիվ մեկ պատասխանատուն հրաժարական չի տվել, ապա ինչո՞ւ ադրբեջանական վերջնագրի պահանջները կատարելու համար պետք է հրաժարական տա: Ամոթի զգացումի՞ց, խղճի խայթի՞ց, թե՞ պատվազրկությունից: Բայց, ինչպես վերը նշեցինք, այդ հասկացությունները լիբերալիստի համար վերապրուկներ են, նախապաշարմունքներ: Միայն մի դեպքում գաղափարական լիբերալիստը հրաժարական կտա, երբ նրան իշխանության բերած հովանավորը կորոշի փոխարինել նրան մեկ այլ՝ ավելի թունդ լիբերալիստով: Համաձայնելով, որ նշված հարցերը տեղին են, անդրադառնանք հենց լիբերալ հեղաշրջումների, այսինքն՝ գունավոր հեղափոխությունների հարուստ փորձին: Դրանք փաստում են, որ գործող իշխանություններին հեռացնելու համար անհրաժեշտ է առնվազն երեք ուժ՝ մի քանի տասնյակ հազար մարդ, որոնք ներկայացվում են

Վլադիմիր Զելենսկի

որպես «ողջ ժողովուրդ», ոստիկանության հետ արյունալի կռվշտուքի պատրաստ հարվածային ջոկատ, հաճախ՝ ուժեղացված դիպուկահարներով, արտաքին քաղաքական, քարոզչական և ֆինանսական հզոր հովանավոր: Հաջողության դեպքում վերջինս էլ «առաջադեմ մարդկության» անունից կողջունի հեղաշրջումը և կհոչակի այն լեգիտիմ և ժողովրդավարական: Դիմադրության շարժումը դեմ է նման միջոցներին, որոնք վայել են միայն միջկուսակցական գզվռտոցին՝ հանուն իշխանության, մինչդեռ դրված է պետության և ազգի գոյության հարցը, ինչը կարելի է լուծել միայն համաժողովրդական պայքարի ճանապարհով: Դե ինչ, հուսանք, որ լառն կզարթնի:

Վերջապես անդրադառնանք երրորդ հարցին՝ ինչո՞ւ Արցախը անմասն է մնում շարժմանը:

Նորից վերադառնանք հոդվածի առաջին մասին, մասնավորապես՝ նոր աշխարհակարգ հաստատելու գործընթացներին: Թվում է, թե ինչ նշանակություն կարող է ունենալ պատառ-պատառ արված, ոչ մի պետության կողմից չճանաչված, քարտեզի վրա չերևացող այս ինքնահռչակ պետությունը գլոբալ աշխարհակարգի ձևավորման գործում:

Թավշյա հեղափոխությունը և երիտլիբերալներին իշխանության բերելը նախ և առաջ ուղղված էին Արցախի դեմ: Առաջին իսկ քայլերից նրանք նախապատրաստում էին Արցախի հանձնումը: Եվ հեղափոխությամբ երջանկացած քաղաքացիների մեծ մասը դեմ չէր դրան: Քողարկելու համար իրենց դավաճանությունը նրանք հերոսական դիմադրության «ֆլեշմոբ» կազմակերպեցին և 5 հազար զինվոր զոհեցին: Հանձնեցին, բայց գործն ամբողջությամբ գլուխ չբերեցին: Չհաջողվեց մինչև վերջին արցախցուն հանձնել: Չկարողացան մինչև վերջ հեռու պահել Վ. Պուտինին իրենց բռնած գործից: Ի վերջո ռուսները եկան ու խցկվեցին Ղարաբաղ:

Արևմուտքը, ճիշտ է, չդատապարտեց Ադրբեջանի ագրեսիան, չմոբիլիզացրեց առաջադեմ մարդկությանը՝ ռազմական և ֆինանսական օգնություն տրամադրելու պանծալի հայ հեղափոխականներին,

ինչն այսօր արվում է ուկրաինացի հեղափոխականների համար, բայց և չդատապարտեց ռուսական զորքերի մուտքը Արցախ: Ավելին՝ այսօր արդեն փորձում են վերակենդանացնել Մինսկի խմբի գործունեությունը: Այսինքն՝ տպավորություն է ստեղծվում, որ Արցախի հենց այսպիսի պատերազմի հետևանքով արցախյան պատերազմի «հերոսներ» դարձած Ի. Ալիևը և Ն. Փաշինյանը հայտնվել են չափազանց զգայուն իրավիճակում, և չնայած երկուսն էլ, ինչպես պնդում է Ի. Ալիևը, բանավոր համաձայնության են եկել խաղաղության պայմանագրի և դրա պահանջների շուրջ, չեն կարողանում կնքել այն: Խանգարում են Հարավային Կովկասում իրար դիմակայող Ռուսաստանը, ինչպես և Իրանը և հավաքական Արևմուտքը՝ ի դեմս Միացյալ Նահանգների: Առաջինի համար Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը արցախյան հարցի փակում է նշանակում, որին ինքնըստինքյան կհետևի Արցախից ռուսական ռազմական ուժերի դուրսբերման պահանջը: Եվ դա կլինի ռուսներին տարածաշրջանից դուրս քշելու համար անհրաժեշտ առաջին քայլը, ինչի մասին Թուրքիան երազում է արդեն երեք դար: Իրանի դեպքում Զանգեզուրի միջանցքի բացումը վտանգում է նրա կենսական շահերը, քանի որ ճանապարհ է բացում ՆԱՏՕ-ի զորքերի համար և հավասար է ռազմական բլոկադայի:

Իսկ եթե ռուսները դուրս չգան: Թող զարմանալի չթվա, բայց հենց դա էլ պետք է գլոբալիստներին: Հիշենք, որ այս տարվա սկզբից Ջ. Բայդենը անդադար խոսում էր Ուկրաինայի դեմ ռուսների հարձակումից, շաբաթը մեկ հարձակման նոր օր էր հայտարարում, կանխավ մեղադրում էր նրանց բոլոր տեսակի մեղքերի մեջ, նույնիսկ Վ. Պուտինին մարդասպան անվանեց: Վերջապես ռուսները ծերուկի խոսքը գետնով չտալու համար «ընդառաջ գնացին» և սկսեցին հատուկ ռազմական գործողությունը: Սակայն գլոբալիստները մտադիր չեն սահմանափակվել Ուկրաինայով: Ռուսաստանը հյուծող պատերազմներ պետք են նաև այլ տարածաշրջաններում, օրինակ՝ Հարավային Կովկասում:

Գունավոր հեղափոխությունը Հայաստանում

Արցախից ռուսական զորքերի դուրսբերումը կզրկի գլոբալիստներին Հարավային Կովկասը Ռուսաստանի դեմ ռազմական պլացդարմ դարձնելու հնարավորությունից: Իսկ եթե դուրս չգա, ապա ստիպված են լինելու պաշտպանել հայ-ադրբեջանական խաղաղ պայմանագրով ոչնչացման եզրին հայտնված Արցախը, որի դիմադրությունը անկասկած կհանգեցնի ադրբեջանցիների բախմանը ռուս խաղաղապահների հետ: Հենց դա էլ պետք է գլոբալիստներին: Մնացածը, ինչպես ասում են, տեխնիկայի հարց է: Ըստ բազմիցս փորձարկված լիբերալ-հեղափոխական տեխնոլոգիաների, հաշվի չառնելով Ալիևի կարծիքը, ոտքի կհանեն տեղական լիբերալներին, ազգայնականներին, մահմեդական ծայրահեղականներին և քրեական խուժանին, հակառուսական զանգվածային ցույցեր կսկսեն, մի քանի ռուս կմորթեն, և հակամարտությունը պատրաստ է: «Առաջադեմ մարդկությունն» էլ համերաշխություն կհայտնի ադրբեջանցի «ազատասեր» ժողովրդին, կզինի, կֆինանսավորի և կհորդորի կռվել մինչև վերջին ադրբեջանցին: Դե այդ դեպքում ի՞նչ է մնում անել Վ. Պուտինին: Այո՛, մնում է հայտարարել, որ, ի պաշտպանություն Արցախի և Ադրբեջանի քրիստոնյա բնակչության, հատուկ ռազմական գործողություն է սկսում Ադրբեջանում: Մնացածը՝ ուկրաինական սցենարով: Կամ էլ, եթե ուժերը չբավարարեն, Ռուսաստանը ստիպված կլինի հեռանալ Հարավային Կովկասից: Կարծում եք՝ այսպիսի զարգացումներ հնարավո՞ր չեն:

Ահա թե ինչ նշանակություն ունի փոքրիկ Արցախը գլոբալիստական խաղերում:

Այս իրավիճակում, երբ Հայաստանի իշխանությունները և երջանիկ քաղաքացիական հասարակությունը հրաժարվում են Արցախից և պարտադրում հանձնվել ազերիներին, ո՞ւմ հետ կարող են հույսեր կապել արցախցիները: «Դիմադրության» շարժման 60 հազար մասնակիցների՞, որոնց վիճակն այնքան էլ չի տարբերվում իրենց իսկ վիճակից: Արցախցիք կանգնած են լինել-չլինելու խնդրի առջև: Այսօր նրանց կյանքի միակ երաշխավորը ռուս խաղաղապահներն են, և իրենց հայրենիքում գոյատևելու հույսերը նրանք կապում են Ռուսաստանի հետ: Եվ եթե շուտով Արցախը դիմի Ռուսաստանի Դաշնությանը՝ նրա կազմի մեջ մտնելու համար, թող ոչ ոք չփորձի նախատել նրան: Ո՞վ ունի այդ իրավունքը: Ճիշտ է, միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգող «առաջադեմ մարդկությունը» և ՀՀ իշխանությունները: Իսկ Արցախը կդիմի և կսպասի, ինչպես սպասեցին Ղրիմը և Դոնբասը: Կարծում եք՝ այսպիսի զարգացումներ հնարավոր չե՞ն: Գլոբալ աշխարհակարգի հեղեղապտույտում ամեն ինչ հնարավոր է:

Հայաստանը Հարավային Կովկասում: Սպառնալիքներ և հնարավորություններ

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Ս. թ. օգոստոսի 5-ին Սոչիում տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների հերթական հանդիպումը, որը տևեց չորս ժամ: Հանդիպումից երկու օր առաջ Վ. Պուտինը Անվտանգության խորհրդի նիստ էր հրավիրել, որի ավարտից հետո մամուլին տեղեկացվել է, որ Սոչիում ՌԴ առաջնորդը Էրդողանի հետ պատրաստվում է քննարկելու նաև Արցախի հարցը: Նշենք, որ ճիշտ նույն օրերին՝ օգոստոսի 1-4-ն ընկած ժամանակահատվածում, իրավիճակը հայկական երկրորդ պետությունում կրկին լարվել էր: Արցախի և Ադրբեջանի զինված ուժերի միջև նոր ռազմական բախումներ են եղել, որոնց ընթացքում կողմերը մարդկային կորուստներ են ունեցել, իսկ Արցախը՝ նաև տարածքային: Այդ իրադարձությունների լույսի ներքո Պուտին-Էրդողան հանդիպումը լրացուցիչ հետաքրքրություն էր բորբոքել ոչ միայն հայ և ադրբեջանական հանրությունների շրջանում, այլև ռուսական մամուլի ու փորձագիտական շրջանակներում: Բանն այն է, որ հիշատակված լարվածությունը լուրջ հարված է հասցրել Ռուսաստանի միջազգային հեղինակությանը, քանի որ հենց այդ երկրի խաղաղապահ ուժերն են իրականացնում Արցախում անվտանգության և կայունության ապահովման առաքելությունը:

Պուտին-Էրդողան հանդիպման ավարտից հետո, սակայն, Արցախի մասին որևէ նորություն չհնչեց: Երկու երկրների ղեկավարներն ընդհանրապես չեն պատասխանել մամուլի հարցերին, քանի որ հանդիպման ավարտից անմիջապես հետո Էրդողանը մեկնել է Թուրքիա: Հետագայում այդ հանդիպման արդյունքների մասին միայն երկու լուր է հաղորդվել հանրությանը. առաջին՝ Էրդողանն առաջարկել է Ստամբուլում Պուտին-Զելենսկի հանդիպում կազմակերպել, և երկրորդ՝ կողմերը պայմանավորվել են միջպետական առևտրի մի մասն իրականացնել ռուսական ռուբլով: Այլ մանրամասներ, ցավոք, չհրապարակվեցին:

Ռուսական «Коммерсантъ» թերթը, սակայն, հղվելով իր սեփական աղբյուրներին, գրել է, որ Արցախի հարցը Պուտինն ու Էրդողանը այնուամենայնիվ քննարկել են և նշել, որ «դատելով ամենից՝ Ադրբեջանն իր ակտիվությունն այդ տարածաշրջանում կնվազեցնի»[1]: Թե որքանով է այդ տեղեկությունը հավաստի, և ինչու պետք է Ադրբեջանը դադարեցնի իր ագրեսիվ գործողությունները, մինչ այս պահը հայտնի չէ: Արդարության համար միայն նշենք, որ Պուտին-Էրդողան հանդիպման ժամանակ ռազմական դրությունն Արցախում արդեն քիչ թե շատ հանդարտված էր, և դրա պատճառը, ցավոք, հայկական կողմի համաձայնությունն էր՝ 20-օրյա ժամկետում Ադրբեջանին հանձնելու Արցախի

Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքն ու Սոս և Աղավնո գյուղերը…

Ընդհանրապես պետք է նշել, որ 44-օրյա պատերազմից հետո Արցախի խնդիրն անուշադրության չի մատնվել տարածաշրջանային կարևոր և ոչ մի հանդիպման ընթացքում: Ճիշտ հակառակը՝ Հարավային Կովկասի ապագան այսօր կառուցվում է հենց արցախյան հիմնախնդրին տրվող այս կամ այն լուծման հիման վրա: Ավելին՝ նույն 44-օրյա պատերազմով է սկսվել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական վերափոխման ծրագիրը, որին ակտիվորեն մասնակցել են ոչ միայն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն, այլև Թուրքիան, Իրանը և եվրոպական մի շարք երկրներ: Ուստի ամենևին էլ զարմանալի չէ, որ, չնայած ուկրաինական ու մերձավորարևելյան ճգնաժամերին, որոնցում Մոսկվան և Անկարան ամենաուղիղ ձևով ներգրավված են և հաճախ նույնիսկ մրցակցում են միմյանց դեմ, Պուտինն ու Էրդողանը լուրջ ուշադրություն են դարձնում նաև արցախյան հիմնախնդրին: Ի վերջո պետք է գիտակցել, որ աշխարհաքաղաքական փոփոխություններ են տեղի ունենում ոչ միայն Հարավային Կովկասում, այլև հարակից բոլոր տարածաշրջաններում, և այդ գործընթացները փոխկապակցված են:

Ս. թ. հուլիսի 19-ին Թեհրանում տեղի ունեցավ Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի նախագահների հերթական հանդիպումը: Քննարկման հիմնական թեման Սիրիայում ստեղծված իրավիճակն էր: Սիրիայում նոր ռազմական գործողություն սկսելու Թուրքիայի սպառնալիքների լույսի ներքո այդ օրերին սիրիական թեման իր կարևորությամբ առաջ էր մղվել նույնիսկ Ուկրաինայում իրականացվող ռուսական ռազմական հատուկ գործողությունից ու դրա հետևանքով առաջացած խնդիրներից: Սակայն Թեհրանում, ըստ էության, առաջին անգամ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան, Ռուսաստանն ու Իրանը

Մերձավոր Արևելքից մինչև Սև ծովի ավազան և Արևելյան Եվրոպա տեղի ունեցող զարգացումները դիտարկում են որպես մեկ գործընթացի տարբեր բաղադրիչներ: Իսկ դա առնվազն նշանակում է, որ այդ բոլոր զարգացումները նրանք հաճախ դիտարկում և քննարկում են որպես մեկ փաթեթ, ինչը Հայաստանի սուբյեկտայնությունը նվազեցնող ևս մեկ հանգամանք է: Թերևս դա է պատճառը, որ հայկական պետությունն ու հանրությունը դարձան Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեի՝ հայ-իրանական սահմանի անձեռնմխելիության մասին հայտարարությունների զուտ մեկնաբանները: Հայաստանում այդ օրերին հստակ գիտակցեցին, որ Սյունիքի մարզի անվտանգության հիմնական երաշխավորը ոչ թե հայկական պետությունն է, այլ Իրանի Իսլամական Հանրապետությունը: Եվ սա, իհարկե, ցավալի փաստ էր:

Իսկ ինչ խնդիրներ են հետապնդում Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը մեր տարածաշրջանում: Սա հարց է, որի մասին հայկական փորձագիտական շրջանակները, ցավոք, քիչ են մտածում: Ընդհանրապես պետք է նշել, որ Հայաստանում տիրող տրամադրությունները որևէ կերպ չեն նպաստում երկիրը ստեղծված իրավիճակից դուրս բերելուն ուղղված լուծումների որոնմանը: Դատապարտվածության համընդհանուր զգացումը մեր ժողովրդին ստիպում է կարծել, որ ամեն բան արդեն կորած է, և Հայաստանն այլևս վերականգնվելու ռեսուրս չունի: Ավելին՝ քիչ չեն նաև այն տրամադրությունները, որ երկիրը պետք է հանձնել արտաքին կառավարման և հուսալ, որ օտար պետությունները գոնե մեր անվտանգության խնդիրները կլուծեն: Սա անընդունելի մոտեցում է, որից պետք է օր առաջ հրաժարվել: Փոխարենը Հայաստանը պետք է փորձի հստակ հասկանալ մեր տարածաշրջանում ընթացող զարգացումների տրամաբանությունը, բացահայտել ռիսկերն ու հնարավորությունները և մշակել առաջ գնալու՝ այդ իրողություններից բխող իրատեսական քաղաքականություն:

Սկսենք թերևս ամենապարզ ճշմարտությունների արձանագրումից: Այսպես՝ Հարավային Կովկասը վերափոխվող աշխարհակարգի կարևորագույն օղակներից մեկն է, որտեղ կենսական շահեր են հետապնդում թե՛ Ռուսաստանը, թե՛ Արևմուտքը և թե՛ տարածաշրջանային տերությունները: Իրանի համար այն ելք է դեպի Սև ծով և Եվրոպա: Ընդ որում, Թեհրանի համար չափազանց կարևոր է, որ այդ ելքը չվերահսկվի իր աշխարհաքաղաքական դարավոր մրցակցի՝ թյուրքական աշխարհի կողմից: Այդ վտանգը չեզոքացնելու համար Իրանի իշխանություններն օգտվում են ինչպես դիվանագիտական, այնպես էլ անհրաժեշտության դեպքում ռազմական գործիքակազմից: Սակայն նախապատվությունը տրվում է հենց դիվանագիտական միջոցներին: Դա է պատճառը, որ Թեհրանը շարունակ հղում է տարածաշրջանային պետությունների՝ միջազգային ճանաչում ունեցող սահմանների պահպանման

Երեք նախագահների հանդիպումը Թեհրանում. 19. 07. 2022 թ.

անհրաժեշտությանը: Որպես արդյունք, որպեսզի Իրանը կարողանա վստահ դեմ դուրս գալ Սյունիքի հանդեպ թուրք-ադրբեջանական դաշինքի ոտնձգություններին, ստիպված է ողջունել նաև արցախյան վերջին պատերազմի արդյունքները և հայկական այդ տարածաշրջանի նկատմամբ ադրբեջանական վերահսկողության հաստատումը: Այսինքն՝ եթե հայ-իրանական հարաբերություններին գնահատական տանք՝ նկատի առնելով զուտ տարածաշրջանի քաղաքական քարտեզը, ապա ստիպված կլինենք փաստել, որ Սյունիքի հարցում Իրանը մեր դաշնակիցն է, իսկ Արցախի հարցում՝ Ադրբեջանի:

Հետևաբար ո՞րը պետք է լինի Հայաստանի քաղաքականությունը Իրանի հանդեպ: Պատասխանը կարծես ակնհայտ է՝ ամեն կերպ նպաստել Սյունիքի տարածքով իրանա-հայկական հաղորդակցական ուղիների ստեղծմանն ու բարելավմանը՝ զուգահեռաբար ամեն ինչ անելով, որ Արցախի խնդրում Թեհրանն առավելագույնս չեզոք լինի: Ընդ որում, դա պետք է անել՝ լավ գիտակցելով, որ նման չեզոքությունը ցանկալի է նաև իրանական կողմի համար: Պարզապես պետք է այդպիսի հնարավորություններ ստեղծել պաշտոնական Թեհրանի համար, չկանգնեցնել նրան ընտրության առաջ, և համապատասխան մեխանիզմը կաշխատի:

Թուրք-ադրբեջանական դաշինքի ծրագիրը մեր տարածաշրջանում առավել քան պարզ է՝ տոտալ վերահսկողություն: Դա դարեր շարունակ հետապնդվող թյուրքական աշխարհի ծրագիրն է՝ պանթուրանիզմը: 44-օրյա պատերազմում հաղթանակից հետո թուրք-ադրբեջանական դաշինքն ամեն ինչ անում է, որպեսզի առավելագույնս բարելավի իր ռազմաքաղաքական դիրքերը Հարավային Կովկասում: Անկարայի համար երկրորդ շահեկան հանգամանքն այն է, որ ուկրաինական ճգնաժամի պատճառով Թուրքիան դարձել է միակ պետությունը, որը կարող է երկխոսության որևէ մակարդակ ապահովել Ռուսաստանի և Արևմուտքի միջև: Սա կարևոր գործոն է Ռուսաստանի համար, որը պահպանելու համար նա կարող է ժամանակ առ

ժամանակ զիջումներ անել Թուրքիային Հարավային Կովկասում: Իհարկե՝ ի հաշիվ Հայաստանի ու Արցախի…

Ելնելով աշխարհաքաղաքական մրցակցության պարտադրած ծանր պայմաններից՝ Ռուսաստանում կարծես որոշել են, որ Հարավային Կովկասը պահելու իրենց միակ ու ամենագործուն գործիքը ռազմական ներկայությունն է: Ժամանակակից քաղաքականության այնպիսի կարևոր գործոնից, ինչպիսին, այսպես կոչված, «փափուկ ուժն» է («soft power»), Մոսկվան հրաժարվել է: Ռուսաստանում վստահ են, որ Հարավային Կովկասում թուրք-ադրբեջանական դաշինքին արված զիջումները անհրաժեշտության դեպքում կարելի կլինի փոխհատուցել Արցախում և Հայաստանում տեղակայված զորքերի միջոցով: Իսկ հայ ժողովրդի շրջանում օրեցօր աճող հակառուսական տրամադրությունները Մոսկվան պարզապես անտեսում է՝ վստահ լինելով, որ, միևնույն է, այլ ընտրություն հայությունը չունի:

Հակառակ սրա՝ թուրք-ադրբեջանական դաշինքն ակտիվորեն օգտագործում է Ռուսաստանի թույլ տված բոլոր սխալներն ու պահի ընձեռած հնարավորությունները և ամեն հաջորդ շրջափուլում էլ ավելի է մեծացնում սեփական պահանջների ծավալը: Սա մահացու շրջափուլ է, որից դուրս գալու համար Հայաստանը պարզապես պարտավոր է մի շարք քայլեր ձեռնարկել: Նախ՝ անհրաժեշտ է Թուրքիայի էքսպանսիոնիզմը զսպող քաղաքականություն մշակել: Նախկինում Հայաստանն ուներ նման գործիքներ, օրինակ՝ Հայոց ցեղասպանության հարցը, որն այսօր իսպառ մոռացության է մատնվել պաշտոնական Երևանի կողմից: Ավելին՝ պատերազմից երկու տարի անց մեր պետությունը նույնիսկ սեփական բանակը վերականգնելու և երկիրը պաշտպանելու ոչ մի շոշափելի քայլ չի ձեռնարկել: Սա հանցավոր անգործություն է, որը միայն գրգռում է թուրք-ադրբեջանական դաշինքի ախորժակը և մեզանից նոր տարածքներ զավթելու պատճառ դառնում: Ուստի Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում մեր օրակարգի միակ հարցը պետք է լինի հետևյալը՝ ինչպե՞ս զսպել թշնամական այդ դաշինքի զավթողական քաղաքականությունը: Այսպես կոչված «խաղաղության օրակարգը», որի հիմքում հակառակորդների ախորժակը հագեցնելով մի կերպ նրանց հայակործան քաղաքականությունից ձերբազատվելն է, ոչ միայն չի լուծում այդ խնդիրը, այլև նոր կորուստների պատճառ է դառնում: Արցախում մի քանի ամիսը մեկ ադրբեջանական զորքերի առաջխաղացումը դրա վառ ապացույցն է: Ուստի այդ քաղաքականությունից անհրաժեշտ է հրաժարվել և զսպման մարտավարություն որդեգրել: Նույնիսկ եթե դրա համար նոր պատերազմի անհրաժեշտություն առաջանա, Թուրքիային և Ադրբեջանին պետք է զսպել: Այլ տարբերակ չկա: Մնացած բոլոր ուղիները Հայաստանը տանում են դեպի կործանում:

Ռուսաստանի համար Հարավային Կովկասը ռազմական կարևոր հենակետ է: Ռուսական փորձագիտական շրջանակները մեր տարածաշրջանը հաճախ ֆորպոստ են կոչում: Դա մի տարածք է, որտեղից Ռուսաստանը կարող է ոչ միայն ազդել Թուրքիայի և Իրանի քաղաքականության վրա, այլև հայացք նետել ողջ Մերձավոր Արևելքին, Պարսից ծոցի ավազանին, խոչընդոտել դեպի Միջին Ասիա և Աֆղանստան տանող արևմտյան կապուղիների օգտագործումը և այլն: Ավելին՝ Հարավային Կովկասն այն տարածաշրջանն է, որտեղից Ռուսաստանն ապահովում է նաև սեփական տարածքային ամբողջականությունը: Այլ խոսքով՝ մեր տարածաշրջանը ռուսական կենսական շահերի գոտի է, որի բոլոր երկրները աշխարհաքաղաքականության տեսանկյունից Մոսկվայի համար նույն կարևորությունն ունեն:

Հայաստանը չի կարող Հարավային Կովկասում Ռուսաստանի համար բացառիկ դերակատարության հավակնություն ունենալ, առավել ևս հիմա, երբ մեր երկիրը տարածաշրջանում անվտանգություն ապահովող երկրից վերածվել է անվտանգություն սպառող երկրի: Բայց Հայաստանը կարող է այնպես անել, որ մեր տարածաշրջանում Ռուսաստանն ի հաշիվ մեզ խնդիրներ չլուծի: Սա նվազագույն խնդիրն է, որ այս պահին պետք է դրվի մեր երկրի քաղաքական էլիտաների առջև: Դա առաջին հերթին ենթադրում է հավասարակշռված և իրատեսական քաղաքականության մշակում, ինչպես նաև Ռուսաստանի հետ համագործակցության ճիշտ ոլորտների և ուղիների հաստատում:

Հատկապես Ռուսաստանի հետ հարաբերություններում հայ քաղաքական միտքը պետք է լավ հասկանա բոլոր ռիսկերն ու հնարավորությունները: Սա կարևոր աշխատանք է, որը տարիներ շարունակ մեր երկրում շատ վատ է կատարվել: Չեն եղել լուրջ փորձագիտական կենտրոններ, մասնագիտական հաղորդակցություն ռուսական համապատասխան շրջանակների հետ, մամուլի միջոցների՝ բավարար մակարդակի համագործակցություն և այլն: Իսկ 2018 թ. հեղաշրջման հետևանքով Հայաստանում իշխանության եկած ուժերն իրենց հերթին հնարավորինս փչացրին հայ-ռուսական հարաբերությունները: Հետևանքն այն է, որ ունենք այն, ինչ ունենք, և դեռ ամեն ինչ կարող է ավելի վատ լինել…

Հետագա հոդվածներում մենք դեռ կանդրադառնանք այս բոլոր խնդիրներին՝ փորձելով ավելի մանրամասն ուսումնասիրել տարածաշրջանային երկրների քաղաքականությունը Հարավային Կովկասում: Մինչ այդ, սակայն, անհրաժեշտ է ևս մեկ անգամ արձանագրել, որ Հայաստանը դատապարտված չէ, որ մենք ունենք հնարավորություններ և վերականգնվելու ներուժ: Պարզապես անհրաժեշտ են ճիշտ նպատակադրումներ և քրտնաջան աշխատանք: Այնժամ արդյունքները երկար չեն սպասեցնի:

1- https://www.kommersant.ru/doc/5501396?from=main (մուտք՝ 5.08.2022)

Թեհրանից Սոչի. տարածաշրջանային առաջնորդների տարբերվող (հակասական) օրակարգերը

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

Հուլիսի 19-ին Թեհրանում տեղի ունեցավ Աստանայի ձևաչափի շրջանակում Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի նախագահների 7-րդ եռակողմ գագաթնաժողովը: Սիրիական հիմնախնդրի կարգավորմանը միտված այս եռակողմ ձևաչափը, որի գաղափարական հիմքը «տարածաշրջանային խնդիրները տարածաշրջանի ներուժով լուծելու» սկզբունքն է, գործում է 2017 թվականից և զգալի ներդրում է ունեցել Սիրիայում ներկայումս ընթացող «կառավարելի հակամարտության» ստատուս քվոյի հաստատման հարցում: Ձևաչափի տրամաբանությունը հետևյալն էր. Թեհրանը և Մոսկվան գործում են սիրիական վարչակարգի հետ սերտ համագործակցությամբ և ընդհանուր պայմանավորվածությունների ու գործողությունների համակարգմամբ, Թուրքիան՝ վերահսկելի ընդդիմադիր խմբավորումների: Հենց Աստանայի ձևաչափի գործարկման արդյունքում սիրիական հակամարտության հարցում հակասական դիրքորոշումներ ունեցող Ռուսաստանին և Իրանին՝ մի կողմից, Թուրքիային՝ մյուս կողմից, հաջողվել է զգալիորեն թուլացնել մրցակից այնպիսի խաղացողների դիրքերը, ինչպիսիք են ԱՄՆ-ն, ԵՄ-ն, արաբական առանցքային երկրները և այլն: Աստանայի եռյակի վերջին գագաթնաժողովը կազմակերպվել էր 2020 թ. հուլիսին առցանց ձևաչափով՝ նոր կորոնավիրուսի համավարակի պատճառով: Հետևաբար Պուտին-Էրդողան-Ռաիսի հերթական հանդիպումը որոշակիորեն նաև օրակարգային կարևորություն էր ձեռք բերել:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ուկրաինական ճգնաժամի պատճառով աշխարհում ստեղծված բազմաշերտ լարվածության պայմաններում միաժամանակ մի քանի ենթատարածաշրջաններում հատվող շահեր և վճռորոշ դերակատարում ունեցող նշված տերությունների ղեկավարների հանդիպումն օբյեկտիվ անհրաժեշտություն էր նաև հարակից այլ խնդիրներ քննարկելու, «ժամացույցները համապատասխանեցնելու» տեսանկյունից: Իսկ երեք առաջնորդներին մի տեղում հավաքելու ամենապատեհ հարթակը հենց Աստանայի ձևաչափն էր, մանավանդ երբ թեմատիկ առիթը բավականաչափ «տաք» էր. ձևաչափի մասնակիցներից Թուրքիան ս. թ. մայիսին կրկին արհեստականորեն օրակարգ էր բերել Սիրիայի հյուսիսում քրդական խմբավորումների դեմ «հակաահաբեկչական» գործողություն իրականացնելու հարցը[1]:

Այսպիսով՝ վերոնշյալի համատեքստում թեհրանյան բանակցությունների առնչությամբ կարելի է առանձնացնել դերակատարների առանցքային

ակնկալիքների որոշակի շրջանակ, որոնց իրացման առավելագույն հնարավորությանն էր ձգտում կողմերից յուրաքանչյուրը: Մասնավորապես, **Թուրքիան** նպատակ էր հետապնդում ստանալու գործընկերների համաձայնությունը *Սիրիայում քրդական խմբավորումների դեմ սահմանափակ ռազմագործողություն իրականացնելու, հարավկովկասյան գործընթացներում թյուրքամետ լուծումների հասնելու հարցերում*, տնտեսական ոլորտում նոր պայմանավորվածությունների միջոցով մեղմելու երկրում խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, իսկ Ռուսաստանի հետ հավելյալ պայմանավորվածությունների հասնելով՝ ամրապնդելու Ստամբուլում «պարենային միջանցքի» ձևավորման շուրջ ձեռք բերված համաձայնությունը՝ դրանով իսկ փրկելով ուկրաինական ճգնաժամի համատեքստում սեփական միջնորդական դերակատարությունը, ինչի ձախողումը ճակատագրական սպառնալիքներով է հղի Էրդողանի վարչակարգի համար, հատկապես ակնկալվող համապետական ընտրություններին ընդառաջ[2]:

Ռուսաստանի համար թեհրանյան բանակցությունները կարևոր էին այլ կենսական տարածաշրջաններում Մոսկվայի համար ոչ ցանկալի զարգացումները կառավարելի պահելու, ուկրաինական ճգնաժամի համատեքստում հակաարևմտյան գործընկերների շրջանակն ընդլայնելու, Արևմուտքի մեկուսացման քաղաքականությունը մեղմելու, դրա հետ կապված՝ ֆինանսատնտեսական, լոգիստիկ խնդիրները հնարավորինս կարգավորելու համար և այլն:

Իրանի համար եռակողմ հանդիպումը նշանակալից էր «Միջուկային համաձայնագրի» վերականգնման գործընթացի ձգձգման պայմաններում շարունակվող տնտեսական և քաղաքական մեկուսացումը մեղմելու, տարածաշրջանային կարևոր գործըն-

կերների հետ ֆինանսատնտեսական, տրանսպորտային, էներգետիկ ոլորտներում նոր պայմանավորվածությունների միջոցով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու, ինչպես Սիրիայում, այնպես էլ կենսական շահերի գոտի հանդիսացող այլ տարածաշրջաններում (Հարավային Կովկաս) գործընկերների երկկողմ պայմանավորվածությունների հնարավորության դեպքում սեփական «կարմիր գծերը» ուրվագծելու տեսանկյունից և այլն:

Վերոնշյալի համատեքստում, հաշվի առնելով կուտակված խնդիրների սրությունն ու բազմաշերտությունը, թեհրանյան բանակցությունները տեղի ունեցան նախ երկկողմ՝ Իրան-Թուրքիա, Իրան-Ռուսաստան, Ռուսաստան-Թուրքիա, ապա՝ նաև եռակողմ ձևաչափով: Հարկ է ընդգծել, որ Թուրքիայի և Ռուսաստանի նախագահներին ընդունեց նաև Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին: Ինչպես և կանխատեսվում էր, Սիրիայի հարցից բացի, Ռաիսին, Էրդողանն ու Պուտինը քննարկեցին նաև իրենց երկրների միջև փոխհարաբերությունները, ուկրաինական և պարենային ճգնաժամերը, գլոբալ լարվածությունը, Իրանի միջուկային ծրագիրը, հակաահաբեկչական պայքարը, պաղեստինյան հիմնախնդիրը, Հարավային Կովկասին առնչվող և այլ հարցեր: Այն, որ բանակցությունները չափազանց բարդ էին, իսկ կողմերի դիրքորոշումները՝ անզիջում և հաճախ նաև անհամադրելի, պարզորոշ երևում էր ոչ միայն հանդիպումների ընդհանուր մթնոլորտից, այլև դրանք ամփոփող հայտարարությունների տեքստերից:

- *Իրան-Թուրքիա բանակցություններ*

Թուրքիայի և Իրանի նախագահների համանախագահությամբ անցկացվեց երկու երկրների համագործակցության բարձրագույն խորհրդի 7-րդ նիստը, որի շրջանակներում կողմերը ստորագրեցին տարբեր ոլորտներում համագործակցության 8 փաստաթուղթ ու հուշագիր, այդ թվում՝ երկարաժամկետ և համապարփակ համագործակցության նախագիծը: Երկու երկրների ղեկավարների

Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի նախագահների 7-րդ եռակողմ գագաթնաժողովում: Թեհրան 9. 07.2022

քննարկումների շրջանակներում էին նաև Իրան-Թուրքիա գազի պայմանագիրը երկարաձգելու և ընդարձակելու, համատեղ ներդրումների, գիտատեխնիկական պարկերի ստեղծման, ահաբեկչության, կազմակերպված հանցագործության և թմրանյութերի դեմ պայքարի հարցերը: Իրանի նախագահը շեշտել էր երկկողմ առևտուրը եռապատկելու՝ 30 մլրդ դոլարի հասցնելու նպատակը[3]:

Երկկողմ հանդիպումն ամփոփող հայտարարության տեքստում անդրադարձ է եղել նաև Հարավային Կովկասին: Ընդգծվել է բազմակողմ համագործակցության զարգացման տեսանկյունից «3+3» տարածաշրջանային խորհրդակցությունների հարթակի կարևորությունը, որը ենթադրում էր «Աստանայի ձևաչափի տեղայնացում Հարավային Կովկասում»[4]:

Հաշվի առնելով Իրանի Իսլամական Հանրապետության պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները՝ հատկապես հատկանշական են Իրանի փաստացի ղեկավար Խամենեիի և Էրդողանի հանդիպմանն իրանական կողմի հնչեցրած սկզբունքային ու վճռորոշ ուղերձները: Խամենեին մասնավորապես ընդգծել է.

- «Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանումը շատ կարևոր է: Սիրիայի հյուսիսում ցանկացած ռազմական հարձակում լինելու է հօգուտ ահաբեկիչների և ի վնաս Թուրքիայի, Սիրիայի և ամբողջ տարածաշրջանի»:
- ***«Իրանը Թուրքիայի և նրա սահմանների անվտանգությունն իր անվտանգությունն է համարում: Դուք էլ պետք է Սիրիայի անվտանգությունը ձեր անվտանգությունը համարեք: Սիրիայի հարցը պետք է բանակցությամբ լուծվի: Իրանը, Թուրքիան, Սիրիան և Ռուսաստանը այս հարցը պետք է բանակցությամբ լուծեն»:***

Խամենեին, գոհունակություն հայտնելով «***Ղարաբաղի՝ Ադրբեջանին վերադարձի» կապակցությամբ, նշել է. «Իհարկե, եթե Իրանի և Հայաստանի միջև սահմանը փակելու քաղաքականություն լինի, Իսլամական Հանրապետությունը դեմ կլինի դրան, քանի որ այս սահմանը հազարամյակների վաղեմություն ունեցող հաղորդակցական ճանապարհ է»[5]:***

- *Իրան-Ռուսաստան բանակցություններ*

Իրանի ու Ռուսաստանի նախագահների երկկողմ հանդիպման ընթացքում ընդգծվել է տարածաշրջանային և արտատարածաշրջանային նոր ոլորտներում համագործակցության զարգացման անհրաժեշտությունը, շեշտվել տարածաշրջանում անկախ երկրների անվտանգության ամրապնդման հարցում իրենց լուրջ կամքը: Անդրադառնալով Սիրիայում ահաբեկչության դեմ պայքարում երկու երկրների հաջող համագործակցության փորձին՝ Իրանի նախագահը այն համարել է տարածաշրջանում անվտանգության և կայունության ամրապնդման

հիմք[6]:

Բացի այդ՝ Վլադիմիր Պուտինին ևս ընդունել է Իրանի հոգևոր առաջնորդը: Հանդիպմանը Խամենեին մասնավորապես նշել է.

• «Արևմտյան պատժամիջոցների պայմաններում Իրան-ՌԴ տնտեսական համագործակցությունն անհրաժեշտություն է և երկու երկրների օգտին»:

• «Պատերազմը դաժան բան է, և Իսլամական Հանրապետությանը բոլորովին հաճելի չէ, որ դրանից տուժում են հասարակ մարդիկ, բայց Ուկրաինայի դեպքում, եթե դուք նախաձեռնությունը ձեր ձեռքը չվերցնեիք, մյուս կողմը սեփական նախաձեռնությամբ էր պատերազմի պատճառ դառնալու»:

• «Արևմուտքը անկախ և ուժեղ Ռուսաստանի դեմ է, և ՆԱՏՕ-ն վտանգավոր կառույց է: Եթե ՆԱՏՕ-ի առջև ճանապարհը բաց լինի, նրանք չափ ու սահման չեն ճանաչի: Եթե նրանց առաջխաղացումը Ուկրաինայում չկանխվեր, Ղրիմի պատրվակով նրանք էին պատերազմ սկսելու»:

• ***«Իսլամական Հանրապետությունը երբեք չի հանդուրժի որևէ քաղաքականություն և ծրագիր, որը Իրանի ու Հայաստանի սահմանի փակմանը կհանգեցնի»:***

Խամենեին շեշտել է Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանմանն աջակցելու և այդ երկրի վրա ռազմական հարձակմանը դեմ լինելու Իրանի դիրքորոշումն ու հավելել նաև, որ ամերիկացիները պետք է դուրս գան Սիրիայից[7]:

Հարկ է նշել, որ Իրան-Հայաստան սահմանի վերաբերյալ շեշտադրումը տարածվել է նաև Իրանի բարձրագույն ղեկավարի թվիթերյան էջում:

Թեհրանում հանդիպել են նաև ԹՀ և ՌԴ նախագահները: Հանդիպման վերաբերյալ Կրեմլի տարածած հաղորդագրության մեջ նշվել է նաև, որ քննարկվել են երկկողմ հարաբերությունները, ուկրաինական ճգնաժամը, Սև ծովով հացահատիկի արտահանման խնդիրը, ինչպես նաև արցախյան հիմնախնդիրը և այլն[8]:

• ***Ատրանայի ձևաչափի երկրների համատեղ հայտարարությունը***

Երկկողմ հանդիպումներից հետո անցկացվել է Իրանի, Թուրքիայի և ՌԴ նախագահների եռակողմ հանդիպումը: Այն ամփոփող համատեղ հայտարարության մեջ մասնավորապես նշվել է, որ կողմերը՝

քննարկել են վերջին հանդիպումից հետո արձանագրված զարգացումները, ընդգծել եռակողմ համագործակցության անհրաժեշտությունը,

• ***ընդգծել են իրենց անսասան հավատարմությունը Սիրիայի ինքնիշխանությանը, անկախությանը, միասնությանը և տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին, շեշ՝տադրել, որ այդ սկզբունքները պետք է հարգվեն բոլորի կողմից, և ոչ մի գործողություն չպետք է խախտի դրանք,***

• իրենց վճռականությունն են հայտնել շարունակելու համագործակցությունը ահաբեկչության դեմ պայքարում բոլոր ձևերով և միջոցներով, դատապարտել Սիրիայի տարբեր շրջաններում տարբեր անուններով ահաբեկչական խմբավորումների և դրանց հարակից խմբերի ներկայությունն ու ակտիվությունը, այդ թվում՝ քաղաքացիական օբյեկտների վրա հարձակումները, որոնք անմեղ մարդկանց մահվան են հանգեցնում, ընդգծել Հյուսիսային Սիրիային առնչվող բոլոր միջոցառումների լիարժեք իրականացման անհրաժեշտությունը,

• ***այս առումով ընդգծել են, որ անընդունելի են ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով տեղում նոր իրողություններ ստեղծելու բոլոր ջանքերը, այդ թվում՝ ինքնավարության անօրինական նախաձեռնությունները, որ պետք է դիմակայել անջատողական օրակարգերին, որոնք ուղղված են Սիրիայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության թուլացմանը, ինչպես նաև սպառնալիք են հարևան երկրների ազգային անվտանգության համար,***

• մանրամասն քննարկել են իրավիճակը Իդլիբի դեէսկալացիոն գոտում, ընդգծել խաղաղության պահպանման, Իդլիբին առնչվող բոլոր պայմանավորվածությունները կատարելու անհրաժեշտությունը, լուրջ մտահոգություն են հայտնել ահաբեկչական խմբավորումների առկայության և գործունեության առնչությամբ, որոնք սպառնում են խաղաղ բնակչությանը, պայմանավորվել ավելի շատ ջանքեր գործադրել Իդլիբի դեէսկալացիոն գոտում և դրա շրջակայքում իրավիճակի կայուն կարգավորումը, այդ թվում՝ հումանիտար օգնությունն ապահովելու համար,

• խոր մտահոգություն են հայտնել Սիրիայում մարդասիրական օգնության ու միակողմանի պատժամիջոցների առնչությամբ, որոնք հակասում են մարդասիրական իրավունքին ու ՄԱԿ-ի կանոնադրությանը, ինչպես նաև Սիրիայի որոշ շրջանների նկատմամբ կիրառվող բացառություններին, որոնք կարող են նպաստել անջատողականության օրակարգին, միջազգային կազմակերպություններին կոչ են արել մարդասիրական օգնություն տրամադրելու թափանցիկ և բոլոր սիրիացիներին,

• ընդգծել են, որ սիրիական հակամարտությունը չունի ռազմական լուծում և կարող է լուծվել միայն ներքաղաքական գործընթացի միջոցով,

• նշելով, որ փախստականները և ներքին տեղահանված անձինք ունեն վերադառնալու և աջակցություն ստանալու իրավունք, շեշտել են նրանց կամավոր և անվտանգ վերադարձն ապահովելու անհրաժեշտությունը՝ միջազգային հանրությանը կոչ անելով համապատասխան օգնություն ցուցաբերելու

փախստականներին վերաբնակեցնելու և բնականոն կյանքի վերադարձնելու հարցում,

- դատապարտել են Սիրիայի վրա Իսրայելի ռազմական հարձակումները՝ այդ թվում՝ քաղաքացիական ենթակառուցվածքների վրա, դրանք համարելով միջազգային իրավունքի, միջազգային հումանիտար իրավունքի և Սիրիայի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության խախտում, ինչպես նաև տարածաշրջանում լարվածությունը մեծացնող գործոն,
- սիրիական հարցից զատ՝ ընդգծել են եռակողմ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը,
- պայմանավորվել են Աստանայի ձևաչափով հաջորդ հանդիպումն անցկացնել մինչև 2022 թ. տարեվերջ Ռուսաստանում[9]:
- Պաշտոնական հայտարարությունների հատկապես ընդգծված հատվածներն ի ցույց են դնում կողմերի միջև եղած խորքային և չհաղթահարված տարաձայնությունները նաև թեհրանյան բանակցություններից ունեցած ակնկալիքների համատեքստում: Այս առումով ակնհայտ է, որ արձանագրված խնդիրները հիմնականում պայմանավորված էին Թուրքիայի դիրքորոշմամբ, ընդ որում՝ ինչպես Սիրիայում, այնպես էլ Հարավային Կովկասում: Հատկապես երկու ենթատարածաշրջաններում ենթադրվող խնդիրների վերլուծության համատեքստում կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Աստանայի ձևաչափի մասնակից դերակատարների միջև սկզբունքային տարաձայնությունները վերաբերում են Սիրիայի հյուսիսային շրջաններին, որտեղ տեղակայված քրդական ուժերի դեմ թուրքական կողմը ծրագրում է նոր «հակաահաբեկչական» ռազմագործողություն իրականացնել: Հայտարարությունների տեքստերում արված շեշտադրումները թույլ են տալիս հավաստել, որ Մոսկվան ու Թեհրանն առայժմ չեն արտոնել Անկարայի նշված գործողությունը:

2. Ինչպես Սիրիայում, այնպես էլ Հարավային Կովկասում ծավալվող գործընթացների վերաբերյալ 3 տերությունների դիրքորոշումներում կան սկզբունքային տարաձայնություններ, և Իրանը հերթական անգամ ընդգծել է իր «կարմիր գծերը» ակնկալվող հնարավոր զարգացումներին ընդառաջ: Այս համատեքստում ուշագրավ է հատկապես Էրդողանի հետ հանդիպմանն Իրանի առաջնորդի շեշտադրումը՝ «Իրան-Հայաստան սահմանը հազարամյակների վաղեմություն ունեցող հաղորդակցական ճանապարհ է» (այսինքն՝ ի հակադրություն նրա, որ թյուրքական տարրը եկվոր է):

3. Հանդիպումների ընթացքում «3+3» ձևաչափի առաջմղման վերաբերյալ բովանդակային շեշտադրումների բացակայությունը (բացի թեմատիկ թվարկումից) փաստում է այն մասին, որ առնվազն ներկա շրջափուլում հարավկովկասյան տարածաշրջանում կողմերի միջև համագործակցության հնարավորությունը բավականաչափ ցածր մակարդակի վրա է: Բայց և այնպես, պայմանավորված տարածաշրջանային հնարավոր զարգացումներով, անշուշտ կանխատեսելի է նաև կողմերի միջև բազմաշերտ քաղաքական սակարկությունների հնարավորությունը:

- ***Պուտին-Էրդողան. Սոչիի հանդիպումը***

Ինչպես արդեն նշվեց, թեհրանյան հանդիպումները ոչ միայն չարդարացրին մասնակիցների հակասական ակնկալիքների զգալի մասը, այլև նոր՝ անհետաձգելի բանակցությունների օրակարգ ձևավորեցին, բայց արդեն ոչ եռակողմ ձևաչափով: Հատկապես իրանական դիրքորոշմամբ պայմանավորված խնդիրների մասին բավականաչափ ուղիղ և ուշագրավ գնահատական է զետեղվել թուրքական «Anadolu» պետական լրատվական գործակալության ռուսական բաժնում հրապարակված վերլուծականում. «Իրանը կրկին հիշեցրել է տարածաշրջանային անվտանգության կարևորագույն հարցերի շուրջ խնդիրներ ստեղծելու իր «ունակությունը»: Թեհրանը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ չի ցանկանում ընդունել կայունացման համապարփակ սցենարը: Իսլամական Հանրապետությունը պահպանել է իրեն բնորոշ դիրքորոշումը՝ բանակցությունների մյուս մասնակիցներից պահանջելով ամեն ինչ, բայց միաժամանակ չցանկանալով գնալ զիջումների»[10]:

Իրանական վերլուծական դաշտում ընդգծվել է Թեհրանում ուրվագծված՝ ռուս-թուրքական բանակցությունների առաջնահերթության հանգամանքը՝ պայմանավորված ինչպես աշխարհաքաղաքական իրողություններով, այնպես էլ երկու երկրների ներքին խնդիրներով: Այս տեսանկյունից առանձնահատուկ կերպով շեշտվել է, որ Մոսկվայի և Անկարայի ակնկալիքների տեսանկյունից Պուտին-Էրդողան երկկողմ հանդիպումը շատ ավելի կարևոր է, քան բուն Աստանայի գործընթացը: Նրանց շահերը որոշակիորեն համադրելի են ինչպես Սիրիայում, այնպես էլ հիմնականում ուկրաինական ճգնաժամով պայմանավորված իրողություններում, մասամբ՝ նաև Հարավային Կովկասում[11]: Ուստի միայն թեհրանյան բանակցությունները բավարար չեղան Ռուսաստանի և Թուրքիայի առջև ծառացած բազմաթիվ հարցեր քննարկելու համար: Ուստի Թեհրանից ընդամենը 17 օր անց երկու առաջնորդները հանդիպեցին Սոչիում: Առանձին հանդիպման նպատակը մի կողմից հենց առաջնային երկկողմ օրակարգերի առաջմղումն էր, մյուս կողմից, չի բացառվում, որոշ խնդրահարույց հարցերում նաև Իրանի դիրքորոշումը շրջանցելը: Վերջինն ակնհայտ էր, օրինակ, թեհրանյան բանակցությունների հարավկովկասյան թեմատիկայում, երբ Իրանի փաստացի առաջնորդը Ռուսաստանի և Թուրքիայի ղեկավարներին հիշեցրեց իրանական կողմի «կարմիր գծերը»:

Օգոստոսի 5-ին Սոչիում կայացած Պուտին-Էրդողան հանդիպումը ևս, ըստ էության, բավականա-

չափ տարողունակ էր. բանակցությունները ձգվել են ավելի քան 4 ժամ: Թուրքական պատվիրակության պատկառելի կազմից՝ (ուժային, հետախուզական, ֆինանսատնտեսական, տրանսպորտային ոլորտների պատասխանատուներ) ընդհանուր մթնոլորտը և հանդիպման մասին բավականաչափ սուղ տեղեկատվության տարածումից կարելի է ենթադրել զգալի ծավալով ստվերային պայմանավորվածությունների հնարավորության մասին: Ինչպես և ակնկալվում էր, կողմերը քննարկել են երկկողմ օրակարգի ամենաառանցքային հարցերը՝ առևտուր, էներգետիկա, տրանսպորտ, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, ֆինանսներ, զբոսաշրջություն, շինարարություն: Միջազգային և տարածաշրջանային խնդիրներից նշվել է ուկրաինական ճգնաժամին, «հացահատիկային» միջանցքի շուրջ Ստամբուլի փաթեթային գործարքին, սիրիական և լիբիական հակամարտություններին անդրադարձների մասին: Նման ընդգրկուն օրակարգով տևական բանակցություններից հետո երկու առաջնորդները բավարարվեցին ընդամենը շատ սեղմ ամփոփիչ հայտարարությամբ[12], ինչը նաև զգալի թվով հարցերի և ենթադրությունների տեղիք է տալիս, հատկապես հանդիպման կարևորության վերաբերյալ դրան նախընթաց Էրդողանի ամպագորգոռ գնահատականի համատեքստում. «Եվ այս հարցերի հետ մեկտեղ այսօր աշխարհը աչքը սևեռել է Սոչիին՝ ինչ են անելու Սոչիում, ինչով են զբաղվելու, ինչ են քննարկելու: Հավանաբար, (աշխարհը) ուշադիր հետևում է մեր հանդիպմանը Սոչիում: Եվ մեր հանդիպումից հետո, հավանաբար, լավագույն պատասխանը կուղարկվի այս շրջանակներին, այս անհատներին»[13]:

Վերոնշյալի համատեքստում բավականաչափ «խոսուն» է հայտարարության տեքստում զետեղված հետևյալ ձևակերպումը. «Տարածաշրջանային հարցերի առնչությամբ ղեկավարներն ընդգծել են Ռուսաստանի և Թուրքիայի միջև անկեղծ և վստահելի հարաբերությունների կարևորությունը՝ հասնելու տարածաշրջանային և միջազգային կայունության»[14]: Գուցե նաև հենց այս մտքի միջոցով են ակնարկվում երկու կողմերի հետաքրքրությունների շրջանակում գտնվող այնպիսի հարցեր, որոնց մասին ուղղակի արձանագրում չկա տեքստում: Դրանց թվում են, բնականաբար, Հարավային Կովկասին առնչվող հարցերը, արցախյան հիմնախնդիրը, որի շրջանակում վերջին ռազմական լարվածությունը Բերձորի հատվածում ադրբեջանական կողմից հրահրվել էր Սոչիի հանդիպումից ընդամենն օրեր առաջ: Ուստի այս խնդրի և ընդհանրապես հարավկովկասյան զարգացումների շուրջ հատուկ շեշտադրումների բացակայությունն առնվազն ստվերային քննարկումների վերաբերյալ ենթադրությունների հիմքեր է ստեղծում, մանավանդ այն դեպքում, երբ դեռ բանակցություններից առաջ հանդիպման օրակարգում հայ-ադրբեջանական թեմատիկայի ընդգրկման մասին նշվել էր երկու կողմից էլ, ընդ

Նախագահներ Ռաիսիի և Պուտինի առանձնազրույցը Թեհրանում

որում՝ նաև տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման հարցի ներառմամբ: Բացի այդ՝ Ռուսաստանն ու Թուրքիան արցախյան հիմնախնդրի շրջանակում ունեն հրադադարի ռեժիմը վերահսկելու հատուկ գործառույթ՝ ի դեմս Աղդամում տեղակայված մոնիթորինգային կենտրոնի: Հետևաբար արցախյան հիմնախնդրի, հարավկովկասյան զարգացումների փաստացի հրապարակային «անտեսումը» չի բացառում դրանց առնչվող ստվերային սակարկությունների հնարավորությունը, հատկապես ավելի վաղ Թեհրանում իրանական կողմի արտահայտած կտրուկ դիրքորոշման համատեքստում:

Ամփոփելով նշենք, որ Սոչիի բանակցությունների ընդհանուր արդյունքների ու հնարավոր նոր պայմանավորվածությունների իրական պատկերը, նաև թեհրանյան բացահայտ հակասությունների պայմաններում, կարող է ավելի տեսանելի դառնալ առաջիկա զարգացումների ընթացքում՝ ինչպես գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում, այնպես էլ, մասնավորապես, արցախյան ռազմական թատերաբեմում և բանակցային հարթակներում: ■

Ծանոթագրություն

1. Այս մասին առավել մանրամասն տես «Դրոշակ», Եր., 2022, թիվ 7 (1665):
2. Այս մասին առավել մանրամասն տես նույն տեղում:
3. Տես ایرنا رئیسی: باید با تروریسم با هر اسمی مبارزه کرد - ایرنا (irna.ir) (մուտք՝ 05.08.2022):
4. Տես Türkiye ile İran'dan ortak bildiri - Son Dakika Haberleri (trthaber.com) (մուտք՝ 05.08.2022):
5. حمله نظامی به شمال سوریه به ضرر ترکیه،سوریه و منطقه و به نفع تروریست‌ها خواهد بود - ایسنا (isna.ir) (մուտք՝ 05.08.2022).
6. Տե՛ս تاکید بر استمرار روند توسعه مناسبات راهبردی تهران و مسکو (president.ir) (մուտք՝ 05.08.2022):
7. Տե՛ս ایرنا - آمریکایی‌ها از منطقه شرق فرات در سوریه باید بیرون رانده شوند (irna.ir) (մուտք՝ 05.08.2022):
8. Տե՛ս Встреча с Президентом Турции Реджепом Тайипом Эрдоганом • Президент России (kremlin.ru) (մուտք՝ 05.08.2022):
9. Տե՛ս بیانیه مشترک رؤسای جمهوری اسلامی ایران، فدراسیون روسیه و جمهوری ترکیه (president.ir) (մուտք՝ 05.08.2022):
10. АНАЛИТИКА - Трехсторонний саммит в Тегеране: итоги и последствия (aa.com.tr) (մուտք՝ 05.08/2022).
11. Տե՛ս ضرورت تداوم هوشمندی در فردای آستانه (sharghdaily.com) (մուտք՝ 05.08.2022):
12. Տե՛ս Совместное заявление • Президент России (kremlin.ru) (մուտք՝ 05.08.2022):
13. Беседа с Президентом Турции Реджепом Тайипом Эрдоганом • Президент России (kremlin.ru) (մուտք՝ 05.08.2022).
14. Совместное заявление • Президент России (kremlin.ru) (մուտք՝ 05.08.2022).

«Թեհրան 22». եռակողմ հանդիպման ամփոփում

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ ի իրանագիտության ամբիոնի աշխատակից

2022 թ. հուլիսի 19-ին «Թեհրան 43»-ին կարծես թե փոխարինելու եկավ «Թեհրան 22»-ը: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հակահիտլերյան կոալիցիայի երեք առաջնորդների հանդիպումը հենց Թեհրանում նախասկիզբ հանդիսացավ Յալթայի համաժողովի համար: 2022 թ. ևս, եթե ոչ համաշխարհային, ապա գոնե տարածաշրջանային մակարդակով ընթանում է պատերազմ, որում նոր շրջադարձեր են նախատեսվում, ինչը նշանակում է, որ հավանական հաղթող երկրների ղեկավարները քննարկել են աշխարհի ապագան: Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի առաջնորդների միջև լայնածավալ բանակցություններ առաջին անգամ անցկացվել էին 5 տարի առաջ Աստանայում, և թեհրանյան հանդիպումը նման ձևաչափով երկրորդն էր:

Հանդիպման շրջանակներում երկկողմ և եռակողմ բանակցությունների ընթացքում կողմերը քննարկել են տարաբնույթ խնդիրներ: Մասնավորապես, ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպման ընթացքում Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ա. Խամենեին առաջ է քաշել հետևյալ կարևոր թեզերը.

- Համաշխարհային իրադարձությունները վկայում են, որ Իրանն ու Ռուսաստանը ընդլայնվող և փոխադարձ համագործակցության կարիք ունեն: Երկու երկրների միջև բազմաթիվ հուշագրեր և համաձայնագրեր, այդ թվում՝ նավթագազային ոլորտում, պետք է ավարտին հասցվեն և կյանքի կոչվեն:
- ՆԱՏՕ-ն վտանգավոր է, և եթե չլիներ ուկրաինական պատերազմը, ապա նա ագրեսիա կսանձազերծեր Ղրիմում:
- ԱՄՆ-ն և Արևմուտքը ավելի են թուլացել, և, չնայած հսկայական ջանքերին ու ծախսերին, նրանց քաղաքականության ազդեցության շրջանակը հարավկովկասյան տարածաշրջանում, այդ թվում՝ Սիրիայում, Իրաքում, Լիբանանում և Պաղեստինում, էապես սեղմվել է:
- Սիրիայի հարցում մեկ այլ կարևոր խնդիր է ամերիկացիների կողմից Եփրատի արևելյան ափի բերրի և նավթաբեր տարածքների օկուպացումը, և այդ հարցը պետք է լուծվի տարածաշրջանից նրանց վտարումով:
- Իսլամական Հանրապետությունը չի հանդուրժի քաղաքականություն և ծրագրեր, որոնք կհանգեցնեն Իրանի և Հայաստանի սահմանների փակմանը:
- Իրանն աջակցում է երկու երկրների առևտրաշրջանառության մեջ ազգային արժույթներ և դոլարին փոխարինող այլ արժույթներ օգտագործելու քաղաքականությանը: Իր հերթին Վ. Պուտինը նշել է, որ՝
- ոչ ոք չի ողջունում պատերազմը և հասարակ մարդկանց մահը, սակայն Արևմուտքի պահվածքը Ռուսաստանին այլընտրանք չի թողել, իսկ «գեներալ Սոլեյմանիի սպանությունը ԱՄՆ-ի վայրագությունների ևս մեկ օրինակ է»,

- Ռուսաստանի Դաշնության դեմ արևմտյան պատժամիջոցները վնասակար են Արևմուտքի համար, ինչի հետևանքով խնդիրներ են առաջանում, ինչպիսիք են նավթի գների աճը և պարենային մատակարարման ճգնաժամը,
- Ռուսաստանի Դաշնությունը և Իրանը մշակում են երկու երկրների հաշվարկներում ազգային արժույթների օգտագործման նոր ուղիներ,
- Եփրատի արևելքում գտնվող տարածքը պետք է լինի Սիրիայի զինված ուժերի վերահսկողության տակ,
- Իրանն ու Ռուսաստանը Սիրիայում համատեղ պայքարում են ահաբեկչության դեմ, իսկ ռազմական ոլորտում նաև փորձում են զարգացնել երկու երկրների միջև համագործակցությունը, ինչպես նաև Չինաստանի հետ եռակողմ համագործակցությունն ու զորավարժությունները:

Անդրադառնալով եռակողմ հանդիպմանը՝ Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը նշել է.

- Թուրքիան նպատակ ունի զարգացնելու համագործակցությունը Իրանի հետ: Թուրք առաջնորդը հիշեցրել է, որ կողմերը նախկինում սահմանել են տարեկան 30 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառության նպատակ: «Ցավոք, համաճարակի պատճառով այս ցուցանիշը դեռ 7.5 միլիարդ դոլարի մակարդակում է: Թուրքիան պատրաստ է ակտիվ համագործակցության Իրանի հետ, այդ թվում՝ պաշտպանական ոլորտում»,- հավելել է նա:
- Իրենք շարունակելու են պայքարել ահաբեկչական կազմակերպությունների դեմ և ակնկալում են, որ Ռուսաստանն ու Իրանը կուղեկցեն Թուրքիային

այս պայքարում, և հենց ահաբեկչությունն է սպառնում Սիրիայի տարածքային ամբողջականությանը:

• Թուրքիան, մաքրելով իր տարածքի հարավային հատվածը, փորձում է օգնել Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանմանը, և եթե այսօր Իդլիբում խաղաղություն է, դա Աստանայի ձևաչափի հանդիպումների շնորհիվ է:

Ամփոփելով «Թեհրան 22»-ի արդյունքները՝ Իրանի նախագահ Է. Ռաիսին «Աստանայի գործընթացի» երաշխավոր երկրների ղեկավարների գագաթնաժողովին հաջորդած մամլո ասուլիսում նշել է.

• Արևելյան Եփրատում ամերիկացիների ներկայությունն արդարացված չէ, և նրանք պետք է հեռանան այնտեղից:

• Գեներալ Սոլեյմանին ահաբեկչության դեմ պայքարի խորհրդանիշն էր:

• Այսօր ահաբեկչական շարժումները սպառնում են տարածաշրջանի անվտանգությանը, և Իրանը հաջող պայքար է մղում դրա դեմ:

• Սիրիայի բոլոր հատվածները պետք է լինեն Սիրիայի վերահսկողության տակ:

• Սիրիայի որոշ հատվածներում ահաբեկիչների ներկայությանը հակազդելը երկրների կողմից լուրջ հանձնառություն է պահանջում:

Վերլուծաբանների մեծամասնությունը այն կարծիքին է, որ Թուրքիան այժմ Արևմուտքից անկախ քաղաքականություն է վարում, ինչը մեծապես նյարդայնացնում է Արևմուտքին: Այդ քաղաքականությունն ուղղված է ավելի քան 40 տարի պատժամիջոցների տակ գտնվող Իրանի հետ համագործակցությանը, Իրանի և Ռուսաստանի Դաշնության հետ առևտրաշրջանառության ծավալների մեծացմանը:

Մյուս կողմից՝ Ռուսաստանում բազմաթիվ փորձագետներ այժմ քննարկում են իրանական անօդաչու սարքերի թեման: Իրոք, Իրանը դրանց ստեղծման հսկայական փորձ ունի, և Ռուսաստանին անհրաժեշտ են այդ անօդաչու սարքերը: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանն ինքն է արտադրում անօդաչու սարքեր, բայց իրանական անօդաչուները անգնահատելի աջակցություն կցուցաբերեին ռուսական բանակին: Մինչդեռ Իրանը արժույթի կարիք ունի:

«Թեհրան 22»-ը միանշանակ չընդունվեց նաև Արևմուտքի կողմից: Հատկանշական է, որ հանդիպումը տեղի ունեցավ ԱՄՆ նախագահ Ջ. Բայդենի՝ Պարսից ծոցի երկրներ կատարած այցից հետո: Ասվածի համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Պարսից ծոցի որոշ երկրներ ձգտում են խորացնելու համագործակցությունը Իրանի և Ռուսաստանի հետ: Ըստ էության, արևմտյան երկրները կորցնում են իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում:

Քննարկումներ տեղի ունեցան նաև հայ-իրանական սահմանների վերաբերյալ: Հատկապես ուշադրության է արժանի Իրանի հոգևոր առաջնորդ

Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի և Վլ. Պուտինի առանձնազրույցը Թեհրանում: 19.07.2022

Ա. Խամենեիի հայտարարությունը առ այն, որ Իրանը չի հանդուրժի հայ-իրանական սահմանի փակումը կամ դրա շահագործման համար արգելքների ստեղծումը: Հատկանշական է, որ Թուրքիայի նախագահի հետ հանդիպման ժամանակ առաջ տանելով վերոնշյալ թեզը՝ Ա. Խամենեին հավելել էր, որ հայ-իրանական սահմանը հազարամյակների պատմություն ունի, ուստի իրանական կողմը կարևորում է դրա անվտանգությունն ու անարգել շահագործումը: Ա. Խամենեին, ըստ էության, իրանական լեզվամտածողությանը համապատասխան, Թուրքիային և Ադրբեջանին հասկացրեց, որ հայ-իրանական սահմանն ավելի հին է, քան նրանց մտացածին պատմությունը, և այն կեղծ օրակարգը, որը նրանք փորձում են առաջ տանել տարածաշրջանում, դատապարտված է կործանման: ■

Ալի Խամենեիի և Ռ. Էրդողանի առանձնազրույցը Թեհրանում: 19.07.2022 թ.

Քրդական գործոնը Իրան-Թուրքիա հարաբերություններում

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրան-Թուրքիա բազմակողմ հարաբերություններում հատկապես մեծ նշանակություն ունի քրդական գործոնը, որը միավորում է այդ երկու պետություններին ընդդեմ մեկ ընդհանուր գլխացավանքի: Այս առումով հետաքրքիր էին Իրաքյան Քրդստանում 2017 թ. անցկացված հանրաքվեի համատեքստում նրանց համատեղ հայտարարություններն ու քննարկվող օրակարգային խնդիրները:

Քրդական խնդրի համընդհանուր ակտիվացման և Սիրիայում քրդերի որոշակի հաջողությունների պայմաններում կան իրողություններ, որոնք թեկուզ կարճ ժամանակով, բայց հնարավոր են դարձնում Թուրքիա-Իրան համագործակցությունը: Բացի այդ՝ քրդական իրողությունները ճիշտ ընկալելու համար պետք է հասկանալ, թե ինչ քաղաքական կառույցի ու առաջնորդի ազդեցության տակ է քրդական այս կամ այն տարածքը: Եվ եթե անգամ ներկա փուլում, սիրիական զարգացումներով պայմանավորված, PKK-ի տեսանկյունից կա ընդհանուր մոտեցում, Անկարայի ու Թեհրանի դիրքորոշումները չեն կարող նույնը լինել Քրդստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) ու Քրդստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) վերաբերյալ. առաջինը համագործակցում է Թուրքիայի հետ, իսկ երկրորդը հովանավորվում է Իրանից[1]: Գաղտնիք չէ, որ և՛ ՔԴԿ-ն, և՛ ՔՀՄ-ն Քրդստանի տարածաշրջանային կառավարության մաս են կազմում, և դրանց միջև կան բազում խնդիրներ: Հենց այդ պատճառով կողմերից և ոչ մեկը չի ցանկանա զոհաբերել իր շահերը Իրաքյան Քրդստանում՝ օգնելու մյուսին վերահսկողության տակ պահելու իր քրդական բնակչությունը: Ու թեև Իրանն ու Թուրքիան հեռու են հուսալի ընկերներ լինելուց, տարիների ընթացքում նրանք ցուցաբերել են պրագմատիկ մոտեցում փոխշահավետ հարցերի շուրջ աշխատելու գործում:

Այս համատեքստում կարևոր է հասկանալ, որ թեև քրդական գործոնը որոշակի պատուհան է բացում Իրան-Թուրքիա համագործակցության համար և ընդհանուր շահեր է հետապնդում, բայց և այնպես, այդ ընդհանուր շահերը միանշանակ չեն, ինչը պայմանավորված է Իրանի քրդերի հավատարմությամբ իրանական իշխանություններին, ինչի հակառակ պատկերը այսօր տեսնում ենք Թուրքիայում: Իրանը ստեղծել է մի այնպիսի մթնոլորտ, որում թվում է, թե քրդերը հավասար ազգ են և օգտվում են բոլոր այն հնարավորություններից, ինչ իրանցիները: Իրանը կարողացել է խուսափել քրդական կոմպակտ բնակչությունից մեկ տարածքում և ցրել է քրդերին երկրի տարբեր հատվածներ՝ Քերմանշահից մինչև Սանամդաջ, Ատրպատականից դեպի Խորասանի խորքերը և այլն: Բայց չմոռանանք, որ քրդերի վրա մեծ ազդեցություն ունեն արևմտյան ուժերը, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան, նաև Ռուսաստանը, որոնք Թուրքիայի տարածքում ստեղծել

են մի շարք թաքնված բջիջներ, որոնք հարկ եղած ժամանակ հակահիշխանական տրամադրություններ են հրահրում:

Հարկ է նշել, որ ԻԻՀ-ն կարողանում է իր պետության ներսում հավասարակշռել քրդական ազգայնամոլական շարժումներն ու թուրքերի պանթյուրքիստական նկրտումները, թուրքերին ու քրդերին հավաքելով Ուրմիայի տարածքում՝ խժդժություններ է հրահրում նրանց միջև ու ստիպում, որ պայքարեն միմյանց դեմ՝ այդպիսով նրանց հեռու պահելով հակահիշխանական գործողություններից:

Իրան-Թուրքիա հավերժական մրցապայքարը հետաքրքիր է դիտարկել սիրիական խնդրի համատեքստում, որը, կարելի է ասել, արաբական աշխարհի ամենաբարդ ճգնաժամերից է և շարունակվում է արդեն մի քանի տարի: Իրանը և Թուրքիան՝ որպես տարածաշրջանային երկու առաջատար երկրներ, ի սկզբանե ներգրավվեցին ճգնաժամի մեջ և, նպատակ ունենալով փոխելու Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզն ու ուժերի հավասարակշռությունը, փորձեցին վերահսկել իրավիճակը Սիրիայում: Այդ ուղղությամբ նրանց ջանքերը հանգեցրին անսպասելի մրցակցության՝ հիմնված գաղափարական և ինքնության փոփոխականների վրա:

Իրանի համար սիրիական հակամարտությունը դարձել է բոլոր հակառակորդների դեմ գաղափարախոսական, կրոնական և աշխարհաքաղաքական պայքարի կիզակետ: Աշխարհում քիչ երկրներ կան, որոնք ավելի շատ բան ունեն կորցնելու Սիրիայում Բաշար Ասադի կառավարման տապալման հետևանքով, քան նրա միակ տարածաշրջանային դաշնակից Իրանը: Թեև Իրանն իր միջուկային նկրտումների պատճառով ենթարկվում է դաժան տնտեսական էմբարգոների, բայց նա ֆինանսական և ռազմական անգնահատելի օգնություն է ցուցաբերում Բ. Ասադի իշխանության պահպանման համար: Իրանի համար այս հակամարտությունը

կարևոր է ոչ միայն Դամասկոսի նկատմամբ վերահսկողություն սահմանելու առումով, այլև որ հարմար գործիք է պայքարելու Իսրայելի, ռադիկալ ջիհադական սուննիների, Պարսից ծոցի երկրների իշխանությունների և ԱՄՆ-ի դեմ:

Իրանա-սիրիական դաշինքը ոչ այնքան երկու երկրների օրգանական կապ է, որքան երկու ավտորիտար վարչակարգերի միջև ռազմավարական փոխհամագործակցություն: Սիրիան ոչ միայն համարվում է Իրանի միակ դաշնակիցը՝ սկսած 1979 թ. հեղափոխությունից (և՛ Հաֆեզ Ասադի, և՛ նրա որդի Բաշար Ասադի օրոք), այլև աշխարհագրորեն ապահովում է Թեհրանի կապը լիբանանյան շիական «Հեզբոլլահ» խմբավորման հետ, որի ստեղծումը դարձել էր հետհեղափոխական Իրանի գլխավոր ձեռքբերումներից մեկը: Սիրիան և «Հեզբոլլահ»-ը ԱՄՆ-ի և Իսրայելի իրանական «դիմադրության առանցքի» կարևոր բաղադրիչներն են, և «Հեզբոլլահ»-ի ունեցած զինամթերքի մեծ մասը Իրանը փոխանցում է Դամասկոսի օդանավակայանով: Այդ «կամուրջը», առանց Բաշար Ասադի, կփակվի:

Հարկ է նշել, որ Սիրիայի հետ հարաբերություններում Թեհրանի քաղաքականությունը որոշում է ոչ թե իրանական ԱԳՆ-ն, այլ ԻՀՊԿ-ի «Ղոդս» էլիտար ստորաբաժանումը: Սիրիայի նախկին վարչապետ Ռիադ Հիջաբը, որը փախել էր երկրից 2012 թ. օգոստոսին, նշել է, որ Սիրիան լցված է իրանական վարչակարգով, երկիրը կառավարում է ոչ թե Բաշար Ասադը, այլ «Ղոդսի» այդ ժամանակվա գլխավոր հրամանատար Ղասեմ Սուլեյմանին[2]:

Քրդական խնդրի շուրջ իրադարձությունները զարգացան արդեն 2022 թ. հուլիսի կեսերին, երբ Հյուսիսային Իրաքի Դոհուկ նահանգի «Զախո» զբոսաշրջային հանգստավայրում թուրքական հրետակոծության հետևանքով 9 խաղաղ բնակիչներ զոհվեցին, ևս 23-ը վիրավորվեցին: Դրան հետևեց այն, որ Բաղդադը Անկարայից ետ կանչեց իր երկրի պաշտոնական հավատարմատարին:

Չնայած համացանցում տարածված հրետակոծության տեսահոլովակներին՝ պաշտոնական Թուրքիան ժխտում է իր դերակատարումը տեղի ունեցածում: Վերջինս իր հերթին կատարվածի ամբողջ պատասխանատվությունը բարդում է քուրդ զինյալ ահաբեկիչների վրա և ԱԳՆ-ի մակարդակով կոչ է արել Իրաքյան Քրդստանի պաշտոնատար անձանց համագործակցելու միմյանց հետ՝ դեպքերի իրական մեղավորներին գտնելու և պատժելու համար:

Վերոնշյալ իրադարձությունների առնչությամբ չուշացավ նաև Իրանի արձագանքը: Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Նասեր Քանանին քննադատեց իրաքյան «Զախո» հանգստավայրում կատարված հրետակոծությունը: Ն. Քանանին, ցավակցական խոսքեր հղելով զոհվածների ընտանիքներին, Իրաքի իշխանություններին և ժողովրդին, ընդգծեց Իրանի Իսլամական Հանրապետության լիակատար աջակցությունը Իրաքում կայունության և անվտանգության ապահովման հարցում և հավելեց, որ Իրաքի անվտանգությունը համարում է Իրանի անվտանգությունը և պատրաստ է ցուցաբերելու ցանկացած օգնություն[3]:

Դեպքերի տրամաբանական շարունակությունը եղան անհնազանդության ակցիաները Իրաքում Թուրքիայի դեսպանատան առջև, ի հետևանք որի անգամ իրաքցիները հարձակվեցին դեսպանատան վրա: Քերբալայում որպես թուրքական օկուպացիայի դեմ բողոք այրեցին «սատանիստների դրոշը»[4]:

Նշված իրադարձություններում հետաքրքրականն այն էր, որ մինչ Իրաքի արաբները բոյկոտում էին, դրոշ այրում և այլ ձևերով արտահայտում իրենց բողոքը թուրքական իշխանություններին, քրդերն այդ ընթացքում մարտի դաշտում պայքարում էին զենքը ձեռքներին:

Ի պատասխան հնչող մեղադրանքների՝ Թուրքիան վերսկսել է Սիրիայի քրդերի դեմ ռազմական նոր հարձակման իր սպառնալիքները: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Սիրիայի հյուսիսում գտնվող Մանբիջ և Թալ Ռիֆաաթ շրջաններում քրդական ուժերի դեմ քայլեր ձեռնարկելու ծրագրերի մասին հայտարարելուց հետո՝ հուլիսի 21-ին, Թեհրանում միացավ եռակողմ գագաթնաժողովին՝ աջակցություն փնտրելով: Մինչ Իրանն ու Ռուսաստանը՝ սիրիական հակամարտության մյուս երկու արտաքին հիմնական խաղացողները, սանձում էին նրան, Թուրքիան պնդում էր, որ Սիրիայում նոր արշավի համար որևէ մեկի «թույլտվության» կարիքը չունի:

Գագաթնաժողովում ստորագրված հռչակագրով կողմերը խոստացան համագործակցել Սիրիայի հյուսիսում «անհատներին և ահաբեկչական խմբավորումներին վերացնելու» և ցանկացած անջատողական հավակնության դեմն առնելու համար:

Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը, որոնք սիրիական հակամարտությունում երկար ժամանակ աջակցել են հակառակ կողմերի, երբևէ հստակ որակում չեն տվել, թե, ըստ իրենց, ով է «ահաբեկիչը»[5]:

Հետաքրքրական էր նաև Ռ. Թ. Էրդողանի



Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի և Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հանդիպումը

խորհրդական Այհան Օգանի թվիթերյան գրառումը, որում մասնավորապես նշվում էր, որ Թուրքիան, իրաքյան Մոսուլ և սիրիական Հալեպ քաղաքների վրա վերահսկողություն սահմանելով, կարող է ստեղծել նոր անվտանգային գոտի: Նա ընդգծել է, որ շուրջ 4 միլիոն սիրիացի բնակվում է Իդլիբում՝ Թուրքիայի պաշտպանության ներքո, շուրջ 2 միլիոն սիրիացի՝ Թուրքիայի անվտանգ շրջաններում, իսկ շուրջ 3.7 միլիոն սիրիացի համարվում է փախստական: Հաշվի առնելով նշված թվերը՝ Ա. Օգանը հայտարարել է, որ Թուրքիան ավելի շատ ձայնի իրավունք ունի Սիրիայում, քան Բ. Ասադի ընտանիքը: Խորհրդականը զգուշացրել է, որ եթե շարունակվի Թուրքիայի անվտանգության ապահովմանն ուղղված քայլերը պրովոկացիաների ենթարկելը, ապա իրենց ոչինչ չի մնա անելու, քան Հալեպից դեպի Մոսուլ անվտանգային նոր գոտի ձևավորելը[6]:

Սիրիական հակամարտության սրման համատեքստում Անկարայում համատեղ ասուլիս են տվել նաև Իրանի և Թուրքիայի արտգործնախարարներ Հոսեյն Ամիրաբդոլլահյանը և Մևլութ Չավուշօղլուն:

Իրանի ԱԳ նախարարն իր ասուլիսում դեմ չարտահայտվեց Սիրիայում քուրդ զինյալների դեմ Թուրքիայի հնարավոր ռազմական գործողություններին, բայց միաժամանակ կոչ արեց «երկխոսության և խաղաղ» մեթոդների կիրառման: Այս խոսքերից հետո Թուրքիայում Իրանի դեսպան Մոհամմադ Ֆարազմանդը «Tasnim» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ այդ խոսքերը Իրանի «անուղղակի կանաչ լույսը» չեն Սիրիայի հյուսիսում Թուրքիայի գործողությունների համար, և Թուրքիայի մտահոգությունները «պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով»: Նա ընդգծել է, որ այդ հարցում Իրանի տեսակետները հստակ են ու կայուն, և թուրք ընկերները դա գիտեն:

Անցած մի քանի շաբաթների ընթացքում Թեհրանի և Անկարայի հարաբերությունների վրա ազդել են նաև Իսրայելի կառավարության նախազգուշացումը իր քաղաքացիների՝ Թուրքիա մեկնելու վերաբերյալ և Թուրքիայում ութ մարդու ձերբակալության մասին լուրերը: Նշվում էր, որ ձերբակալվածները «մարդասպանների թիմ» են՝ կապված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետ, որը Ստամբուլում իրականացնում էր հետապնդումներ Իսրայելի քաղաքացիների նկատմամբ:

Իսրայելի վարչապետ Յաիր Լապիդը շնորհակալություն է հայտնել Թուրքիայի կառավարությանը՝ իսրայելցի քաղաքացիների սպանության ծրագիրը խափանելու և «իրանական ահաբեկիչների կողմից Թուրքիայի ազգային ինքնիշխանության կոպիտ խախտումները» կանխելու համար, սակայն Իրանի և Թուրքիայի արտգործնախարարներն իրենց ասուլիսում չեն նշել այդ մասին[7]:

2016 թ. ամռանից ի վեր Թուրքիան չորս գործողություն է իրականացրել Սիրիայում, վերջինը՝ 2019 թ. հոկտեմբերին, և Սիրիայի հետ սահմանի երկայնքով 30 կմ խորությամբ բուֆերային գոտի է ստեղծել:

Այսպիսով՝ քրդական խնդիրը մշտապես եղել և շարունակելու է մնալ Իրան-Թուրքիա հարաբերություններում և՛ համագործակցության, և՛ մրցակցության գլխավոր գործոններից մեկը: Կարելի է նկատել, որ կողմերը մշտապես շահարկելու են այս ճգնաժամը՝ միմյանց հակակշռելու, զսպելու և հարկ եղած դեպքում նաև ճնշման մեխանիզմներ կիրառելու նպատակներով: Իրանի համար Սիրիան տարածաշրջանում գերիշխանության լծակներ կենտրոնացնելու գլխավոր օղակներից է, և պատահական չէ, որ իրանական կողմը բազմիցս հայտարարել է, որ կայունության պահպանումը Սիրիայում առաջնահերթ է իր երկրի անվտանգության ապահովման համար: Այս համատեքստում կարելի է եզրակացնել, որ, չնայած իր բացահայտ սպառնալիքներին և որոշակի գործողություններին, Թուրքիան չի հանդգնի մեծածավալ գործողություններ սկսել՝ հաշվի առնելով Իրանի հնարավոր միջամտությունը: ■

Հղումներ

1. Տես Александров А., Об ирано-турецких отношениях на современном этапе, Институт Ближнего Востока, http://www.iimes.ru/?p=24340 (մուտք՝ 17.04.2021):
2. Տես Sadjadpour K., Иран — единственный союзник Сирии в регионе, https://carnegie.ru/2014/06/09/ru-pub-55965?fbclid=IwAR25wWKpAQ8B73aeBKixPACcHUeD5Ziwx4mIIif4hF4EB_T-0V_n0k-kxHyU (մուտք՝ 18.04.2021):
3. Տես https://t.me/parstodayrussian/104820 (մուտք՝ 31.07.2022):
4. Տես https://t.me/caduser/2004 (մուտք՝ 31.07.2022):
5. Տես https://www.al-monitor.com/originals/2022/07/will-turkey-attack-syria-kurds-without-nod-russia-and-iran?fbclid=IwAR2nv6vV8p5BUfNlKdFNe3USJm1PqTJi8eJRhfMXb-76cjX65MwVzuXecLs (մուտք՝ 31.07.2022):
6. Տես https://t.me/parstodayrussian/105012 (մուտք՝ 31.07.2022):
7. Տես https://www.bbc.com/persian/world-61962594?fbclid=IwAR2iTlKnN_SdKYklJFXxEihK6Q_FyhA_yUBnPk-5b9c9AdN07vT7o9-ih2GU (մուտք՝ 31.07.2022):

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի այցը Մերձավոր Արևելք

Սոնա Տոնիկյան
Արաբագետ

Բայդենի այցը... Արդյոք այն փոփոխությո՞ւն էր Մերձավոր Արևելքի նկատմամբ Վաշինգտոնի քաղաքականության մեջ:

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը, չսպասելով Իսրայելի առաջնորդների հետ իր հանդիպմանը, Լոդի միջազգային օդանավակայան ոտք դնելուն պես հայտարարեց, որ սիոնիստ լինելու համար իրեն պետք չէ հրեա լինել:

Այցի ընթացքում Բայդենը վերահաստատեց ԱՄՆ իշխող կառույցի ավանդական դիրքորոշումը՝ հավատարիմ մնալով Իսրայելի անվտանգության ապահովման սկզբունքին, պահպանելով նրա ռազմական գերակայությունը և թույլ չտալով Իրանին ձեռք բերել միջուկային զենք ու դիմակայել իր գործունեությանը տարածաշրջանում:

Այս տողերն ամփոփում էին Երուսաղեմի հռչակագիրը, որը ստորագրվել էր Իսրայելի և Միացյալ Նահանգների միջև՝ պաղեստինցիների և իսրայելցիների միջև սառեցված քաղաքական կարգավորմանն արագ անցմամբ:

Բայդենը չմանրամասնեց ցանկալի կարգավորման մասին, բավարարվեց երկու պետությունների հակամարտության կարգավորմանն աջակցելով, որպեսզի առաջ շարժվի դեպի իրականություն, որտեղ իսրայելցիներն ու պաղեստինցիները կարող են ունենալ անվտանգության և ազատության հավասար հնարավորություններ:

Բայդենը փոխարինեց Պաղեստինի ժողովրդի ինքնորոշման օրինական իրավունքի հարցը կենսական այլ հարցերով, որոնք կարող են ծառայել որպես քաղաքական ծրագիր, քանի որ նա խոսում էր ամերիկյան ֆինանսական աջակցության և խոսքի ազատության իրավունքի մասին:

Սառը ընդունելություն

Այնուամենայնիվ, Բայդենի այցը Իսրայել չի կարող դիտարկվել տարածաշրջանային վերջին տեղաշարժերից անկախ:

Պարսից ծոցում՝ Ջիդայում, Բայդենին ընդունեցին սառնությամբ, որը չմեղմվեց ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի միջև ստորագրված 18 պայմանագրերով: Տարածվել է երկու կողմերի համատեղ հայտարարությունը, որն իր ձևով և բովանդակությամբ ընդհանուր է. հաստատում է երկու կողմերի պատրաստակամությունը՝ նպաստելու համաշխարհային էներգետիկ շուկաների կայունությանը, և ամերիկյան հանձնառությունը՝ աջակցելու թագավորության անվտանգության ապահովմանը և պաշտպանելու նրա տարածքը:

ԱՄՆ նախագահի այցը Ջիդդա, ուր նա ժամանել էր անմիջապես Իսրայելից, ավարտվեց Պարսից

ծոցի համագործակցության խորհրդի երկրների և Եգիպտոսի, Հորդանանի ու Իրաքի ղեկավարների հետ ամերիկյան գագաթնաժողովով, որի ժամանակ Բայդենը լսեց Պաղեստինի հարցին քաղաքական լուծում գտնելու անհրաժեշտության վերաբերյալ արաբների միասնական դիրքորոշումը:

Բայդենը, որը ծանրաբեռնված էր հաջորդ տարվա նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների հոգսով և Ասիայում քաղաքական մարտահրավերներով, կենտրոնացավ նավթային երկրների կողմից արտադրությունն ավելացնելու անհրաժեշտության, Մերձավոր Արևելքում իր երկրի դերի և ԱՄՆ գործընկերների հետ նոր դարաշրջան բացելու հարցերի վրա:

ԱՄՆ նախագահի այցը տարածաշրջան տևեց 4 օր, որի ժամանակ նա փորձեց ուժով ԱՄՆ-ին վերադարձնել Մերձավոր Արևելք՝ ձգտելով, որ այն ունենա նոր տեսք՝ Իսրայելը դարձնելով դաշինքների համակարգի մաս և պաղեստինյան հարցը թողնելով առանց քաղաքական հորիզոնի:

Ներքին և արտաքին նպատակները

Քաղաքականությունների ուսումնասիրման և հետազոտությունների արաբական կենտրոնի քաղաքագիտության բաժնի տնօրեն Մարվան Կաբալանը կարծում է, որ այցը հետապնդում էր երկու նպատակ: Դոհայից «Al-Araby»-ին տված հարցազրույցում նա նշում է, որ Բայդենի առաջնահերթ նպատակները կապված են Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից առաջ երկրի ներսում հատկապես էներգետիկ խնդիրների՝ գնաճի հետևանքով ստեղծված թույլ և երերուն վիճակի հետ: Հետևաբար նա պետք է քայլ ասեր հաղթահարելու այս իրավիճակը՝ արտադրությունն ավելացնելու միջոցով իջեցնելով գները: Ինչ վերաբերում է արտաքին նպատակներին, ապա Կաբալանը նշում է, որ Ուկրաինայի պատերազմը

սկսվելուց հետո ակնհայտ դարձավ, որ ԱՄՆ դիրքերը սասանվել են Մերձավոր Արևելքում և Պարսից ծոցում, քանի որ տարածաշրջանում մերձավոր դաշնակիցները հրաժարվեցին նրա կողքին կանգնել այս պատերազմում, ինչին ավելանում է այդ դաշնակիցների հարաբերությունների զարգացումը Չինաստանի հետ: Ուստի այցի ընթացքում Բայդենը փորձեց իր շուրջը խմբել դաշնակիցներին, փակել ճանապարհը չինական և ռուսական ներթափանցման համար և հանգստացնել դաշնակիցներին նրանց հետ Վաշինգտոնի հարաբերությունների ու դաշինքների հարցում:

Կաբալանը խոսում է նաև այն առաջնահերթ նպատակի մասին, որի համար եկել էր Բայդենը, այն է՝ փորձել Իսրայելին ինտեգրել տարածաշրջանում:

«Անցում դեպի պրագմատիզմ»

Մերձավոր Արևելքի հետազոտող Սիգուրդ Նյուբաուերն իր հերթին հաջողված է համարում Բայդենի այցը Մերձավոր Արևելք՝ նշելով, որ դրա պատճառը Իսրայելում, Արևմտյան ափին և Սաուդյան Արաբիայում շրջագայությունից առաջ տեղի ունեցած նախապատրաստական աշխատանքներն էին: Այնուամենայնիվ, Նյուբաուերը կարծում է, որ այցը ամերիկյան կողմում շրջադարձ է առաջ բերել դեպի պրագմատիզմ՝ հաշվի առնելով, որ Միացյալ Նահանգները փորձում է խուսափել այն գնահից, որը գրանցվել է Եվրոպայում՝ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի հետևանքով:

Նա նշեց, որ, այս հանգամանքներից ելնելով, Բայդենը «ստիպված էր խոսել Սաուդյան Արաբիայի հետ՝ չնայած բեն Սալմանի հասցեին իր քննադատությանը: Նա դա արեց այնպես, որ փրկի իր դեմքը՝ նախ այցելելով Իսրայել և փորձելով հասնել դիվանագիտական հաղթանակի, որին նա հասավ՝ ապահովելով Սաուդյան Արաբիայի օդային տարածքով իրականացվող բոլոր, այդ թվում՝ իսրայելական թռիչքների անվտանգությունը»:

Մերձավոր Արևելքի հարցում ԱՄՆ քաղաքականության փոփոխությունը

Կատարի համալսարանի Պարսից ծոցի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Մահջուբ ալ-Զվեյրին հաստատում է, որ Բայդենի այցի հաջողությունը պայմանավորված է ԱՄՆ նախագահի արտաքին քաղաքականությամբ: Նա սկսեց հստակ հայտարարությամբ, որ ԱՄՆ այս վարչակազմի համար առաջնահերթը ոչ թե Մերձավոր Արևելքն է, այլ Չինաստանն ու Ասիան:

Ալ-Զվեյրին պնդում է, որ ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ զգալի հետընթաց է գրանցվել, ինչը նպաստել է Ուկրաինայում ռուսական պատերազմի բյուրեղացմանը: Նա մատնանշում է, որ ԱՄՆ նախագահը ստիպված էր տարածաշրջան գալ, քանի որ չի կարող զբաղվել էներգակիրների խնդրով՝ առանց մեր տարածաշրջանում գազի և նավթի կարևոր արտահանողների հետ շփվելու: [1]

Բայդենի մերձավորարևելյան այցի արդյունքները

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը փորձեց օգտագործել Մերձավոր Արևելք իր առաջին նախագահական այցը տարածաշրջանում Վաշինգտոնի ազդեցությունը վերահաստատելու համար: Բայց նա վերադարձավ այցից՝ առանց հասնելու դիվանագիտական ճեղքման, ինչը վերլուծաբանները զարմանալի չեն համարում: 4 օր տևած հանդիպումներից և ելույթներից հետո արդյունքները, եթե այդպիսիք կան, շատ քիչ են թվում՝ էներգիայի գներից մինչև մարդու իրավունքներ և տարածաշրջանում Իսրայելի դերը:

«Կասկածից վեր է, որ Բայդենի այցի ընթացքում հայտարարված քայլերը «համեստ» էին»,- ասում է Բրայան Քաթուլիսը Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի ինստիտուտից, թեև նշում է նաև, որ դրանցից մի քանիսը «դրական ազդանշաններ են տալիս հետագայում ավելի մեծ հնարավորության մասին»:

«Նրանք տարածաշրջանը մեկ գիշերվա ընթացքում չեն վերաձևի, և տարածաշրջանի դերակատարները դեռ շատ անելիք ունեն այս առաջին քայլերի ողջ ներուժն իրացնելու համար»,- ավելացնում է նա:

Ամենախիստ քննադատությունը, սակայն, հնչել է իրավապաշտպանների կողմից, որոնք անհանգստացած են Բայդենի վերջին կանգառից Սաուդյան Արաբիայում, մի երկրում, որը նա ժամանակին խոստացել էր «մեկուսացնել» իրավախախտումների պատճառով, որոնցից ամենացայտունն առնչվում էր լրագրող Ջամալ Խաշոգջիին:

Նավթի արդյունահանման ծավալների աճ չի լինի

Ի սկզբանե Սաուդյան Արաբիան համարվում էր ուղևորության ամենազգայուն հատվածը, սակայն դա մի ուղղություն էր, որը պարտադիր դարձավ այն բանից հետո, երբ Բայդենի վրա ճնշում գործադրվեց Էլ-Ռիադին սիրաշահելու՝ Ուկրաինա ռուսական ներխուժման պատճառով, ինչի հետևանքով բարձրացվեցին էներգակիրների գները: Վաշինգտոնը ձգտում էր հասնելու անմշակ նավթի խոշորագույն արտահանող երկրի օգնությանը՝ նվազեցնելու համար նավթի գները, որոնք վտանգում են նոյեմբերին կայանալիք միջանկյալ ընտրություններում դեմոկրատների հնարավորությունները:

Ուրբաթ օրը Սաուդյան Արաբիայի ղեկավարների հետ իր երկկողմ հանդիպումներից հետո Բայդենն ասել է. «Ես անում եմ ամեն ինչ, որպեսզի ավելացնեմ մատակարարումները Միացյալ Նահանգներ»՝ նշելով, որ արդյունքները դեռ տեսանելի չեն լինի «ևս երկու շաբաթ»: Ազգային անվտանգության հարցերով նրա խորհրդական Ջեյք Սալիվանը շտապեց

նվազեցնելու ակնկալիքները՝ ասելով լրագրողներին, որ ցանկացած գործողություն ձեռնարկվելու է ՕՊԵԿ+ի շրջանակներում, կազմակերպություն, որի կազմի մեջ մտնում է նաև Ռուսաստանը:

Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Ֆեյսալ բին Ֆարհանի խոսքերով՝ հաջորդ օրը Պարսից ծոցի համագործակցության խորհրդի վեց անդամների և Եգիպտոսի, Իրաքի ու Հորդանանի գագաթնաժողովում նավթը «քննարկման թեմա չէր»:

Սաուդյան Արաբիայի գահաժառանգ արքայազն Մուհամմադ բեն Սալմանը հայտարարել էր, որ մինչև 2027 թվականը իր երկրի արդյունահանման ծավալը կբարձրացվի օրական 13 միլիոն բարելի:

Անավարտ հաղթանակ

Ինչ վերաբերում է Իսրայելի և արաբական երկրների միջև հարաբերությունների ամրապնդմանը, Բայդենն այդ առումով պատմական որոշում է համարել Սաուդյան Արաբիայի ավիացիոն կազմակերպության հայտարարությունը «բոլոր քաղաքացիական ավիաընկերությունների» թռիչքների սահմանափակումները վերացնելու մասին, ինչը ճանապարհ է հարթել իսրայելական ինքնաթիռների համար՝ օգտագործելու Սաուդյան Արաբիայի օդային տարածքը: Իսրայելի վարչապետ Յաիր Լապիդն ասել է, որ դա «առաջին պաշտոնական քայլն է Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների կարգավորման համար»: Սակայն արքայազն Ֆեյսալ բեն Ֆարհանը շաբաթ օրը՝ իր մամլո ասուլիսի ժամանակ, ընդգծել է, որ դա «կապված չէ» Իսրայելի հետ և «ոչ մի կերպ ճանապարհ չի հարթում հետագա քայլերի համար»:

Թագավորությունը բազմիցս հաստատել է, որ հրաժարվում է կարգավորել հարաբերությունները Իսրայելի հետ և միանալ 2020 թվականին Իսրայելի և հարևան Բահրեյնի ու Արաբական Միացյալ Էմիրությունների, այնուհետև Մարոկկոյի և Սուդանի միջև ձեռք բերված «Աբրահամյան համաձայնագրերին», քանի դեռ պաղեստինա-իսրայելական հակամարտությունը չի լուծվել պաղեստինյան պետության ստեղծմամբ:

Բայդենի՝ Իսրայելում և պաղեստինյան տարածքներում գտնվելու ընթացքում որևէ առաջընթաց չի գրանցվել երկար ժամանակ ձգձգվող խաղաղ բանակցություններում, ինչը ստիպել է ԱՄՆ նախագահին փոխարենը կենտրոնանալ տնտեսական հարցերի վրա, որոնցից է, օրինակ, պաղեստինյան տարածքներում ինտերնետի չորրորդ սերնդի զարգացմանը նպաստելը:

«Հետընթաց իրավունքների ոլորտում»

Բայդենը և Լապիդը ստորագրեցին անվտանգության նոր պայմանագիր, որով Միացյալ Նահանգները խոստանում էր թույլ չտալ Իրանին միջուկային զենք ձեռք բերել: Սակայն դա չվերացրեց երկու կողմերի մոտեցումների տարբերությունները: Լապիդը նշում էր, որ Իրանի դեմ ուժի կիրառումը պետք է տարբերակ լինի, երբ դիվանագիտությունն ու բանակցությունները բավարար չեն, մինչդեռ Բայդենը՝ կրկնում, որ ցանկանում է դիվանագիտությանը հնարավորություն տալ՝ նշելով, որ ուժը «վերջին միջոցն է»:

Բայդենի այցին ամենաուժեղ արձագանքները կենտրոնացած էին Խաշոգջիի գործով արքայազն Մուհամմադ բեն Սալմանի հետ նրա հանդիպման վրա: Սաուդյան ընդդիմադիր Աբդուլլահ ալ-Աուդան, ով բնակվում է Միացյալ Նահանգներում, ասաց, որ այս ողջույնը «խոշոր հետընթաց է»: Ալ-Աուդան նշանավոր հոգևորականի որդի է, որը կալանավորվել է Սաուդյան Արաբիայում 2017 թվականին՝ «այլախոհության դեմ համատարած պայքարի» հետևանքով:

Վերլուծաբան Հուսեյն Իբիշի խոսքերով՝ «այցն ինքնին ձեռքբերում է, հատկապես սաուդցիների և առաջին հերթին Մուհամմադ բեն Սալմանի համար»: Նա հավելում է, որ Բայդենի համար այցը նպատակ ուներ կարգավորելու իր վարչակազմի և սաուդցիների միջև անձնական և քաղաքական հարաբերությունները՝ նշելով, որ «կարծես թե դա ձեռք է բերվել»:[2]

Բայդենի՝ Մերձավոր Արևելք այցի շարժառիթներն ու արդյունքները

2022 թ. հուլիսի 13-16-ը ԱՄՆ նախագահ Բայդենի այցը Մերձավոր Արևելք ևս մեկ անգամ հաստատեց, որ ամերիկյան բարձր շահերը խստորեն պարտադրվում են կուսակցական դիրքորոշումներում և կարծիքներում, ինչպես նաև դեմոկրատական կուսակցության այն քարոզում, որ ժողովրդավարությունը, հանրային ազատությունները և մարդու իրավունքները նրա արտաքին քաղաքականության և երկրների հետ հարաբերությունների կարևորագույն հիմքերից են: Բայդենը, 2021 թ. հունվարին ստանձնելով իշխանությունը, սկսեց ընդգծել այս քաղաքականությունը և ոչ բարեկամական դիրքորոշում որդեգրեց արաբական երկու կարևորագույն երկրների՝ Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի վերաբերյալ: Սակայն տարածաշրջանային և միջազգային իրադրությունը Բայդենի՝ իշխանության գալուց հետո՝ մոտ մեկուկես տարվա ընթացքում, էականորեն փոխվեց, և նրան ստիպեցին հետ կանգնել այդ դիրքորոշումից՝ չհրաժարվելով ուրիշների նկատմամբ ուժի ազդեցությունից, թեև վերջիններս ուժեղացել են և ունեն իրենց ուրույն կարծիքն ու դերը, ինչը կարևորում են:

Բայդենը եկավ Մերձավոր Արևելք՝ առաջնորդվելով մի քանի հզոր գործոններով.

Առաջին. ԱՄՆ-ն գիտակցում է, որ մերձավորարևելյան տարածաշրջանում հարաբերությունների և հավասարակշռության քարտեզում ամերիկյան դերին այլընտրանք կա՝ ի դեմս Ռուսաստանի և Չինաստանի և նույնիսկ ՆԱՏՕ-ի անդամ երկրների,

ինչպիսիք են Ֆրանսիան և Գերմանիան: Ճիշտ է, նրանք ամբողջությամբ չեն փոխարինի Ամերիկայի Միացյալ Նահանգներին, սակայն նրանք ևս իրենց մասնակցությունն ունեն տարածաշրջանում գործող ազդեցության և ուժի կենտրոններում և հիմնականում կենտրոնացած են ֆիզիկական ներկայության, ռազմական, տնտեսական, առևտրային, քաղաքական և տեխնոլոգիական հարաբերությունների վրա: Վաշինգտոնը ստիպված եղավ հետ կանգնել այն պնդումից, որ Մերձավոր Արևելքն այլևս առաջնահերթ ոլորտ չէ ամերիկյան շահերի համար, նույնիսկ եթե այն մնա կարևոր տարածաշրջան, թեև դա արեց փոքր-ինչ ուշացած:

Երկրորդ. ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքները և Վաշինգտոնի ու նրա դաշնակիցների՝ Ռուսաստանի դեմ ռազմական էսկալացիայի քաղաքականությունը՝ Ուկրաինային զենքի մատակարարումները, ֆինանսավորման և տեղեկատվության տրամադրումը և Ռուսաստանի դեմ տնտեսական, առևտրային և ֆինանսական ամենախիստ պատժամիջոցների կիրառումը, որոնք ազդել են էներգակիրների ու պարենային ապրանքների գների աճի և տնտեսական ճգնաժամի բռնկման վրա հենց Միացյալ Նահանգներում և նրա բոլոր դաշնակիցների ու աշխարհի բոլոր երկրներում, հանգեցրել են նախագահ Բայդենի ժողովրդականության մակարդակի էական անկմանը, ինչը պատճառ դարձավ, որ դեմոկրատական կուսակցությունը մեծապես անհանգստանա 2022 թ. նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի միջանկյալ ընտրություններում թե՛ Սենատում, թե՛ Ներկայացուցիչների պալատում իր մեծամասնությունը կորցնելու մեծ հավանականության համար: Այդ հավանականությունը խիստ իրատեսական են դարձնում բուռն դժգոհության ալիքը, ՆԱՏՕ-ի ակնհայտ և թաքնված պառակտումը, էսկալացիոն քաղաքականության արդյունավետության մեջ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Իսպանիայի համոզմունքի բացակայությունը, Ուկրաինայում պատերազմի շարունակման և այնտեղի իրավիճակի համար խոր մտահոգությունը: Եվրոպական երկրների լուրջ անհանգստությունը կարճ և միջնաժամկետ հեռանկարում ռուսական նավթին և գազին այլընտրանք չունենալու հարցում:

Ջո Բայդենի հանդիպումը Սաուդյան Արաբիայի արքայազն Մուհամմադ բին Սալմանի հետ

Երրորդ. արաբական երկրները, բացառությամբ Սիրիայի, չեզոք դիրք են գրավում ռուս-ուկրաինական պատերազմի հարցում՝ մերժելով երկրների ինքնիշխանության և անկախության դեմ ագրեսիան, միաժամանակ մերժելով միջազգային իրավասու շրջանակներից դուրս տնտեսական և այլ պատժամիջոցների կիրառումը՝ կազմակերպություններին կոչ անելով դադարեցնելու ռազմական գործողությունները և բանակցությունների գնալու հակամարտության քաղաքական կարգավորմանը հասնելու համար: Այս դիրքորոշումն անհանգստացրեց Վաշինգտոնին, և Բայդենը հասկացավ, որ անհրաժեշտ է այդ հարցով անմիջական խորհրդակցություններ անցկացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների համար բարեկամ արաբական երկրների հետ:

Չորրորդ. Ի մտի ունենալով Իսրայելի անհանգստությունը իրանական միջուկային փաթեթի հարցում, մի կողմից՝ Իրանի դեմ նրա արշավները և մյուս կողմից՝ հակազդեցությունը ԱՄՆ-ի վերադարձին Իրանի հետ միջուկային համաձայնագրին: Բայդենը տեսավ, որ բախվում է Կոնգրեսում թե՛ դեմոկրատների և թե՛ հանրապետականների առաջնորդների, իսրայելական ընդդիմության ու նրա կողմնակից ԱՄՆ պաշտոնյաների դիմակայությանը իր ցանկությանը՝ վերադառնալու Իրանի հետ միջուկային համաձայնագրին, որի ստորագրումը 2015 թ. նա համարում է Օբամայի վարչակազմի կարևոր ձեռքբերումներից մեկը:

Հինգերորդ. չնայած ԱՄՆ նախորդ նախագահ Թրամփի նկատմամբ Բայդենի ատելությանը և նրանց միջև եղած թշնամանքին՝ ծանր ճգնաժամի միջով անցնող ամերիկյան տնտեսության համար դժվար է անտեսել Թրամփի կողմից ավելի վաղ ձեռք բերված համաձայնությունը ԱՄՆ-ում Սաուդյան Արաբիայի՝ մոտ 450 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումների շուրջ՝ ի լրումն ԱՄՆ գանձապետական պարտատոմսերում Սաուդյան Արաբիայի բաժնեմասի և նրա՝ ամերիկյան զենքի, պահեստամասերի և ռազմական տեխնիկայի գնումների: Սա՝ ի հավելումն ԱՄՆ հարաբերությունների աշխուժացմանը Պարսից ծոցի համագործակցության խորհրդի մյուս անդամների, Եգիպտոսի, Հորդանանի և Իրաքի հետ:

Բայդենն իր այցը տարածաշրջան սկսել է Իսրայելից: Նա միշտ պարծենում է, որ թեև հրեա չէ, բայց սիոնիստ է: Նա չափազանց հեռուն գնաց Իսրայելին ռազմական, քաղաքական և տնտեսական օգնության տրամադրման հարցում և հանգստացրեց ենթադրյալ մտավախությունները Իրանի և Իրանի միջուկային փաթեթի առնչությամբ՝ ստորագրելով Միացյալ Նահանգների և Իսրայելի միջև ռազմավարական համագործակցության վերաբերյալ Երուսաղեմի հռչակագիրը՝ բոլոր հնարավոր

միջոցներով խանգարելու Իրանին միջուկային զենք ձեռք բերել: Ընդ որում, Իսրայելը, որն ունի միջուկային զենք, չի ստորագրել միջուկային զենքի չտարածման պայմանագիրը և չի ընդունում որևէ կարգի վերահսկողություն՝ ի տարբերություն Իրանի, որը ստորագրել է համաձայնագիրը և համագործակցում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ՝ ի լրումն մեծ տերությունների հետ իր միջուկային համաձայնագրի: Բայդենի՝ չափից ավելի աջակցությունն Իսրայելին և նրա ինտեգրմանը տարածաշրջանում՝ որպես «Աբրահամյան համաձայնությունների» շարունակություն, Սաուդյան Արաբիա նրա այցի և Պարսից ծոցի համագործակցության խորհրդի ու երեք երկրների (Եգիպտոս, Հորդանան և Իրաք) գագաթնաժողովին մասնակցության սադրիչ նախերգանք էր:

Բայդենի այցը պաղեստինյան գրավյալ տարածքներ և Պաղեստինի ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասի հետ մոտ մեկ ժամ տևած նրա հանդիպումը ենթադրում էր հասցված վնասների հատուցում և ֆինանսական օգնության տրամադրում պաղեստինյան հիվանդանոցներին ու ՄԱԿ-ի Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքի գործակալությանը (UNRWA): Դա կարծես այլընտրանք լիներ Արևելյան Երուսաղեմում ամերիկյան հյուպատոսություն բացելուն, Վաշինգտոնում Պաղեստինի ազատագրման կազմակերպության գրասենյակի վերաբացման նրա նախկին խոստմանը և ՊԱԿ-ի անունը ԱՄՆ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակից հանելու՝ Պաղեստինի խնդրանքին արձագանքելուն: Բայդենը հայտարարեց, որ կողմ է «երկու պետությունների» խնդրի լուծմանը, սակայն շտապեց ասելու, որ դա ներկայիս պայմաններում իրագործելի չէ: Սա հաստատում է, որ Բայդենն իր կառավարման չորս տարիները կանցկացնի առանց պաղեստինցիների համար որևէ բան անելու, միայն սին խոստումներ տալով:

Նախքան տարածաշրջան ժամանելը Բայդենը Իրանի դեմ ամերիկա-արաբա-իսրայելական ռազմական դաշինք ստեղծելու պահանջին արաբական կողմից հստակ մերժում ստացավ: Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրները հաստատեցին, որ Իրանը հարևան երկիր է, որն իրենց հետ կիսում է իրենց մշակույթն ու կրոնը, և պահանջեցին չմիջամտել իրենց բարիդրացիական հարաբերություններին, ինչը Բայդենին ստիպեց հետ կանգնել այդ պահանջից և առաջ քաշել ռազմական համագործակցության գաղափարը՝ Կարմիր ծովում (Բաբ էլ-Մանդեբ) և Պարսից ծոցում (Հորմուզի նեղուց) ջրային ուղիներն ապահովելու համար, սակայն այն մինչ այժմ որևէ մեկնաբանության չի արժանացել արաբական կողմից:

Սաուդյան Արաբիան և Արաբական Միացյալ Էմիրությունները չեն արձագանքել նավթի և գազի արդյունահանման ծավալները մեծացնելու Բայդենի պահանջին՝ հավատարիմ մնալով ՕՊԵԿ-ի և նրա դիտորդ անդամների որոշումներին՝ Ռուսաստանի գլխավորությամբ: Միակ բանը, որին Բայդենը կարողացավ հասնել, Սաուդյան Արաբիայի հայտարարությունն էր, որ նավթի օրական արդյունահանման ծավալը կմեծացնի՝ հասցնելով առավելագույնը 13 մլն բարելի: Ներկայումս Սաուդյան Արաբիան օրական արդյունահանում է մոտ 12 մլն բարել նավթ: Այս քայլն էական ազդեցություն չի ունենա նավթի ներկայիս գների վրա: Նշենք, որ Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը մեծ քանակությամբ ռուսական նավթ են ներկրում՝ օգտվելով ցածր գներից:

Արաբական երկրներն ընդգծել են Պաղեստինի հարցի՝ «երկու պետությունների» լուծմանը հավատարիմ մնալու անհրաժեշտությունը և այն, որ Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորումը պետք է համապատասխանի արաբական նախաձեռնությանը: Սաուդյան Արաբիան Իսրայելի քաղաքացիական ավիացիային իր օդային տարածքը հատելու թույլտվությունը չհամարեց Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորում և դա մեկնաբանեց որպես քաղաքացիական ավիացիայի միջազգային համաձայնագրի պարտավորություն, ինչը կնվազեցնի Իսրայելի քաղաքացիական ավիացիայի թռիչքների ծախսը, կիջեցնի տոմսերի գները և կկրճատի թռիչքների տևողությունը:

Բայդենը արաբ առաջնորդների հետ թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ հանդիպումների ընթացքում հստակ ուղերձ ստացավ առ այն, որ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում կան կարևոր և շարունակական ռազմավարական շահեր, սակայն դրանք հիմնված են ընդհանուր շահերի և փոխադարձ հարգանքի վրա ու չեն խանգարում կապերին և իրենց երկրների հարաբերություններին աշխարհի այլ տերությունների հետ: Կարևոր է հաշվի առնել արաբական երկրների շահերը և քաղաքական դիրքորոշումները տարածաշրջանային ու միջազգային բոլոր հարցերի վերաբերյալ, և կարևոր է, որ Միացյալ Նահանգները համագործակցի Պաղեստինի հարցի, Եմենի, Սիրիայի և Լիբիայի ճգնաժամերը, Իրաքում, Սուդանում և արաբական այլ երկրներում ստեղծված իրավիճակները հաղթահարելու համար արդար քաղաքական լուծում գտնելու համար:

Աղբյուրը

1. Աղբյուրը՝ https://bit.ly/3OXMjhr
2. Աղբյուրը՝ https://bit.ly/3SrI5BH
3. Աղբյուրը՝ https://bit.ly/3BEzcim

ԱՄՆ միջանկյալ ընտրությունները և դրանց վրա ազդող հիմնական գործոնները

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2022 թ. նոյեմբերի 8-ին Միացյալ Նահանգներում կայանալու են ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների միջանկյալ ընտրություններ: Միացյալ Նահանգներում կա մի օրինաչափություն. եթե նախագահը ընտրվում է դեմոկրատական կուսակցությունից, ապա Կոնգրեսի ընտրություններում մեծ մասամբ հաղթում են հանրապետականները և հակառակը: Նման կերպ ԱՄՆ քաղաքացիները փորձում են հավասարակշռություն պահպանել երկու կուսակցությունների միջև և թույլ չտալ, որ ամբողջ իշխանությունը կենտրոնանա մեկ կուսակցության ձեռքում: Տվյալ պահին ԱՄՆ նախագահը դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ է, իսկ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում և Սենատում մեծամասնություն են կազմում հենց դեմոկրատները, որոնք մեծամասնություն էին դարձել, երբ նախագահը հանրապետական Դոնալդ Թրամփն էր:

Վերջերս կատարված հարցումները ցույց են տալիս, որ հանրապետականները ավելի մեծ հնարավորություն ունեն հաղթելու ԱՄՆ միջանկյալ ընտրություններում և մեծամասնություն կազմելու Ներկայացուցիչների պալատում: Սենատում հանրապետականները նույնպես ունեն հաղթելու մեծ հնարավորություն, այնուամենայնիվ, Սենատի պարագայում հարցումների արդյունքներն առավել վիճահարույց են, քան Ներկայացուցիչների պալատի դեպքում է[1]:

ԱՄՆ Սենատի ընտրությունները

Ներկայումս Սենատում մեծամասնություն են կազմում դեմոկրատները, չնայած որ 100 տեղից 50-ը զբաղեցնում են հանրապետականները, իսկ 48-ը՝ դեմոկրատները: ԱՄՆ Սենատում դեմոկրատներին մեծամասնություն են դարձնում 2 անկախ սենատորները, որոնք խմբակցում են դեմոկրատներին, և դեմոկրատ փոխնախագահ Քամալա Հարիսի վճռորոշ ձայնը, որը, ԱՄՆ Սահմանադրությամբ, Սենատի ղեկավարն է և կարող է քվեարկել միայն այն դեպքում, եթե քվեարկության ժամանակ ձայները հավասար են բաշխվում[2]:

Այս տարվա նոյեմբերին Սենատում 100 տեղից ընտրությունների են դրված 35-ը, որոնցից 14-ը ներկայումս զբաղեցնում են դեմոկրատ սենատորներ, իսկ 21-ը՝ հանրապետական: Պաշտոնավարող սենատորներից 6-ը (5 հանրապետական և 1 դեմոկրատ) այլևս չեն առաջադրվելու: Չառաջադրվող սենատորներից են դեմոկրատ Պատրիկ Լիհին և հանրապետական Ռոբ Փորթմանը, որոնք հայամետ մի շարք նախաձեռնությունների են աջակցել իրենց պաշտոնավարման ընթացքում: Նորընտիր թեկնածուները կպաշտոնավարեն 6 տարի ժամկետով: Նախատեսվում է անցկացնել երկու հատուկ ընտրություն. մեկը՝ Օկլահոմա նահանգում՝ սենատոր Ջիմ Ինհոֆի պաշտոնավարման 4 տարին լրացնելու համար, քանի որ վերջինս 2022 թ. փետրվարին հայտարարել է իր պաշտոնաթող լինելու մասին, երկրորդը՝ Կալիֆոռնիա նահանգում՝ լրացնելու համար այժմ փոխնախագահ Քամալա Հարիսի պաշտոնավարման վերջին մի քանի շաբաթները[3]:

Ընտրության դրված 21 հանրապետական տեղերից առավել խոցելի են 2-ը՝ Վիսկոնսին և Փենսիլվանիա նահանգներում՝ հաշվի առնելով այն, որ 2020 թ. նախագահական ընտրությունների ժամանակ հանրապետական թեկնածու Դոնալդ Թրամփը հենց այդ նահանգներում պարտվեց դեմոկրատներին: Վիսկոնսին նահանգը ներկայացնող հանրապետական սենատոր Ռոն Ջոնսոնի դեմ դեմոկրատներն ունեն մի քանի ուժեղ թեկնածուներ: Այնուամենայնիվ, Ջոնսոնի հիմնական դեմոկրատ մրցակցի անունը հայտնի կդառնա միայն օգոստոսի 9-ին կայանալիք փրայմերիզի ժամանակ: Հարցումների համաձայն՝ դեմոկրատները մեծ հնարավորություններ ունեն հաղթելու այս նահանգում, սակայն հանրապետականները պնդում են, որ Ջոնսոնին նախկինում էլ են թերագնահատել, բայց, միևնույնն է, նա հաղթել է[4]: Հարցումների նկատմամբ հանրապետականների թերահավատությունը գալիս է դեռևս 2016 թ. ԱՄՆ նախագահական ընտրություններից, երբ, ըստ բոլոր հարցումների, Դոնալդ Թրամփի հաղթելու հավանականությունը շատ փոքր էր, սակայն հենց նա դարձավ ԱՄՆ 45-րդ նախագահը:

Հանրապետականների համար երկրորդ խոցելի նահանգը Փենսիլվանիան է: Այդ նահանգը ներկայացնող հանրապետական սենատոր Փեթ Թումին դեռևս 2020 թ. հայտարարել է, որ հաջորդ ընտրություններում չի առաջադրվի ոչ սենատորի, ոչ էլ նահանգապետի պաշտոններում, քանզի լքում է քաղաքականությունը: Ներկայացուցիչների պալատի նախկին անդամ և երկու անգամ սենատորի պաշտոն զբաղեցրած Թումիի պնդմամբ՝ ինքը կհաղթեր այս ընտրություններում, եթե որոշեր մասնակցել: Իր այս քայլով սենատորը ծանր հարված հասցրեց հանրապետական կուսակցությանը՝ պայքարի մեծ դաշտ թողնելով դեմոկրատների և հանրապետականների համար[5]:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Փենսիլվանիա նահանգում հանրապետականների կողմից թեկնածություն է առաջադրել ազգությամբ թուրք Մեհմեդ Օզը: Վերջինս մասնագիտությամբ վիրաբույժ, իսկ այժմ հայտնի հեռուստաաստղ է, որը վայելում է ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի աջակցությունը: Խոսելով Օզի մասին՝ Թրամփը նշել է. «Ես երկար տարիներ ճանաչում եմ բժիշկ Օզին, ինչպես շատ շատերը, թեև միայն իր շատ հաջողված հեռուստահաղորդման միջոցով… Նա միշտ եղել է շատ հայտնի, հարգված և խելացի»[6]: Չնայած Թրամփի աջակցությանը՝ կասկածի տակ է դրվում Մեհմեդ Օզի հավատարմությունը ԱՄՆ-ի նկատմամբ, քանզի վերջինս, լինելով նաև Թուրքիայի քաղաքացի, խոր կապեր ունի թուրքական բիզնես էլիտայի և քաղաքական շրջանակների հետ, որոնք իրենց հերթին կապեր ունեն Էրդողանի հետ[7]:

Օզը հայտարարել է, որ սենատոր դառնալու դեպքում կհրաժարվի Թուրքիայի քաղաքացիությունից, թեև կան զուգահեռ զեկույցներ, որ նա չի գնա այդ քայլին: Այնուամենայնիվ, Թուրքիայի քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում էլ Օզը, բազմաթիվ կապեր ունենալով Թուրքիայի հետ և անգամ ծառայած լինելով Թուրքիայի բանակում, ընտրվելով այս կամ այն կերպ դառնալու է թուրքական շահերի ներկայացուցիչը[8]:

Ինչ վերաբերում է Սենատում ընտրության դրված 14 դեմոկրատական տեղերին, ապա դրանցից վտանգված են հատկապես 4-ը: Այդ նահանգներն են Արիզոնան, Ջորջիան, Նևադան և Նյու Հեմփշիրը: Թեև այժմ այդ նահանգները ներկայացնում են դեմոկրատ սենատորներ, այնուամենայնիվ, այս միջանկյալ ընտրությունների ժամանակ հնարավոր է, որ դրանցում դեմոկրատները կորցնեն իրենց տեղերը: Դա պայմանավորված է տարբեր հանգամանքներով՝ հանրապետականների կողմից անվանի թեկնածուների առաջադրմամբ, դեմոկրատների օրոք տընտեսական վիճակի վատթարացմամբ, ժողովրդագրական պատկերի փոփոխությամբ[9]:

ԱՄՆ կոնգրեսի շենքը

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ընտրություններ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում այժմ մեծամասնություն են կազմում դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները՝ 435 տեղից զբաղեցնելով 222-ը. հանրապետականները զբաղեցնում են 213 տեղ: Հանրապետական և դեմոկրատական կուսակցությունների 2-ական ներկայացուցիչների պաշտոնաթողությունից հետո՝ 2022 թ. հուլիսի դրությամբ, դեմոկրատները ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում պահպանում են առավելությունը (220-211): Այսպիսով՝ նոյեմբերին կայանալիք ընտրություններում հանրապետականներին անհրաժեշտ է ձեռք բերել ևս 7 մանդատ՝ պալատում մեծամասնություն կազմելու համար:

Ի տարբերություն Սենատի՝ Ներկայացուցիչների պալատում ընտրության են դրված բոլոր 435 ներկայացուցիչների տեղերը: Ընտրության են դրված նաև Ներկայացուցիչների պալատի 6 չքվեարկող անդամներից 5-ի տեղերը: Իսկ 117-րդ համագումարի թափուր պաշտոնների զբաղեցման համար տեղի կունենան հատուկ ընտրություններ[10]:

2022 թ. ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջանկյալ ընտրություններում այլևս չեն առաջադրվի 31 դեմոկրատ և 18 հանրապետական պաշտոնավարող ներկայացուցիչներ: Հեռացող կոնգրեսականների թվում են նաև ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի անդամներ Բրենդա Լորենսը, Էդի Բեռնիս Ջոնսոնը, Ֆրեդ Ափթոնը, Թեդ Դոյչը, Քեթլին Ռայսը, Ջեյմս Լենջվինը, Էդվին Փերլմութերը, Բոբի Ռաշը, Ալբիո Սիրիսը, Լուսիլ Ռոյբալ-Ալարդը, Ալան Լոուենտալը, Մայք Դոյլը և Էնթոնի Գոնսալեսը[11]: Պաշտոնաթող կոնգրեսականների թվում է նաև հայկական արմատներ ունեցող և ԱՄՆ Կոնգրեսի

հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ջեքի Սփիերը, որը 2021 թ. հայտարարել էր, որ այլևս չի առաջադրվի կոնգրեսականի պաշտոնում[12]: Սփիերի հեռացումը մեծ կորուստ կլինի, քանզի վերջինս մշտապես ակտիվորեն պայքարել է ԱՄՆ Կոնգրեսում հայերի շահերի առաջմղման համար՝ առաջադրելով և աջակցելով բազմաթիվ հայամետ բանաձևերի ընդունմանը, միանալով հայամետ նախաձեռնություններին: Բացի այդ՝ 2019 թ. Ջեքի Սփիերը այն կոնգրեսականների թվում էր, որոնք այցելեցին Արցախ: Սփիերը աջակցել է նաև Արցախին օգնության տրամադրմանը, Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության սահմանափակմանը և Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների ու քաղաքացիական անձանց՝ Հայաստան վերադարձին:

Միջանկյալ ընտրությունների վրա ազդող գործոնները

Ինչպես արդեն նշվեց, հարցումների համաձայն՝ հանրապետականները 2022 թ. միջանկյալ ընտրություններում հնարավորություն ունեն մեծամասնություն կազմելու ԱՄՆ Կոնգրեսում, մանավանդ որ ԱՄՆ դեմոկրատ նախագահ Ջո Բայդենի վարկանիշը ռեկորդային ցածր մակարդակի վրա է: Դա պայմանավորված է մի շարք գործոններով: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական գործոնները, որոնք իրենց ազդեցությունը կունենան միջանկյալ ընտրությունների վրա:

Գնաճ: Ընտրությունների վրա ամենամեծ ազդեցություն ունեցող գործոնը թերևս գնաճն է: «Washington Post-ABC News»-ի հարցման մոտավոր հաշվարկներով՝ 10 ամերիկացիներից 7-ը դժգոհ են նախագահ Բայդենի՝ գնաճի խնդրի լուծման մոտեցումից: Հարցվածների 50 %-ը կարծում է, որ գնաճի խնդիրը կարող են լուծել հանրապետականները, իսկ 31 %-ը՝ դեմոկրատները[12]: Հետաքրքիր է, որ Օբամայի վարչակազմի օրոք՝ 2011 թ., գազի գնի աճը մոտավորապես նույնն էր, իսկ գործազրկության մակարդակը կրկնակի բարձր էր: Այնուամենայնիվ, Օբամայի վարկանիշը զգալիորեն ավելի բարձր էր, քան այժմ Բայդենի վարկանիշն է: Այս անհամապատասխանության հիմնական պատճառներից մեկը կարող է լինել ՋԼՄ-ների բացասական անդրադարձը գնաճին և ընդհանրապես տնտեսական վիճակի վատթարացմանը, ինչը միանշանակ իր ազդեցությունն է թողել ԱՄՆ հանրային կարծիքի վրա[14]: Սա ոչ միայն ազդում է նախագահ Բայդենի վարկանիշի վրա, այլև թուլացնում է դեմոկրատական կուսակցության դիրքերը գալիք միջանկյալ ընտրություններում: Անգամ եթե միջանկյալ ընտրություններից առաջ գնաճն աստիճանաբար կրճատելու նոր քաղաքականություն ներդրվի, այն ընտրությունների համար որոշիչ չի դառնա[15]:

• **Ընտրական շրջանների սահմանների վերանայում**: 2020 թ. մարդահամարով վեր հանված բնակչության թվաքանակի փոփոխությունն արտացոլելու համար ԱՄՆ նահանգներում իրականացվեցին ընտրական շրջանների սահմանների փոփոխություններ: Սրանով հանրապետական կուսակցությունը առավելություն ստացավ, որով ակնկալվում է, որ հանրապետականները ավելի շատ տեղեր կստանան որոշ նահանգներում՝ պայմանավորված ընտրաշրջանների սահմանների փոփոխություններով[16]: Վերաբաշխման հետևանքով 6 նահանգներ (Տեխաս, Կոլորադո, Ֆլորիդա, Մոնտանա, Հյուսիսային Կարոլինա և Օրեգոն) լրացուցիչ տեղեր ստացան, իսկ 7 նահանգներ (Կալիֆոռնիա, Իլինոյիս, Միչիգան, Նյու Յորք, Օհայո, Փենսիլվանիա և Արևմտյան Վիրջինիա) տեղեր կորցրին[17]: Նման առավելությունը թույլ կտա հանրապետականներին առավել շատ ռեսուրսներ հատկացնել այն նահանգներին, որտեղ դեմոկրատների հետ մրցակցությունն առավել թեժ է:

• **ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից Ռոուն ընդդեմ Ուեյդի որոշման չեղարկում:** Այս որոշմամբ չեղարկվեց հղիության արհեստական ընդհատման՝ սահմանադրական իրավունք լինելը: Այդ հարցի կարգավորումը այդուհետ հանձնվեց նահանգային իշխանություններին, որոնցից շատերն արդեն իսկ արգելել են հղիության արհեստական ընդհատումը, իսկ մի մասն էլ դա կանի ապագայում[18]: Այս որոշումը կայացվել է Գերագույն դատարանի՝ մեծամասնություն կազմող պահպանողական դատավորների կողմից, ինչը հաստատում է այն փաստը, որ հանրապետականները, չունենալով իշխանություն ոչ Սպիտակ տանը, ոչ էլ Կոնգրեսի երկու պալատներում, շարունակում են վճռորոշ ազդեցություն ունենալ ԱՄՆ ներքին կյանքի վրա: Ռոուն ընդդեմ Ուեյդի որոշման չեղարկումը կարող է մոբիլիզացնել դեմոկրատ ընտրողներին, որ մասնակցեն ընտրություններին և քվեարկեն դեմոկրատների օգտին:

• **Քովիդ-19 համավարակ:** Առաջին հայացքից համավարակն ինքնին առաջնահերթ խնդիր չէ ԱՄՆ ընտրողների և մրցապայքարի մասնակցող թեկնածուների համար: Չնայած 2 տարի առաջ այս գործոնը զգալիորեն ազդեց Դոնալդ Թրամփի վերընտրվելու վրա, այժմ այն շատ քիչ ընտրողների համար է առաջնային խնդիր, անգամ այն պայմաններում, երբ Կովիդ-19-ի հետևանքով մահերի թիվն անցել է 1 միլիոնը: Սակայն հարկ է նշել, որ հենց համավարակը սկիզբ դրեց ընտրությունների

արդյունքների վրա ազդող գլխավոր գործոնին՝ գնաճին[19]:

• Հանցագործությունների թվի աճ: Վերջին տարիներին ԱՄՆ-ում գրանցվել է հանցագործությունների՝ զինված հարձակումների, գողության և ռասիզմի դեպքերի աճ: Նման ցուցանիշները անհանգստացնող են ԱՄՆ ընտրողների համար: Այս իրավիճակը գործում է ի վնաս գործող դեմոկրատ իշխանությունների և մեծացնում հանրապետականների ընտրվելու հավանականությունը[20]:

Եզրակացություն

Ամփոփելով վերոնշյալը, եթե դատենք այն օրինաչափությամբ, որը մշտապես գործել է ԱՄՆ-ում, դեմոկրատ նախագահ ունենալու դեպքում մեծ են Կոնգրեսում մեծամասնություն կազմելու հանրապետականների հնարավորությունները: Այս օրինաչափության օգտին են վկայում նաև անցկացված հարցումները, ըստ որոնց՝ հանրապետականներն ավելի մեծ հնարավորություններ ունեն Կոնգրեսում մեծամասնություն կազմելու (առավել մեծ հնարավորություններ՝ Ներկայացուցիչների պալատում): Միևնույն ժամանակ մի շարք կոնգրեսականներ կայացրել են այլևս ընտրություններին չմասնակցելու որոշում, որոնց թվում են բազմաթիվ հայամետ կոնգրեսականներ: Նրանց թվում է նաև ԱՄՆ Կոնգրեսում հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ջեքի Սփիերը: Դրան հակառակ՝ սենատորի պաշտոնում առաջադրվել է ազգությամբ թուրք և Թուրքիայի քաղաքացի Մեհմեդ Օզը՝ ԱՄՆ-ում հայտնի որպես «բժիշկ Օզ»: Ընտրվելու դեպքում հնարավոր է, որ նա դառնա Կոնգրեսում Էրդողանի շահերի ներկայացուցիչը:

Ինչ վերաբերում է Կոնգրեսում մեծամասնություն կազմելու հանրապետականների կամ դեմոկրատների հնարավորություններին, ապա կարելի է առանձնացնել մի քանի հիմնական գործոններ, որոնք 2022 թ. ԱՄՆ միջանկյալ ընտրությունների ժամանակ լինելու են վճռորոշ: Հանրապետականների օգտին են գնաճը, ընտրական շրջանների սահմանների վերանայումը և հանցագործությունների թվի աճը: Այդ գործոնների ազդեցությամբ է, որ ներկայումս ԱՄՆ դեմոկրատ նախագահ Բայդենի վարկանիշը ռեկորդային ցածր մակարդակի վրա է, ինչն իր հերթին նվազեցնում է դեմոկրատների ընտրվելու հավանականությունը: Իսկ հանրապետականների դեմ գործող և դեմոկրատների ընտրվելու հավանականությունը մեծացնող գործոն է ԱՄՆ Գերագույն դատարանի պահպանողական դատավորների մեծամասնության [redacted]ղմից Ռոուն ընդդեմ Ուեյդի որոշման չեղարկումը:

Հղումներ

1. . Տես Why Republicans Are Favored To Win The House, But Not The Senate, https://fivethirtyeight.com/features/why-republicans-are-favored-to-win-the-house-but-not-the-senate/ (մուտք՝ 25.07.2022):
2. . Տես U.S. Constitution, Article I, section 3, https://www.senate.gov/civics/constitution_item/constitution.htm#a1_sec3 (մուտք՝ 26.07.2022):
3. . Տես United States Senate elections, 2022, https://ballotpedia.org/United_States_Senate_elections,_2022 (մուտք՝ 25.07.2022):
4. . Տես Mandela Barnes gets open path to take on Wisconsin Sen. Ron Johnson, https://www.politico.com/news/2022/07/27/alex-lasry-dropping-out-of-wisconsin-senate-race-to-unseat-ron-johnson-00048186 (մուտք՝ 26.07.2022):
5. . Տես Sen. Pat Toomey to retire from politics in blow to GOP, https://www.politico.com/news/2020/10/05/pat-toomey-senate-retirement-426429 (մուտք՝ 26.07.2022):
6. . 2022 Midterms: A Guide to the Races Worth Watching A cheat sheet for all the crucial races, upsets, and campaign drama from now through Election Day, https://nymag.com/intelligencer/article/2022-midterms-guide.html (մուտք՝ 26.07.2022).
7. . Տես Would Turkey's president have leverage over 'Senator Doctor Oz'? https://www.washingtonpost.com/opinions/2022/02/16/doctor-oz-close-ties-to-turkey-raise-concern-about-senate-candidacy/ (մուտք՝ 26.07.2022):
8. . Տես Dr. Oz vows to renounce Turkish citizenship if elected to Senate, https://edition.cnn.com/2022/03/16/politics/dr-oz-turkish-citizenship-pennsylvania-senate/index.html (մուտք՝ 27.07.2022):
9. . Տես Senate, Balance of the chamber could come down to four states where Democrats are up for reelection, https://www.washingtonpost.com/politics/interactive/2022/senate-control-midterms-2022/?itid=lk_readmore_elections_enhanced_index (մուտք՝ 27.07.2022):
10. . Տես United States House of Representatives elections, 2022, https://ballotpedia.org/United_States_House_of_Representatives_elections,_2022 (մուտք՝ 27.07.2022):
11. . Տես List of U.S. Congress incumbents who are not running for re-election in 2022, https://ballotpedia.org/List_of_U.S._Congress_incumbents_who_are_not_running_for_re-election_in_2022 (մուտք՝ 27.07.2022):
12. . Տես Rep. Jackie Speier retiring from Congress, https://www.politico.com/news/2021/11/16/jackie-speier-retiring-congress-522690 (մուտք՝ 27.07.2022):
13. . Տես Key issues that could determine the 2022 midterm elections, https://www.washingtonpost.com/politics/interactive/2022/key-issues-voting-2022-midterms/ (մուտք՝ 28.07.2022):
14. . Տես Is the Democrats' problem Biden or Inflation, https://www.washingtonpost.com/opinions/2022/07/12/how-much-does-inflation-explain-biden-bad-polling/ (մուտք՝ 28.07.2022):
15. . Տես The Inflation Election: Economics Factors May Have Already Cooked the Midterm Election Results, https://www.aei.org/economics/the-inflation-election-economics-factors-may-have-already-cooked-the-midterm-election-results/ (մուտք՝ 28.07.2022):
16. . Տես How Redistricting Gives Republicans New Political Power, https://www.wsj.com/articles/how-redistricting-gives-republicans-new-political-power-11657359001 (մուտք՝ 28.07.2022):
17. . Տես United States House of Representatives elections, 2022:
18. . Տես Abortion is now banned in these states. See where laws have changed, https://www.washingtonpost.com/politics/2022/06/24/abortion-state-laws-criminalization-roe/ (մուտք՝ 29.07.2022):
19. . Տես Why have politicians stopped talking about Covid? https://www.vox.com/coronavirus-covid19/2022/6/16/23167365/covid-19-2022-us-midterm-elections-vaccines-masks (մուտք՝ 29.07.2022):
20. . Տես Key issues that could determine the 2022 midterm elections:

Սևրի պայմանագիրը որպես Հայաստանի ու հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների վերականգնման միջազգային փաստաթուղթ

Արմեն Ց. Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սևրի պայմանագրի ուժի մեջ լինելու հարցը մշտապես մտահոգել է թուրքական պետությանը: Թուրքական իշխանությունները հետևողական քայլեր էին ձեռնարկում Սևրի պայմանագրի դրույթները չեզոքացնելու ուղղությամբ[1]: Սևրի պայմանագիրն իրավական ուժ չունեցող փաստաթուղթ հայտարարելով հանդերձ՝ թուրքական կողմը միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքների ու նորմերի կոպիտ խախտումներով կնքված Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերում ներառել է այն չեղյալ համարող հոդվածներ կամ դրույթներ: Սևրի պայմանագրի նկատմամբ եղած այս միտումը թուրքական իշխանությունների համար շարունակական բնույթ է կրում և վերածվել է Սևրի սինդրոմի կամ սևրաֆոբիայի[2] յուրատեսակ ախտանիշի: Ասվածի վկայությունն է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ քաշված՝ տարածքային պահանջներից հրաժարվելու և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու թուրքական նախապայմանը, ինչպես նաև Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար հայտնի արձանագրություններում տեղ գտած Կարսի պայմանագրի ճանաչման քողարկված ձևակերպումը՝ ենթատեքստում ունենալով Սևրի պայմանագրի չեզոքացումը: Թուրքիայի ներկայիս իշխանություններն այս քաղաքականությունն ավելի մեծ եռանդով են փորձում առաջ մղել հատկապես այսօր՝ հաշվի առնելով Անկարայի աջակցությամբ 2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի ծանր հետևանքները ոչ միայն Արցախի Հանրապետության, այլև Հայաստանի Հանրապետության ու ողջ հայ ժողովրդի համար: Այս լույսի ներքո անհրաժեշտություն է ծագում վերստին հանգամանորեն վերլուծելու Սևրի պայմանագրի՝ Հայաստանի և հայ ժողովրդի անժամանցելի իրավունքներին վերաբերող դրույթները և քննարկելու միջազգային իրավունքի նորմերի տեսանկյունից դրանց գործադրման հնարավորությունները՝ անշուշտ հաշվի առնելով աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային գործընթացների՝ մեզ համար նպաստավոր լինելու հանգամանքները:

1920 թ. օգոստոսի 10-ին Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան՝ որպես դաշնակից ուժերի Գերագույն խորհրդի տերություններ, և Հայաստանը, Բելգիան,

Հունաստանը, Հեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբախորվաթալովենական պետությունը և Չեխոսլովակիան՝ որպես դաշնակից պետություններ՝ մի կողմից, և համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը՝ մյուս կողմից, ստորագրեցին 13 մասից և 433 հոդվածից բաղկացած Սևրի հաշտության պայմանագիրը:

Հայ պատմագիտությունը տասնամյակներ շարունակ Սևրի պայմանագիրը գերազանցապես քննարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88-93-րդ հոդվածների շրջանակներում, ինչը բնական պետք է համարել, քանզի դրանցով վերականգնվում էր հայ ժողովրդի իրավունքն իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ: Դա կարևոր էր առաջին հերթին որպես տվյալ երկրի տիտղոսը կրող ազգի անժամանցելի իրավունքների ճանաչում: Ինչպես հայտնի է, 1918 թ. Օսմանյան կայսրության բանակի՝ Անդրկովկաս ներխուժելու պայմաններում ծավալված հերոսական դիմադրության արդյունքում Հայաստանի անկախությունը հռչակվել էր այդ երկրամասի մեջ մտնող Արևելյան Հայաստանում, որը՝ իբրև Հայաստանի Հանրապետություն, 1920 թ. հունվարին դե ֆակտո ճանաչվել էր նաև դաշնակիցների կողմից: Սևրի պայմանագրով արձանագրվում էր Հայաստանի Հանրապետության դե յուրե ճանաչումը ոչ միայն Առաջին աշխարհամարտում հաղթած դաշնակից երկրների, այլև պարտված Օսմանյան կայսրության կողմից: Բայց դե յուրե ճանաչվում էին արդեն ոչ թե սոսկ Անդրկովկասի հայկական գավառները, այլ Արևելյան ու Արևմտյան Հայաստանները միավորող

Միացյալ Հայաստանը: Անշուշտ, սրանով Արևելյան ու Արևմտյան Հայաստանների ոչ բոլոր երկրամասերն էին ներառվում Հայաստանի Հանրապետության մեջ, բայց վերջինիս ընկալումը որպես Միացյալ Հայաստան ձեռք էր բերում ամուր իրավական հիմք՝ ձևավորելով նրա տարածքային ամբողջականությունը:

Պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես ազատ և անկախ պետություն, ինչն արդեն արել էին պատերազմում հաղթանակած դաշնակից պետությունները[3]: Հոդվածի վերջին ձևակերպմամբ փաստորեն արձանագրվում էր, որ, պատերազմում պարտված թուրքական պետությունից բացի, Հայաստանի անկախ պետականությունն արդեն իսկ ճանաչվել է Սևրի պայմանագիրը ստորագրող հաղթանակած տասներկու պետությունների կողմից:

89-րդ հոդվածով Թուրքիան և Հայաստանը, ինչպես և մյուս պայմանավորվող բարձր կողմերը համաձայնում էին ԱՄՆ-ին թողնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը որոշելու հարցը և ընդունել նրա կայացրած որոշումը, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնք նա կարող էր սահմանել ինչպես Հայաստանի համար դեպի ծով ելք ապահովելու, այնպես էլ հիշյալ սահմանագծին հարող թուրքական բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ[4]: Հատկանշական է, որ, Հայաստանի համար դեպի Սև ծով ելք ապահովելուց բացի, տվյալ հոդվածով նախատեսվում էր նաև Հայաստանին փոխանցվելիք՝ Արևմտյան Հայաստանի տարածքներին հարող թուրքական իշխանության տակ մնացած տարածքների ապառազմականացումը: Պայմանագրի տեքստում տվյալ դրույթի ներառումն առավել քան կարևոր էր, քանի որ Թուրքիայում քեմալական շարժման ակտիվացումն ուղղակի սպառնալիք էր հայկական պետության գոյության համար:

Ստորագրվում է Սևրի պայմանագիրը

Պայմանագրի 90-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանվում էր, որ պայմանագրի՝ Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների չափին և բնույթին վերաբերող դրույթները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների նկատմամբ, կգործադրվեն նաև Հայաստանին փոխանցվող տարածքների նկատմամբ՝ վկայակոչելով պայմանագրի VIII մասի՝ Օսմանյան կայսրության նախկին պարտքի մարման ժամանակացույցին և մեխանիզմներին վերաբերող 241-244-րդ հոդվածները[5]: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի 1/3-ի փոխանցումը Հայաստանի Հանրապետությանն արդեն իսկ վճռված հարց համարելով, պայմանագիրը ստորագրող հաղթանակած պետությունները այդ տարածքների առումով Օսմանյան կայսրության նախկին պարտավորությունների կատարումը, ինչպես նաև իրավունքներին առնչվող հարցերը փոխանցում էին Հայաստանի Հանրապետությանը:

Պայմանագրի 91-րդ հոդվածի համաձայն՝ Արևմտյան Հայաստանի նշված նահանգների տարածքների որևէ մաս Հայաստանին փոխանցելու որոշման ընդունումից հետո՝ եռամյա ժամկետում, պետք է ձևավորվեր Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծը տեղում անցկացնող սահմանային հանձնաժողով[6]: Սակայն քանի որ Սևրի պայմանագիրը հետագայում ուժի մեջ չմտավ, ուստի նման հանձնաժողով չձևավորվեց, և սահմանի գծանշման աշխատանքներ այդպես էլ չկատարվեցին:

Փաստաթղթի 93-րդ հոդվածով էլ Հայաստանը պարտավորվում էր պաշտպանել հիմնական ազգաբնակչությունից ռասայով, լեզվով և կրոնով տարբերվող բնակիչների շահերը, ինչը նախատեսվում էր ամրագրել նաև Հայաստանի և գլխավոր տերությունների միջև կնքվելիք պայմանագրերում[7]: Այդ հոդվածով Հայաստանի վրա պարտավորություն էր դրվում առաջին հերթին ապահովելու Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգների և Տրապիզոնի նահանգի՝ իրեն միացվելիք տարածքներում բնակվող մահմեդական բնակչության՝ թուրքերի, քրդերի, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից Բալկաններից ու Հյուսիսային Կովկասից այդ տարածքներում վերաբնակեցված մուսուլման ժողովուրդների անվտանգությունը: Քաջատեղյակ լինելով, որ պատերազմի տարիներին այդ տարածքներում բնակվող մահմեդականներն ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի զանգվածային բնաջնջման գործում, դաշնակից տերությունները սույն հոդվածով Հայաստանի իշխանությունների վրա պարտավորություն էին դնում կանխելու և բացառելու նրանց նկատմամբ վերապրողների և զոհերի ժառանգների կողմից վրեժխնդրության հնարավոր

դրսևորումները:

Պայմանագրի 92-րդ հոդվածի համաձայն՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանների հարցը պետք է որոշվեր շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանց չհաջողվեր համաձայնության գալ, ապա այդ հարցը պետք է լուծեին գլխավոր դաշնակից տերությունները, որոնք պետք է հոգ տանեին այդ երկրների միջև սահմանազատումը տեղում գծանշելու մասին[8]: Հաշվի առնելով, որ Ադրբեջանը հավակնություններ ուներ Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ, որոնք որակվում էին որպես վիճելի տարածքներ, իսկ Վրաստանը՝ Լոռիի, որը «չեզոք գոտու» կարգավիճակ էր ստացել, ակնհայտ է, որ շահագրգիռ կողմերին սահմանային հարցերում չէր հաջողվելու համաձայնության գալ, և այդ հարցի լուծումը նույնպես թողնվելու էր գլխավոր դաշնակից տերություններին:

Հայաստանի Հանրապետության համար դեպի Սև ծով ելք ապահովելու դրույթն ավելի էր հստակեցվում 352-րդ հոդվածով, որով նրան Տրապիզոնի նավահանգստով Սև ծով ազատ մուտք գործելու իրավունք էր տրվում: Ավելին՝ Ազգերի լիգայի որոշմամբ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ վարձակալության էր հանձնվելու մի տեղամաս, որի շահագործման պայմանները, ներառյալ վարձավճարի չափը, որոշելու էր Հայաստանի ու Թուրքիայի մեկական անդամներից և Ազգերի լիգայի կողմից նշանակված ներկայացուցչից բաղկացած խառը հանձնաժողովը[9]: Բացի այդ՝ 351-րդ հոդվածով Վրաստանի, Ադրբեջանի և Պարսկաստանի հետ մեկտեղ Հայաստանին դեպի Սև ծով ազատ մուտքի իրավունք էր տրվում նաև Բաթումի նավահանգստից[10]: Այսինքն՝ Հայաստանը Տրապիզոնի և Բաթումի երկու նավահանգիստներով ելք էր ստանում դեպի Սև ծով, իսկ պայմանագրի 349-րդ հոդվածով այդ նավահանգիստներից ազատ տարանցիկության իրավունք էր տրվում դեպի Էգեյան և Միջերկրական ծովեր[11]: Ակնհայտ է, որ սևծովյան երկու նավահանգիստներից օգտվելու և Միջերկրական ծով ազատ դուրս գալու իրավունքը լուրջ հնարավորություններ կստեղծեր Հայաստանի սոցիալտնտեսական ծանր դրությունը մեղմելու համար:

Սևրի պայմանագրի այս հոդվածների վերաբերյալ բավական ուշագրավ էին Նիկողայոս Ադոնցի՝ 1920 թ. նոյեմբերի 20-ին Լոնդոնում հրատարակված հոդվածում տեղ գտած դիտարկումներն ու մեկնաբանությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Նա դրական էր համարում, որ պայմանագրի 88-րդ հոդվածով փաստացի ճանաչվում էր Հայաստանի անկախությունը, 89-րդ հոդվածով հստակեցվում էին ապագա հայ-թուրքական սահմանի սահմանագծման շրջանակները, սակայն, ըստ պատմաբանի, գերադասելի կլիներ, որ հստակորեն մատնանշվեր, որ ամենից առաջ Թուրքիան պետք է ճանաչի խնդրո առարկա հայկական վիլայեթների զիջումը[12]:

Անշուշտ, Ադոնցը չէր կարող չիմանալ, որ Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ճանաչել ապագա հայ-թուրքական սահմանը և հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ դրա որևէ մասը Հայաստանին փոխանցելու որոշման օրից հրաժարվելու էր հանձնված տարածքների նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից[13]: Ուրեմն պատմաբանը, ըստ էության, նկատի ուներ այն, որ Սևրի պայմանագրի տեքստում չկային Արևմտյան Հայաստանի նահանգների տարածքները Հայաստանի Հանրապետությանն անարգել փոխանցելու երաշխիքներին վերաբերող դրույթներ: Ադոնցը փաստորեն մտահոգություն էր արտահայտում, որ պայմանագրում հստակեցված չէ, թե հաղթանակած տերություններն ինչ միջոցների են պատրաստ դիմելու, եթե համաշխարհային պատերազմում պարտություն կրած թուրքական կողմը չկատարեր իր ստանձնած պարտավորությունները կամ փորձեր խոչընդոտել այդ դրույթների կենսագործումը: Պատմաբանի այս մտահոգություններն ամենևին էլ անհիմն չէին, քանի որ Թուրքիայում իշխանությունն իր ձեռքը վերցրած ազգայնական շարժման առաջնորդ Մուստաֆա Քեմալն արդեն իսկ հայտարարում էր, որ չի ճանաչում սուլթանական կառավարության ստորագրած Սևրի պայմանագիրն ու դրանով թուրքական պետության ստանձնած պարտավորությունները:

Մեծ տերությունները թերևս նման երաշխիք էին համարում այն, որ դեռ 1920 թ. ապրիլի 26-ին Սան Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը հայ-թուրքական սահմանի գծման հարցում իրավարար դառնալու՝ ԱՄՆ նախագահին ուղղված առաջարկը զուգորդել էր ԱՄՆ-ի՝ կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկին: Զույգ առաջարկների տրամաբանությունն այն էր, որ այն պետությունը, որի նախագահը կստանձներ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշումը, պետք է ապահովեր Հայաստանի (ներառյալ միացված տարածքները) անվտանգությունը, ինչը ենթադրում էր տվյալ երկրի կողմից միացյալ տարածքներով Հայաստանի մանդատի ստանձնում: Այսպիսով՝ Սան Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը խնդիրը փորձում էր փոխանցել ԱՄՆ-ին, սակայն տվյալ առաջարկը հաղթանակած տերությունների կողմից արվում էր այն ժամանակ, երբ ԱՄՆ վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ արդեն որոշակի էր:

Դեռևս 1919 թ. աշնանը ԱՄՆ նախագահի հանձնարարությամբ գեներալ Հ. Հարբորդի առա-քելությունը, տեղում ուսումնասիրելով իրավիճակը և բանակցելով անգամ քեմալականների հետ, Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում եկել էր այն եզրակացության,

որ ԱՄՆ-ի համար միայն Հայաստանի մանդատը ստանձնելը չափազանց ծախսատար է, և տեսակետ էր արտահայտել, որ եթե ԱՄՆ-ն, այնուամենայնիվ, որոշի այդ տարածաշրջանում կառավարման մանդատ ստանձնել, ապա այն պետք է տարածվի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Թուրքիայի և Այսրկովկասի վրա[14]: Անշուշտ, դա տրամագծորեն հակասում էր եվրոպական տերությունների շահերին, որոնք չէին կարող թույլ տալ ԱՄՆ-ի այդչափ հզորացումը տարածաշրջանում, ուստի նման առաջարկ անելիս դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը թերևս պատկերացնում էր, որ, ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ն մերժելու է միայն Հայաստանի մանդատի ստանձնումը:

Եվ իսկապես, 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատը ձայների 52 «դեմ» և 23 «կողմ» հարաբերակցությամբ մերժեց Հայաստանի մանդատի ստանձնումը, որից հետո դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդը պարտավոր էր մտածել նոր երաշխիքների մասին, ինչը կարող էր դրսևորվել Սևրի պայմանագրում հատուկ երաշխիքային հոդվածի կամ հոդվածների ներառմամբ: Ոչինչ չէր խանգարում նրանց նման հոդված կամ դրույթներ նախատեսելու պայմանագրի տեքստում: Խնդիրը պարզապես այդ երկրների քաղաքական կամքն էր, ինչը նրանք, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներից ելնելով, չցանկացան դրսևորել: Այս հանգամանքն էլ ավելի էր կարևորվում, եթե հաշվի առնենք եվրոպական դիվանագիտության ավանդական դարձած խարդավանքներն ու Թուրքիայում ստեղծված նոր իրավիճակը, երբ փաստացի իշխանությունն անցել էր քեմալականների ձեռքը, որոնք հրաժարվում էին ճանաչել Թուրքիայի օրինական իշխանության ստորագրած Սևրի պայմանագիրը և հատկապես տարածքային զիջումները:

Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր են Սևրի պայմանագրի 125-րդ և 142-րդ հոդվածները:

Պայմանագրի 125-րդ հոդվածով կայսրությունից անջատված տարածքներում հաստատված ոչ թուրք բնակչությանը պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ տարվա ընթացքում, ազատ իրավունք էր տրվում իր ազգային պատկանելությանը համապատասխան պետության քաղաքացիություն ընդունելու[15]: Այս հոդվածով փաստորեն հաստատվում էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնից ակնկալվող իրավարար վճռով Օսմանյան կայսրությունից անջատվելիք Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգներում դեռևս ողջ մնացած, ինչպես նաև կայսրությունից անջատված արաբական երկրներում ապաստանած նախկին օսմանահպատակ հայերի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելու իրավունքը:

Ուշագրավ է, որ պայմանագրի 142-րդ հոդվածով 1914

Հայաստանի սահմանը ըստ Սևրի պայմանագրի

թ. նոյեմբերի 1-ից, այսինքն՝ Օսմանյան կայսրության՝ Առաջին աշխարհամարտի մեջ մտնելու պահից, այդ երկրում հաստատված վարչակարգը ահաբեկչական էր որակվում: Երիտթուրքերի վարչակարգին տրված այս քաղաքական գնահատականից ելնելով՝ նույն հոդվածում նշվում էր, որ հիշյալ ամսաթվից հետո կայսրությունում քրիստոնյաների դավանափոխությունը բռնության հետևանք էր, ուստի դրանից առաջ քրիստոնյա եղածներին իրավունք էր տրվում ազատ վերադառնալու իրենց կրոնին[16]: Այս կետով փաստորեն արձանագրվում էր պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների՝ կայսրության ոչ մահմեդական բնակչությանը, այդ թվում՝ հայերին, ոչ միայն ցեղասպանության ենթարկելու, այլև բռնի իսլամացնելու քաղաքականությունը՝ ընդգծելով իրենց հավատքին ազատ վերադառնալու բռնի իսլամացված հայերի, հույների և ասորիների իրավունքը:

Նույն հոդվածով դատապարտվում էին պատերազմի ընթացքում կայսրության բնակչության նկատմամբ գործադրած վայրագությունները, և օսմանյան կառավարության վրա պարտավորություն էր դրվում որոնելու և ազատ արձակելու 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկալված և ազատազրկված ամեն ռասայի և կրոնի անձանց[17]: Ակնհայտ է, որ այս դեպքում նույնպես խոսքը թուրքական իշխանությունների կողմից զանգվածային բնաջնջման և բռնագաղթի ենթարկված կայսրության ոչ մահմեդական, ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի մասին է: Ինչպես հայտնի է, ցեղասպանության ընթացքում առևանգվել էին տասնյակ հազարավոր հայ աղջիկներ

ու կանայք, որոնք հարճի կարգավիճակում պահվում և սեռական բռնությունների էին ենթարկվում ինչպես մահմեդականների տներում, այնպես էլ հարեմներում: Բացի այդ՝ տասնյակ հազարավոր որբացած հայ մանուկներ պահվում էին թուրքական պետական որբանոցներում և դաստիարակվում որպես թուրք, իսկ նրանց մի մասն էլ ստրուկի կարգավիճակում պահվում և շահագործվում էր թուրքական կամ քրդական ընտանիքներում: Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածի տվյալ դրույթով, փաստորեն, հնարավորություն էր ընձեռվում գերեվարված հայ կանանց, աղջիկներին ու որբերին փրկելու անխուսափելի ուծացումից և ազատ արձակելու: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված ժողովրդագրական հսկայական կորուստներն ինչ-որ չափով մեղմելու առումով պատերազմում պարտված հանցավոր թուրքական պետության հետ խաղաղության պայմանագրում այս դրույթի ամրագրումը առավել քան կարևոր էր:

Միանգամայն բնական է, որ նման կարևոր և պատասխանատու գործը չէր կարող վստահվել այդ ամենի համար պատասխանատու թուրքական իշխանություններին, ուստի նախատեսվում էր Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծել խառը հանձնաժողով, որը տուժածների, նրանց ընտանիքների անդամների և մերձավորների բողոքների հիման վրա հետաքննություն էր իրականացնելու՝ նշված խմբերի անձանց հայտնաբերելու և ազատ արձակելու նպատակով: Իր հերթին օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ամեն կերպ օժանդակել այդ հանձնաժողովի գործունեությանը, ապահովել նրա որոշումների կատարումը, երաշխավորել տուժածների իրավունքների վերականգնումը և նրանց անվտանգությունը[18]: Պայմանագրի 142-րդ հոդվածում այս դրույթի ներառումը վկայում է այն մասին, որ հաղթանակած տերությունները հիմնավոր կասկածներ ունեին առ այն, որ թուրքական իշխանությունները կարող էին փորձել արհեստական խոչընդոտներ ստեղծել տվյալ գործընթացի համար, այդ պատճառով էլ թուրքական կողմի վրա նման պարտավորություններ էին դրվում:

Ջանգվածային բնաջնջման ու բռնագաղթի ենթարկված օսմանահպատակ ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ հոդվածներից բացի՝ Սևրի պայմանագրում տեղ են գտել նաև վերջիններիս ունեցվածքի բռնազավթումը դատապարտող և նրանց հասցված նյութական վնասների դիմաց հատուցում նախատեսող հոդվածներ:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը օսմանյան կառավարությանը ոչ միայն պարտավորեցնում է ուժը կորցրած ճանաչել իր կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» 1915 թ. ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները, որոնցով «օրինականացվել» էր ցեղասպանության ենթարկված արևմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլև արգելում էր նման օրենքների ընդունումն ապագայում[19]: Այս հոդվածը չափազանց կարևոր էր ցեղասպանության զոհ դարձած հայերի իրավունքների վերականգնման տեսանկյունից: Դրանում սահմանվում էին նաև կոնկրետ մեխանիզմներ, որոնցով վերականգնվելու էր արևմտահայության սեփականության իրավունքը իր ունեցվածքի նկատմամբ:

Հիշյալ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում նպաստել կայսրության այլազգի այն քաղաքացիների վերադարձին իրենց բնակավայրերը, որոնք աքսորվել կամ 1914 թ. հունվարի 1-ից հետո գաղթել էին գազանությունների ենթարկվելու վախի պատճառով[20]: Տվյալ դեպքում խոսքը Թալեաթ փաշայի նախաձեռնությամբ 1915 թ. մայիսի 30-ին երիտթուրքական կառավարության ընդունած «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով «օրինականացված» բռնագաղթի ենթարկված և դեռևս հրաշքով ողջ մնացած հայերի չնչին հատվածին իրենց բնակավայրերը վերադարձնելու մասին էր: Ավաղ, նրանց մեծ մասը արդեն իսկ ոչնչացվել էր «մահվան քարավաններում»՝ գաղթի ճանապարհներին կամ էլ Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում:

Դրանից բացի՝ նույն հոդվածով թուրքական կառավարությունն ընդունում էր, որ կայսրության հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ լիներ, որքան հնարավոր է շուտ պետք է վերադարձվեր օրինական տերերին: Ընդ որում, վերադարձվող գույքը պետք է ազատված լիներ պարտքերից, որոնցով այն կարող էր ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից, և վերադարձվելու էր առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու[21]: Այս պնդումն ուղղակիորեն բխում էր 144-րդ հոդվածի առաջին իսկ պարբերությամբ «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքը չեղյալ հայտարարելու դրույթից՝ անօրինական համարելով նաև այդ օրենքից ածանցվող «Լքյալ գույքի հանձնաժողովների» որոշումներով ու կեղծ աճուրդներով օրինական սեփականատերերին, տվյալ դեպքում՝ հայերին, իրենց անշարժ գույքից զրկելու բոլոր գործողությունները: Այսպիսով,՝ հայերի գույքին ցեղասպանության և ապօրինությունների հետևանքով տիրացած թուրքերը, քրդերը կամ մահմեդական վերաբնակիչները՝ մուհաջիրները, այդ գույքի օրինական սեփականատերեր չէին ճանաչվում, հետևաբար նրանց որևէ հատուցում չտրամադրելու որոշումը միանգամայն իրավաչափ էր:

Ոչ թուրք բնակչության և առաջին հերթին հայերի սեփականության իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց բացի՝ 144-րդ հոդվածով նախատեսվում էին նաև տվյալ գործընթացի

վերահսկման մեխանիզմները: Օսմանյան կառավարությունը համաձայնում էր, որ Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ հանձնաժողովներ՝ թուրքական կառավարության և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների ու Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականությանը վերաբերող հարցերն ու վեճերը քննելու և լուծելու համար: Այդ հանձնաժողովներն օժտվում էին լայն լիազորություններով՝ իրավասու լինելով որոշումներ կայացնելու՝

ա) գույքի վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ կատարելու առնչությամբ,

բ) վայրագությունների կամ տեղահանությունների մեղավորներին մեկուսացնելու և այդ անձանց գույքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում,

գ) 1914 թ. հունվարի 1-ից հետո տուժած համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող գույքը և ամեն կարգի սեփականությունը վերադարձնելու հարցերում,

դ) 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառքի կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերը չեղյալ հայտարարելու հարցերի առնչությամբ:

Հատկանշական է, որ այն դեպքերում, երբ հանձնաժողովը չեղյալ կհամարեր գույքի նկատմամբ նոր տերերի իրավունքները, վերջիններիս փոխհատուցում տրամադրելու պարտականությունը դրվում էր թուրքական կառավարության վրա, և դա չպետք է առիթ լիներայդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումը ուշացնելու համար[22]: Հայերի անշարժ և շարժական գույքին ցեղասպանության և զանգվածային ունեզրկման հետևանքով ապօրինաբար տիրացած մահմեդականներին փոխհատուցելու պարտավորությունը թուրքական կառավարության վրա դնելու դրույթն առավել քան օրինաչափ էր, քանզի այդ բոլոր ապօրինությունների պատասխանատուն հենց թուրքական պետությունն էր՝ իր վարած հանցավոր քաղաքականությամբ:

Հայերի բռնազավթված գույքի վերադարձի գործընթացում թուրքական կողմի հնարավոր հակազդեցությունները կանխելու նպատակով նույն հոդվածում ամրագրված էր, որ օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են, և դրանց չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված որևէ որոշում[23]:

Այսպիսով՝ ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական կորուստների վերականգնման և դրանց հետևանքների հաղթահարման առումով Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում առաջ էին քաշվում բավականին իրատեսական միջոցներ և մեխանիզմներ, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը և լիարժեքորեն կարող են դրվել Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման գործընթացի հիմքում[24]: Միայն որպես ճշտում թերևս կարելի է հավելել այն, որ գույքային իրավունքների վերականգնման հարցերով զբաղվող միջնորդ հանձնաժողովի նախագահ արդեն պետք է նշանակվի ոչ թե Ազգերի լիգայի խորհրդի, այլ այդ կառույցի ժառանգորդ հանդիսացող ՄԱԿ-ի համապատասխան մարմնի՝ Անվտանգության խորհրդի կողմից առաջադրված անձը:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածը լրացնում էին 285-րդ և 288-րդ հոդվածները, որոնցով նախատեսվում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն «ipso facto» (լատ.՝ «փաստի ուժով») ձեռք բերած նախկին թուրքա-հպատակների՝ Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է նրանց վերադարձվեին իրենց ներկա վիճակով[25]: Սա նշանակում էր, որ թուրքական իշխանությունների կողմից հայերին այդ երկրի քաղաքացիությունից զրկելը կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը չէր կարող իրավական հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից կամ գույքային իրավունքներից զրկելու համար:

Առաջին աշխարհամարտի ընթացքում հանցագործություններ կատարած պետական պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցներ նախատեսող հոդվածների ամրագրումը ոչ միայն Սևրի, այլ նաև դրան նախորդած Վերսալի, Սեն-Ժերմենի, Տրիանոնի, Նեյի պայմանագրերում պայմանավորված էր Փարիզի կոնֆերանսում դեռ 1919 թ. հունվարի 25-ից կազմավորված Պատերազմ սանձազերծելու պատասխանատվության և պատիժների հանձնաժողովի գործունեությամբ: Հանձնաժողովը կազմված էր տարբեր երկրներ ներկայացնող 15 անդամներից, որոնց թվում կային նաև իրավաբան միջազգայնագետներ: Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոլաս Պոլիտիսի նախաձեռնությամբ Տասսիինգի հանձնաժողովը 1919 թ. մարտի 5-ին ընդունեց իր առաջին զեկույցը, որով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հանցագործություններից առանձնացվեցին ոչ միայն Հաագայի կոնվենցիան խախտող «պատերազմական հանցագործությունները», այլև մասնավորապես Օսմանյան կայսրությունում «մարդկության դեմ կատարված հանցագործությունները»՝ ոչ թուրք խմբին պատկանող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը[26]: Տասսիինգի հանձնաժողովի այս զեկույցը փաստորեն հիմնված էր ոչ միայն Հաագայի 1899 թ. և 1907 թ. կոնվենցիաների նախաբաններում ամրագրված «Մարտենսի վերապահման», այլև Անտանտի տերությունների կողմից ընդունված 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրի վրա, որում նրանք Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային բնաջնջումն անվանում էին «հանցագործություն մարդկության և

քաղաքակրթության դեմ»[27]:

Հայաստանի Հանրապետության և ազգային պատվիրակությունները Հունաստանի ներկայացուցիչ Պոլիտիսի միջոցով 1919 թ. մարտի 14-ին Տասնհինգի հանձնաժողովին ներկայացրին մի հուշագիր, որում մասնավորապես ասվում էր. «….հանցագործությունը քաղաքական բնույթ ուներ, ծրագրված է եղել քաղաքական կազմակերպության կողմից, որը ստացել էր օսմանյան խորհրդարանի պատգամավորների ավելի քան երկու երրորդի ձայնը: Այն կազմակերպվել է կառավարության կողմից, ղեկավարվել պետական, զինվորական պաշտոնյաների և տեղական իշխանությունների ու ազդեցիկ գործիչների կողմից և իրագործվել է ժանդարմերիայի, զինվորների ու խաժամուժի միջոցով: Հետևաբար մենք լիովին իրավունք ունենք հանցագործության իրական մեղավորներ համարելու այն անձանց, որոնք, սկսած 1915 թ. Ապրիլից, զբաղեցնում էին վերը նշված պաշտոնները»[28]:

Հայկական հուշագրում հիշատակվում էր նաև Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը՝ այդպիսով հիշեցնելով «մարդկության դեմ հանցագործություն» կատարողներին պատժելու այդ երկրների ստանձնած պարտավորությունը: Փաստաթղթում հայերի զանգվածային կոտորածների մեջ մեղավորները դասակարգվում էին չորս խմբերի՝ կոտորածները ծրագրողներ, կազմակերպիչներ կամ հրաման տվողներ, կոտորածների իրականացումը ղեկավարողներ և անմիջական կատարողներ: Մատնանշվում էին նաև առաջին խմբերի պատասխանատուների անունները՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Շաքիր, և պահանջվում էր դատական գործ հարուցել նրանց դեմ, ընդ որում՝ ոչ թե թուրքական դատարաններում, ինչպես դա փորձում էին անել թուրքական նոր իշխանությունները, այլ դաշնակից կառավարությունների կողմից հիմնված միջազգային դատական ատյաններում[29]:

Վուդրո Վիլսոն

1919 թ. մարտի 29-ի իր եզրափակիչ զեկուցագրում Տասնհինգի հանձնաժողովը, հաշվի առնելով մի շարք պատվիրակությունների, այդ թվում՝ նաև հայկական պատվիրակության հուշագրերը, որոնցով «մարդկության օրենքների» դեմ կատարված ծանր հանցագործությունների մասին բազում փաստեր ու ապացույցներ էին ներկայացվում, եկավ այն եզրակացության, որ Քառյակ դաշինքի գլխավոր տերությունները իրենց դաշնակից Թուրքիայի և Բուլղարիայի հետ «պատերազմը վարել են բարբարոսական և հակաօրինական միջոցներով՝ խախտելով պատերազմ վարելու օրենքներն ու սովորույթները և մարդկության տարրական օրենքները»[30]: Այս որոշումից ելնելով՝ առաջարկվում էր ստեղծել տարբեր երկրների ներկայացուցիչներից բաղկացած միջազգային տրիբունալ, որը պետք է իրավասություն ունենար քննելու պատերազմ վարելու օրենքների և սովորույթների, ինչպես նաև մարդկության օրենքների խախտման գործերը՝ պատասխանատվության ենթարկելով նման խախտումներ կատարած պետությունների նախկին ղեկավարներին[31]:

Միանգամայն բնական է, որ Փարիզի խաղաղության վեհաժողովի շրջանակներում գործող Տասնհինգի հանձնաժողովի եզրափակիչ զեկույցի դրույթները պետք է իրենց արտահայտությունը գտնեին հաղթանակած տերությունների և պարտվող երկրների միջև ստորագրված խաղաղության պայմանագրերում, մասնավորապես՝ Վերսալի պայմանագրի 227-րդ և Սևրի պայմանագրի 226-րդ, 228-րդ և 230-րդ հոդվածներում:

Սևրի պայմանագրի 226-րդ հոդվածով օսմանյան կառավարությունը ճանաչում էր դաշնակից պետությունների ազատությունը՝ դատական գործ հարուցելու իրենց ռազմական դատարանների առջև պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող արարքներ գործած անձանց դեմ: Օրենքներով նախատեսված պատիժներ պետք է կիրառվեին մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ անկախ բոլոր դատավարություններից կամ դատական գործերից, որոնք հարուցված էին Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատական ատյանների կողմից[32]: Սա նշանակում էր, որ դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում դատելու պա-

տերազմական հանցագործներին՝ անկախ այն բանից՝ Թուրքիան կամ նրա դաշնակիցներն իրենց դատարաններում կդատեին նրանց, թե ոչ: Այս հոդվածի տրամաբանությունը թերևս բխում էր հենց երիտթուրք պարագլուխների դատավարությունից, որոնցից գլխավոր պատասխանատուներին հաջողվեց խուսափել թուրքական «արդարադատությունից»:

Այնուհետև 226-րդ հոդվածում խոսվում էր պատերազմական հանցագործներին հանձնելու մասին. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հանձնել դաշնակից տերություններին կամ նրանցից որևէ մեկին, որը կդիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, որոնք կմեղադրվեն պատերազմական սովորույթներին և օրենքներին հակասող որևէ արարք գործելու մեջ, կմատնանշվեն անվանաբար, թե ըստ աստիճանի, կատարած պարտականության կամ զբաղեցրած պաշտոնի, որոնք շնորհվել են այդ անձանց օսմանյան իշխանությունների կողմից»[33]: Այս հոդվածի դրույթները կատարելու գործում, սակայն, դաշնակից տերությունները հետևողական չգտնվեցին:

228-րդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու նպատակով դատաքննությունն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու և պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար[34]: Սևրի պայմանագիրն այսպիսով իրավական հիմք էր ստեղծում օսմանյան պետության՝ իր հպատակ այլ քաղաքացիների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար: Սակայն այն շարադրվել էր այն ժամանակ, երբ 1918-1919 թթ. անգլիացիները ձախողվեցին օսմանյան կառավարությունից այնպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու հարցում, որոնք նրանց հնարավորություն կտային դատական գործեր հարուցելու ենթադրյալ մարդասպանների դեմ[35]: Սևրի պայմանագրի 226-րդ և 228-րդ հոդվածները բխում էին Հաագայի 1899 թ. և 1907 թ. խմբագրված «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթներից և կրկնում էին պատերազմական հանցագործներին պատժելու մասին Վերսալի և այլ պայմանագրերում տեղ գտած հոդվածները:

Ստեղծված իրավիճակում թուրքական նոր իշխանությունները սկսեցին արագացնել թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրք պարագլուխների դատավարության ընթացքը՝ մտավախություն ունենալով, որ հետագայում կարող էր ստեղծվել ինչպես պատերազմական հանցագործություններ, այնպես էլ մարդկության դեմ հանցագործություններ կատարած նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին քրեական պատասխանատվության ենթարկող միջազգային տրիբունալ, ինչի մասին պատերազմի ավարտից հետո շատ էր խոսվում: Միջազգային տրիբունալում ակնհայտ կդառնար



Հայաստանը ըստ Սևրի պայմանագրի

հայերի զանգվածային բնաջնջման կազմակերպման գործում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների դերակատարումը՝ թուրքական պետության համար դրանից բխող ծանր հետևանքներով:

Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը՝ քրեական պատասխանատվության կանչելու այն անձանց, որոնք մեղադրվում էին պատերազմի օրենքների և սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, ինչպես նաև պարտավորվում էր դաշնակից տերություններին հանձնել նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, որոնք պատերազմի ընթացքում հանցագործություններ էին կատարել այն տարածքներում, որոնք 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էին Օսմանյան կայսրության մի մասը[36]:

Հատկանշական է, որ 1948 թ. մայիսի 28-ի զեկույցում ՄԱԿ-ի Պատերազմական հանցագործությունների հանձնաժողովն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել այնպես, որ դրանով հաղթանակած տերությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածելու Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեին մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար մեղավորները, այսինքն՝ այն հանցագործությունների, որոնք թուրքական տարածքում կատարվում էին օսմանահպատակ հայերի ու հույների նկատմամբ: Հանձնաժողովի կարծիքով՝ հենց դա է նախադեպ ծառայել Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների համապատասխանաբար 6c և 5c հոդվածների համար, այն է՝ մարդկության դեմ կատարված հանցագործություններ[37]:

Ի տարբերություն 226-րդ և 228-րդ հոդվածների՝ 230-րդ հոդվածը վերաբերում էր ոչ թե պատերազմական հանցագործություններին, այլ 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համա-

տեղ հայտարարության հետևանքն էր, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին: Այս դրույթը կարևոր էր նաև այն իմաստով, որ թուրքական նոր իշխանությունները չէին կարող խուսափել Միջագետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց արտահանձնելուց այն հիմնավորմամբ, թե հանցագործությունները կատարվել են այն տարածքներում, որոնք այլևս իրենց չեն պատկանում:

Նույն հոդվածով դաշնակից տերություններն իրենց իրավունք էին վերապահում նշելու այն դատարանը, որը պետք է դատեր մեղադրվող անձանց, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշվում էր միջազգային հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ հատուկ միջազգային քրեական դատարանի ստեղծման հնարավորության մասին: Այն դեպքում, եթե Ազգերի լիգան ստեղծեր նշված հանցագործությունները դատապարտող իրավասու դատարան, դաշնակից տերությունները մեղադրյալներին պետք է փոխանցեին այդ դատարանին, իսկ թուրքական կառավարությունը պարտավորվ1ում էր ճանաչել այդ դատարանը[38]:

Նշված դրույթները հետագայում իրենց արտացոլումը գտան ՄԱԿ-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի հոդվածներում՝ կապված այս ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձանց հանձնելու և միջազգային տրիբունալ ստեղծելու գաղափարների հետ: Այս նկատառումներից պարզորոշ երևում էր, որ միջազգային սովորութային իրավունքի նորմերն աստիճանաբար արտացոլվում էին նաև միջազգային պայմանագրերում և, միջազգային սովորութային նորմեր լինելուց բացի, վերածվում էին նաև միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի:

Թեև Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ ինչպես Օսմանյան կայսրության ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով, այն միանգամայն օրինական փաստաթուղթ է: Չնայած որ տվյալ պայմանագրի ստորագրման պահին փաստացի իշխանությունը հիմնականում քեմալականների ձեռքում էր, այդուհանդերձ, 1920 թ. հուլիսի 22-ին երկրի օրինական իշխանությունը՝ ի դեմս Կ. Պոլսում գործող սուլթանի խորհրդի, լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և պաշտոնական պատվիրակությանը լիազորեց ստորագրելու Սևրի պայմանագիրը[39]: Ինչպես հայտնի է, անգամ չվավերացված պայմանագիրն այն ստորագրած պետություններին ամբողջությամբ չի ազատում պարտավորություններից, մանավանդ որ պայմանագիրը ստորագրելիս թուրքական պաշտոնական պատվիրակությունը չի գերազանցել իր իրավասությունները: 1969 թ. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակամիջոցում որոշակի պարտավորություն է դնում՝ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա[40]:

Նշենք, որ անգամ չվավերացված վիճակում Սևրի պայմանագրի դրույթներն արդեն իսկ մասնակիորեն գործադրվել են՝ արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով և արդեն իսկ կյանքի էր կոչվել հաջորդ՝ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ[41]:

Սևրի պայմանագիրը փոխված կամ փոխարինված չէ Լոզանի պայմանագրով, քանի որ երկու պայմանագրերին ծնունդ տվող կողմերը նույնական չեն, և, բացի այդ, դրանց առարկաները նույնպես տարբեր են: Այդուհանդերձ, չվավերացված և իրավական ուժի մեջ չմտած, բայց մասնակիորեն գործադրված Սևրի պայմանագրով նախատեսված՝ թուրքական պետությունից արաբական հողերի անջատմանը վերաբերող, ինչպես նաև նախկին օսմանահպատակ ոչ մահմեդականների, այդ թվում՝ հայերի գույքային իրավունքների վերականգնումն ամրագրող դրույթները փաստացի վերահաստատվեցին 1923 թ. հուլիսի 24-ին Թուրքիայի կողմից ստորագրված, վավերացված և ներկայումս գործող Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով: Այսպես՝ Լոզանի պայմանագրի 33-րդ հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում էր Սևրի պայմանագրի 285-րդ և 288-րդ հոդվածների այն դրույթները, համաձայն որոնց՝ այլ քաղաքացիություն ընդունած նախկին թուրքահպատակները պահպանելու էին անշարժ գույքի նկատմամբ իրենց այն իրավունքները, որոնք ունեին մինչև քաղաքացիության փոփոխությունը, իսկ շարժական գույքն առանց արտահանման կամ ներմուծման տուրքերի կարող էին տանել իրենց հետ[42]: Ի լրումն այդ հոդվածի՝ նույն պայմանագրի 65-րդ և 66-րդ հոդվածներով սահմանվում էր, որ պետք է վերականգնվեին ոչ միայն Թուրքիայի, այլև նրանից անջատված տարածքներում մնացած բոլոր թուրքահպատակների իրավունքներն իրենց գույքի նկատմամբ[43]:

Ամփոփելով նշենք, որ, հայրենիքի մի մասի նկատմամբ տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքները վերականգնող՝ Հայաստանին անմիջականորեն վերաբերող հոդվածներից բացի, Սևրի պայմանագրում տեղ են գտել ոչ պակաս կարևոր հոդվածներ, որոնցով կարգավորվում էին օսմանահպատակ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի խախտված իրավունքների վերականգնման ու հասցված նյութական վնասների հատուցման հարցերը,

ինչպես նաև քրեական պատասխանատվություն էր նախատեսվում թուրք բարձրաստիճան ու տեղական պաշտոնյաների նկատմամբ ոչ միայն պատերազմական հանցագործություններ կատարելու, այլև մարդկության դեմ կատարած հանցագործությունների, առաջին հերթին՝ հայերի զանգվածային բնաջնջումը ծրագրելու և իրագործելու համար: Նշված հոդվածների պատշաճ վերլուծությունը հնարավորություն կտա հստակեցնելու հանցավոր թուրքական պետության՝ Սևրի պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև քննարկելու տվյալ փաստաթղթում առաջարկվող՝ ցեղասպանություն հանցագործության զոհ դարձած տեղաբնիկ ժողովուրդների և առաջին հերթին հայերի խախտված իրավունքները և նյութական վնասները վերականգնելու մեխանիզմների գործադրման հնարավորություններն ու հեռանկարները: ■

Հղումներ

1. Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 87:
2. Տես Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:
3. Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917) (այսուհետ՝ Հայաստանը …. փաստաթղթերում), խմբ.՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 676:
4. Տես նույն տեղում:
5. Տես Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf (մուտք՝ 1.08.2022):
6. Տես Հայաստանը …. փաստաթղթերում, էջ 677:
7. Տես նույն տեղում:
8. Տես նույն տեղում:
9. Տես Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927, էջ 112:
10. Տես նույն տեղում:
11. Տես նույն տեղում:
12. Տես Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 16:
13. Տես Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, էջ 31:
14. Տես Барсегов Ю., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Ер., 1995, էջ 10-11:
15. Տես Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, էջ 38:
16. Տես նույն տեղում, էջ 41:
17. Տես նույն տեղում:
18. Տես նույն տեղում, էջ 42:
19. Տես նույն տեղում:
20. Տես նույն տեղում:
21. Տես նույն տեղում:
22. Տես նույն տեղում, էջ 43:
23. Տես նույն տեղում:
24. Տես Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2014, էջ 104:
25. Տես Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, էջ 66:
26. Տես Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. ред., автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, էջ 258: Ականավոր իրավաբան-միջազգայնագետ Ֆ. Մարտենսի առաջարկով սկզբում Հաագայի 1899 թ. «Պատե-րազմի վարման օրենքների և սովորույթների մասին», իսկ այնուհետև 1907 թ. «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների նախաբաններում ամրագրվեց, որ «մինչև պատերազմի վերաբերյալ օրենքների ավելի լիակատար օրենսգրքի հրապարակումը պայմանավորվող բարձր կողմերը տեղին են համարում հաստատել, որ իրենց կողմից ընդունված կանոնակարգերով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմող կողմերը շարունակում են մնալ միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանության և գործողության ներքո, որոնք բխում են քաղաքակիրթ ազգերի միջև հաստատված սովորույթներից, մարդկայնության օրենքներից և հասարակական գիտակ-ցության պահանջներից» (Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001, с. 19):
27. Տես Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства, 1878-1917, серия III, т. 7, ч. 2, М.-Л., 1931-1940, էջ 252:
28. Gotikian G., La question arménienne, de la vielle de la grande guerre au traité de Lausanne d'après les archives françaises, Thèse dactylographiée, t. 3, Saint-Etienne, 1997, p. 74.
29. Տես նույն տեղում, էջ 75:
30. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, М., 2002, с. 700.
31. Տես նույն տեղում, էջ 700-701:
32. Տես Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, էջ 184:
33. Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920.
34. Տես նույն տեղում:
35. Տես Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., «Նահապետ», 2003, էջ 10-11:
36. Տես Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920:
37. Տես Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, М., 2003, էջ 651:
38. Տես Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена "комиссии примирения" Гюндуз Актана), М., «Готика», 2002, էջ 32-33:
39. Տես Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, էջ 184:
40. Տես Международное право в документах. Сост. сборника Н. Т. Блатова, М., 1982, էջ 75:
41. Տես Թորիկեան Շ., նշվ. աշխ., էջ 132:
42. Տես Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php (1.08.2022):
43. Տես նույն տեղում:

Խաշմանը՝ արժանաւոր կերպար մը եւս

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Բախտաւոր պէտք է զգանք, որ հայրենի մտաւորական մը ստանձնած է մոռացութենէ փրկել մեր ազգի երախտաւոր կարգ մը դէմքերը, որոնք համայնավար բռնապետութեան այդ ամբողջ տասնամեակներուն անտեսուած ու անգոսնուած էին իրենց ազգային-գաղափարական հակումներուն կամ այլ պատճառներով:

Ահա անգամ մը ևս այդ վեհ նպատակին կը ծառայէ «Յակոբ Խաշմանեան ՄՈՌԱՑՈՒԱԾ ԷՋԵՐ նամակներ» 544 էջ բովանդակող պատկառելի հատորը,– այս տիտղոսը և բոլոր մէջբերումները կը ներկայացնեմ դասական ուղղագրութեամբ, եթէ այդ չէ պարագան, մինչ Խաշմանեանի նամակները արդէն իսկ ներառուած են հարազատ ուղղագրութեամբ,– որ լոյս տեսաւ Երևան, «Հայաստան» հրատարակչութենէն 2022-ին, տպագրութեամբ «Եգեա» տպագրատան՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկի («ինստիտուտի») գիտական խորհուրդի որոշմամբ:

Հատորը կազմած ու ծանօթագրած է բանասիրական գիտութիւններու դոկտոր Մարգարիտա Մամիկոնի Խաչատրեանը, իսկ գրքի խղճմիտ խմբագրումը կատարած է Գէորգ Գրիգորի Եազըճեանը:

Խաչատրեան ծնած է Երևան, 1955-ին, աւարտած է Հայաստանի պետական մանկավարժական հիմնարկը (այժմ՝ համալսարանը), 1992-ին պաշպանած է թեկնածուականը՝ նուիրուած Դերենիկ Դեմիրճեանի երգիծանքին, իսկ 2002-ին դոկտորականը՝ «Համաստեղի ստեղծագործութիւնը» բնանիւթով: Աւագ գիտաշխատող է վերոյիշեալ գրականութեան հիմնարկին ու կը դասաւանդէ դպրոցներուն ու ուսումնական բարձրագոյն հաստատութիւններուն մէջ: Ան 1993-ին արժանացած է «ՀՀ Տարուայ ուսուցիչ» ճանաչումին:

Շատ բնական էր, որ երեք անբաժան ընկերներէն երկուքին՝ Արամ Հայկազի ու Համաստեղի նուիրուած իր բազմաթիւ աշխատասիրութիւններէն ետք,– որոնց կ'անդրադառնամ քիչ անդին,– Խաչատրեան ձեռնարկէր Խաշմանեանի վերաբերեալ երկի մը պատրաստութեան, մանաւանդ որ, ոչ միայն հայրենի ընթերցողին ծանօթ չէ այս վերջինը, այլ ընդհանրապէս ներկայ հայ ընթերցողին, մանաւանդ իր գաղափարակիցներուն:

Նախ քան հատորը ներկայացնելս ըսեմ, որ ինծի համար յատուկ նշանակութիւն կը զգենու ան, քանի որ ուշ պատանեկութեանս ու վաղ երիտասարդութեանս տարիներուն չէի փախցներ «Յուսաբեր»-ի մէջ «Հայրենիք»-էն արտատպուած իր յօդուածները, որոնք վստահաբար իրենց կարևոր դերը ունեցած են իմ ալ կազմաւորման մէջ: Նաև բախտաւոր եմ, որ գէթ մէկ անգամ իրեն հանդիպելու առիթը ունեցած եմ, երբ 1966-ի նոյեմբերին, իմ այստեղ հաստատուելէս

հազիւ ամիս մը անց, Մոնթրէալ եկան ինք, Հայկազն ու Համաստեղը՝ այս վերջինին յոբելեանի նշումին առթիւ՝ «Համազգային»-ի կազմակերպութեամբ:

Խաշմանեանի ուսումնասիրութեան ձեռնարկելով Մարգարիտա Խաչատրեան հսկայածաւալ նիւթ է հաւաքած, սակայն դժբախտաբար, գէթ առ այժմ, միայն իր նամակներն է, որ կը հրատարակէ, թուելով նաև այն բոլորը՝ յօդուածներ, դասախօսութիւններ ու աշխատասիրութիւններ և այլն, որոնք կրնան այլ հատորներով հրապարակուիլ: Անշուշտ, ոչ միայն ցանկալի, այլ անհրաժեշտ է, որ այդ գալիք հատորները հրատարակելու կարելիութիւնները ստեղծուին:

Կ'արժէ կարդալ Մարգարիտայի հետևեալ խոստովանութիւնը. «Խոստովանեմ՝ այս երեք Հայ մարդկանց արխիւային նիւթերը կարդում եմ ... Անցեալ հազարամեակից սկսած ու դեռ չեմ ձանձրացել, աւելին, ամեն անգամ ԳԱԹ[1], Ազգային գրադարան կամ Ազգային արխիւ եմ գնում նոր բան գտնելու ակնկալիքով ու, որպէս կանոն, չեմ յուսախաբւում... Պատճառը մեծատառով գրուող ՍԷՐն է, որ այս մարդիկ տածում էին Հայրենիքի, նրա մասնիկ Հայաստանի Հանրապետութեան (անկախ մակդիրից), Հայ Մշակոյթի ու միմեանց հանդէպ... Այդ ՍԻՐՈՅ հրաշագործ դաշտում հեշտանում են երկարատև փնտրտուքներդ, յաղթահարելի են դառնում նիւթական դժվարութիւնները, իսկ արդիւնքը նրանց թողած ժառանգութեան կենդանի վկայութիւններն են՝ հրատարակածս գրքերը, որոնք մարդու պէս ճակատագիր ունեն ու ապրում են իրենց տրամաբանութեամբ»:

Մարգարիտա Խաչատրեան ցարդ լոյս ընծայած է հետևեալ հատորները Համաստեղի ու Արամ Հայկազի նուիրուած.

«Համաստեղ. Նամականի», Երևան, 2003

«Համաստեղի ստեղծագործութիւնը», Երևան, 2004

«Համաստեղ. Մատենագիտական ցանկեր», Երևան, 2004

«Համաստեղ. Մոռացուած էջեր», Ա.-Դ. հատորներ, Երևան, 2005-2007

«Համաստեղ. Աղօթարան», Երևան, 2017
«Արամ Հայկազ. Նամակներ», Երևան, 2009
«Արամ Հայկազ. Մոռացուած էջեր», Ա.-Է. հատորներ, Երևան, 2010-2016
«Արամ Հայկազ. Ապրող ծառ մը» (ժողովածու), Երևան, 2012

Ներկայ հատորին մէջ ընդգրկուած են.
ա) Յակոբ Խաշմանեանի և Համաստեղի նամակագրութիւնը (իւրաքանչիւրինը տրուած է առանձնաբար, մինչ աւելի դիւրութեամբ կարելի պիտի ըլլար հետևիլ եթէ թուականի կարգով շարուած ըլլային, ինչպէս է պարագան միւս նամակագրութիւններուն).
բ) Ամենայն հայոց կաթողիկոս (1955-1994) Վազգէն Առաջինի (Լևոն-Կարապետ Պալճեան, 1908-1994) և Յակոբ Խաշմանեանի նամակագրութիւնը.
գ) Յակոբ Խաշմանեանի նամակագրութիւնը ԱՕԿՍ-ի² նախագահ Բերսաբէ Գրիգորեանի և Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեանի հետ.
դ) Յակոբ Խաշմանեանի նամակները Համազգային հայ կրթական և մշակութային միութեան պատասխանատուներուն:

Այստեղ նշեմ, որ թէև զանազան ազգային հարցեր կ՚արծարծուին այդ նամակներուն մէջ, բայց այդ հարցերը մէջտեղ կու գան ու կարծիքներու փոխանակման, նոյնիսկ հակադրման նիւթ կը դառնան ընդհանրապէս առնչուելով «Համաստեղի ծննդեան 70 և գրական գործունէութեան 50-ամեայ յոբելեանին, այդ առիթով կազմուած յոբելեանական կենտրոնական յանձնաժողովի աշխատանքներին», յանձնաժողով, որուն ոգին իսկ էր Խաշմանեան, թէև համեստօրէն ստանձնելով անոր քարտուղարի պաշտօնը, նախագահութիւնը ձգելով Արամ Հայկազին: Ու ես գրադարանիս մէջ ուրախութեամբ վերագտայ այդ առթիւ իրենց (մասնաւորաբար ընկ. Խաշմանի անվհատ հետապնդումներով) լոյս տեսած աղուոր գիրքը, որուն ծննդոցի ամբողջ ոդիսականը կը կարդանք այս հատորին մէջ:

Հատորն ունի Խաչատրեանի ստորագրութեամբ ծաւալուն ներածական մը («Արդարների յիշատակը մնալու է գոհաբանութեամբ... – Առաջաբանի փոխարէն», 47 էջ, ներառեալ 20 էջ ծանօթագրութիւններու բաժին մը), ուր ոչ միայն կը ներկայացնէ գրքին բովանդակութիւնը, այլև հետաքրքրական շատ մանրամասնութիւններ կու տայ անոր պատրաստութեան, ինչպէս նաև ընդհանրապէս Համաստեղի ու Արամ Հայկազի առնչութեամբ իր կատարած աշխատանքին, դժուարութիւններուն, ստացած աջակցութիւններուն և այլ խնդիրներու մասին:

Իսկ հատորի վերջին մասը կը հանդիսանայ «Ծանօթագրութիւններ» բաժինը, որ 165 էջերու վրայ մանրամասն կը ներկայացնէ նամակներուն մէջ յիշուած անունները, դէպքերը և այլն: Անոր ալ կը

Մարգարիտա Խաչատրեան

յաջորդէ անձնանուններու երկար ցանկ մը, նշելով բոլոր էջերը, ուր ընթերցողը կը հանդիպի անոնց: Եթէ այս ցանկն ալ դասական ուղղագրութեամբ ըլլար, թերևս նաև զոյգ ուղղագրութիւններով՝ այնպէս ինչպէս կ՚երևին նամակներուն մէջ, կրնար աւելի օգտակար ըլլալ: Զոյգ ծանօթագրութիւններն ալ,– որոնք ի դէպ կրնային մասամբ միաւորուիլ, մասամբ ալ ուղղակի յառաջաբանին մաս կազմել,– իրենց հարուստ տեղեկութիւններուն մէջ ունին մի քանի ճշգրտելի կէտեր, որոնք կրնան սրբագրուիլ յաջորդ տպագրութեամբ կամ յաջորդ հատորներով:

Գաղափար մը տալու համար Յակոբ Խաշմանեանի ոճին ու մօտեցումներուն մասին՝ ահա ստորև քանի մը հատուած իր զանազան նամակներէն:

Համաստեղին ուղղած 26 յուլիս 1965 թուակիր իր նամակին մէջ («Մոռացուած էջեր», էջ 68) անդրադառնալով խորհրդայիններուն կողմէ ՀՅԴ կամ որոշ դաշնակցական ընկերներու հանդէպ ցուցաբերուած քիչ մը մեղմացած վերաբերումին, Խաշմանեան կը գրէր. «Եթէ նոյնիսկ այսօրուան փաստերուն հանդէպ տարակոյսներ ու վախեր ունինք, երէկի տգեղութիւններն ու ոճիրները մարդոց երեսին տալով չէ՛, որ նպաստած կ՚ըլլանք նոր ու առողջ այն ջանքերուն, որ այսօր յանդգնօրէն թէ խարխափումներով կատարել կը փորձեն այնքան շատեր: Յետադարձ շարժումներու կարելիութենէն վախնալը տեսականօրէն ու բնականօրէն հասկնալի է մեզ համար: Հայրենիքին մէջ այդ քայլերը առնողներուն համար ևս կրնան գոյութիւն ունենալ նման վախեր՝ մեզ համար տեսական, բայց ներսիններուն համար գործնական ու իրական վախեր, իրենց իսկ սպառնացող վախեր»: Այս մասին պիտի կարդանք այլուր ևս, բայց Խաշմանեան մինչև վերջ համոզուած պիտի մնայ, որ յանուն ազգային միասնութեան անհրաժեշտ է դարձնել հին էջերը: Գիտենք նաև, որ այդ տարիներու մեղմացումը երկար պիտի չտևէր...

23 յունուար 1966 թուակիր նամակին մէջ (անդ,



էջ 89) Խաշմանեան դիտել կու տայ՝ «Շեշտեմ՝ Համաստեղի իրական գնահատողները պզտիկցուցած պիտի ըլլան Համաստեղը, եթէ չընեն իրենց կարելին, որ անոր յոբելեանը տօնուի հայաշխարհի ամէն մեծ կեդրոն, ամէն փոքր անկիւն՝ ատոր համար աշխատելով եւ տեղին վրայ, եւ հեռուներէն, պաշտօնապէս թէ անձնապէս»: Ինք անդուլ պիտի աշխատի այդ ուղղութեամբ, ջանալով ապահովել նաև ոչ-դաշնակցական կազմակերպութիւններու, գրողներու և մտաւորականներու մասնակցութիւնը, որոշ չափով յաջողելով, սակայն ոչ իր ուզած չափերով՝ «հասկնալի» պատճառներով... Իսկ իր 6 փետրուար 1966 -ի նամակին մէջ ան կ՚աւելցնէ. «Ուրիշներ կրնան թերանալ այս հասկացողութեան մէջ, անոր կիրառումին մէջ, բայց ոչ մենք: Կարելի է ներել անոնց շատ թերացումներուն, բայց մենք պէտք չէ ներենք մեր թերացումներուն, մերիններու թերացումներուն»:

Հայրենիքի հետ յարաբերութիւններու բարելաւման իր ցանկութիւններն ու ճիգերը բազմիցս կ՚երևին Վազգէն Ա. կաթողիկոսի հետ փոխանակած իր նամակներուն մէջ յատկապէս գոհացնելով այս վերջինի խնդրանքները՝ «Հայրենիք» ամսագրի հաւաքածոներ Էջմիածնի հայթայթելու առնչութեամբ,– տեսնել Վեհափառին 4 մայիս թուակիր նամակը իրեն ուղղուած (անդ, էջ 276) և յաջորդող նամակները: Նոյն դրական տրամադրութիւնները կը ցուցաբերէ Խաշմանեան օգնելու համար Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեանին՝ ամերիկաբնակ հայրենակիցի մը անձնական գրադարանի 4000 գիրքերը Հայաստան փոխադրելու խնդրանքին ընդառաջելով:

Սակայն Խաշմանեան չի վարանիր նաև իր շատ զուսպ ու կշռուած յանդիմանութիւնը կատարելու պ. Համազասպեանին, երբ այս վերջինը կ՚առարկէ, թէ Ռուբէն Դարբինեանը՝ «Հայրենիք»-ներու վաստակաւոր խմբագիրն ու Համաստեղի գրականութիւնը այդ ճամբով ալ հանրութեան սեփականութիւնը դարձուցած ալեհեր մեծանուն ազգային գործիչը, պատուոյ նախագահն է նշանակուած յոբելենական յանձնախումբին: Այս հատորին ամենէն ծանրակշիռ նիւթերէն մէկը կը հանդիսանայ Խաշմանեանի 25 յունիս 1966 թուակիր երկարաշունչ նամակը (անդ, էջ 319-324) Համազասպեանին՝ որպէս նմուշ բարեկիրթ, բայց գաղափարական մարդու կեցուածքի: Միայն սա քանի մը տողերը բաւարար են ցոյց տալու համար նամակագրին մեծութիւնը. «Ճիշդ է, իսկապէս մեծ եղաւ անակնկալը: Եւ սակայն ես լսեցի զայն առանց յայտնի յուզումի, մանաւանդ՝ առանց դառնութեան, բայց անպայման զուսպ ու խոր տխրութեամբ և խոցուած սրտով: Բանիմաց ու յարգելի հայաստանեան իմ բարեկամը ինչպէ՞ս կրցեր էր վիրաւորել ուրիշ քանիներու կարգին նոյնքան ալ իրեն սիրելի, բացառապէս պարկեշտ հայ գրագէտ մը՝ Արամ Հայկազը և անոնց հետ նաև զիս: Անտարակոյս ան վիրաւորեր էր առանց այդ դիտաւորութեան: Բայց նաև առանց մեզ հասկնալու»:

Կրնամ անվարան ըսել, որ պարզապէս իր նամակներուն իսկ մէջէն մեր առջև կը կանգնի իրապէս եզակի կերպար մը՝ ամբողջական հայ ու ամբողջական դաշնակցական, մարդասէր, ընկերասէր, ընտանեսէր, աշխատասէր, պարկեշտ, համեստ, ընդմիշտ զոհաբերուող ու նուիրեալ, Համաստեղի իսկ բառերով՝ «մետաքսի պէս մեր ազնիւ մտաւորականներէն» մէկը: Խաչատրեանի բնորոշմամբ՝ գլխագիր այդ ՀԱՅերը՝ Խաշմանեանն ու իր երկու ընկերները միաւորողն էին «կարօտը, հայութեան փրկուած զանգուածներին անմնացորդ ծառայելու մղումը, ծայրայեղ համեստութիւնը և ամենօրեայ հետաքրքրութիւնը հայության Հայրենիքի մի փոքր հատուածում՝ Հայաստանի Հանրապետութիւնում (նրանց կենդանութեան ժամանակ՝ Խորհրդային Հայաստան) ծուարած հայութեան հոգսերի, ձեռքբերումների նկատմամբ»: Կազմողը ապա կ՚աւելցնէ. «Յակոբ Խաշմանեանին միշտ հետաքրքրել են օտար ափերում ծնուած հայ մարդկանց հայեցի դաստիարակութեան, Մայր Հայաստանի հետ մշակութային կապի, Սփիւռք-Հայաստան յարաբերությունների հարցերը»:

Մեր անյետաձգելի պարտքն է ճանչնալ այս մեծ հայերը, օրինակ առնել իրենցմէ ու հետևիլ իրենց՝ մեր ազգին ու մշակոյթին ծառայութեան ի խնդիր: ■

1. ԳԱԹ – Գրականութեան և արուեստի Ե. Չարենցի անուան թանգարան
2. ԱՕԿՍ – Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան և մշակութային կապի հայկական ընկերութիւն (ռուսերէն անուանման յապաւումէն)

Այո՛, մինչև այժմ հայտնի փաստերից կարելի է վճռական կերպով եզրակացնել, թե հայ բոլշևիկները չկարողացան լուծել Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող կենսական հարցերը: Պատմության առջև նրանք հանցավոր են: Ապագա սերունդները չեն ների նրանց, որ Հայաստանի պատմության բախտորոշ օրերին, երբ իրագործվում էին հայության դարավոր իղձերը, նրանք դավաճանեցին ազգային իդեալներին և միացան օտար ուժերին՝ դավադրաբար խորտակելու համար երկարատև պայքարի և անհաշիվ զոհերի գնով ձեռք բերված ազատությունը:

Գո՞ւմ են բոլշևիկները իրենց գործից: Հանգի՞ստ է նրանց խիղճը: Չեմ կարծում:

Հայաստանն ու հայ ժողովրդին այրելուց հետո, համաշխարհային հեղափոխության հրդեհում, հայ բոլշևիկները իրենք էլ այրվեցին նույն այդ հրդեհից:

Ի՞նչ եղավ նրանց ճակատագիրը: Հիշենք միայն մի քանի անուններ մեծերից.

Հայաստանի մի տասնյակ տարիների բռնատեր Աղասի Խանջյան՝ գնդակահարված:

Գաղափարական հին բոլշևիկ, Հայաստանի վարչապետ Սահակ Տեր-Գաբրիելյան՝ սպանված բանտում:

Սարգիս Սրապիոնյան-Լուկաշին ամենից տաղանդավորը և գաղափարականը հայ բոլշևիկների մեջ, Հայաստանի վարչապետ՝ սպանված բանտում:

Ալեքսանդր Բեկզադյան – Հայաստանի Հեղկոմի արտաքին գործավարը և Խորհրդ. Միության դեսպան՝ անհետացած:

Արամայիս Երզնկյան – Երևանի քաղաքագլուխ և նախարար՝ գնդակահարված:

Աբրահամ Գուլոյան – Հայաստանի վարչապետ՝ գնդակահարված:

Հայաստանի Կարմիր բանակի պետ Հ. Ադոյան՝ գնդակահարված:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյան՝ գնդակահարված:

Հայաստանի ներկայացուցիչ Պոլսում, գրագետ Պողոս Մակինցյան՝ գնդակահարված:

«Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի խմբագիր Եղիա Չուբար՝ գնդակահարված:

Նշանավոր «մենք ամենայն հայոց կառավարություն չենք» խոսքի հեղինակ, նախարար Եսայան՝ գնդակահարված:

ՀՕԿ-ի նախագահ Գրիգոր Վարդանյան՝ գնդակահարված:

Հայաստանի ներկայացուցիչ Փարիզում Սիմ. Փիրումյան՝ գնդակահարված:

Ավիս Նուրիջանյան՝ Հայաստանի Հեղկոմի չար ոգին՝ գնդակահարված:

Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ա. Անանյան՝ անհետ կորած:

Հայտնի բոլշևիկ Հայկ Ազատյան՝ անհետ կորած:

Լուսավորության գործավար Ա. Եղիազարյան՝ սպանված:

Հայկոմկուսի քարտուղար Հ. Կոստանյան՝ հաշվեհարդարի ենթարկված:

Հին բոլշևիկ Ստ. Բաղդասարյան՝ գնդակահարված:

Լենինի զինակից, գաղափարական հին բոլշևիկ Արշավիր Մելիքյան՝ աքսորված Հայաստանից, անհայտ:

Անհետացած Ս. Մարտիկյան, Բ. Ներսիսյան, Գ. Հանեսօղլյան: Չեկայի պետեր Մելիք Հովսեփյան, Ամատունի, Մուղդուսի և բազում ուրիշներ:

Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Երրորդ հրատարակություն, Երևան, 2022, էջ 231-234:

Պայթյուն «Սուրմալու» տոնավաճառում
14.08 2022

ԴՐՕՇԱԿ